



II 2
33

2 n 02



Ա. Ռ. Զ Ե Ւ Ն

ՃԱՐՏԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՐԲ

57

Ա.

Ա. Ռ Զ Ե Ա Ն

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ե Ա Լ

Ի Հ Ե Կ Պ Ո Ւ Ա Ր Դ Վ Հ Ա Ի Բ Մ Ի Ք

Ի Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ո Ւ Ի Տ է Ն

6
6
3



Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի ՏՊԱԳՐՈՒՆ Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն

1879

37668reich

Յ Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն

Որ մինչև ցայժմ հուետորականին կանոնաց կացին աւանդիչք յազդիս, քանզի կէտ առաջի եղեալ էր նոցա 'ի ծայր արուեստին ածել շհամբակս, ոչ էր մարթ նոցա 'ի սուղ մատենի վարժապետել:

Այլ քանզի ստուարութիւն գրոց խրտուցանէ զեազում՝ որք ոչ 'ի գագաթն արուեստին վերանալ ցանկան, ոչ անօգուտ թուի զկարւորագոյնս 'ի կանոնաց նորա համառօտել, որով կիսոց գիւրեւսցին վերելք բարձու տաճարին, նախ 'ի գիրս յայս կրթեալ, և աստի ապա 'ի վարժու բարձրագոյն գասուն անցեալ. Խոկ այլոց, որք առ ստորհտովըն եւելթ գեղերել կամին, մարթ իցէ գէջ աղօտաբար զգեղեցկութիւնս նորա նկատել: Նմին իրի որպէս զբերականութեանն, նոյն փոյթ եղեւ մեղ և զգուռն ճարտասամաւթեան կազմել յիւրամտանելի ամենեցուն Առձեռն մատենիւս, առ հեշտի համբակաց և վարժապետաց:

Վասն որյ մի ոք մեղադրեսցէ զմեղ իրը օտարին վաստակոց յափշտակող, տհսանելով 'ի սմա-



(4184
41)

(21003-60)

1856

57- 2001

բազում ինչ յերկուց առաջնոց մերոց հռետու-
րաց ժողովեալ, քանզի մեզէն իսկ խօսովվա-
նիմք, զի գրեթէ զնոյն նոցին բանս հոգացաք
համառօտել, և զբերթողականին իսկ կանոնս 'ի
դաշղիական քերականէն 'ի կիր առեալ, որ
նախ առաջն զայնցնէ գրեաց: Զի ոչ ինչ ա-
մօթ համարիմք զշոգեկցորդ և զուսումնակից
եղբարցն մերոց և զվարժապետաց ճոխութիւնս
'ի կիր առնուլ, զմատենագրի անուան ոչ թեկն
ածելով:

Ազակէմք եւեթ զուսուցիչս մանկտւոյ, ընուլ
զթերին համառօտութեանս, և վերլուծանել
համբակաց զօրինակս ձեռց ածեալս այսր առ 'ի
նախնեաց, և տալ նոցա 'ի միտ առնուլ՝ թէ որ
պէս մարթէր զնոյն բանս պարզաբար առանց
ճարտասանական ձեռց ասել, և թէ յորում օ-
րինակացն իւրաքանչիւր իցեն գեղեցկութիւնք,
զրո ոչ կը մարթ առնել մեզ առանց ստուարա-
ցուցանելց զմատեան:

4859



Ընդհանուր գիտելիք զՃարտասանութենէ:

Հ. Ալինչ է ճարտասանութիւն.

— Արուեստ բարւոր խօսելոյ:

Հ. Քանի ինչ կարեւոր են առ բարւոր
խօսել.

— Կրեք. պարզութիւն, վայելչութիւն,
զօրութիւն:

Հ. Զիարդ յօրինի պարզութիւն 'ի խօսս:

— Պարտ է զանիական զազգային ըդ-
նախնի ընտիր մատենագրաց զբանս ըստ
բնիկ նշանակութեան, և զնոցին եղանակս
բանից 'ի կիր արկանել, և մի զեկամուտս,
զնորանարս և զանսովիրս:

Նմին իրի պարտ է ճարտարախօսի յա-
ճախել 'ի վերծանութիւն քաջաց մատենա-
գրաց, և ներկուու 'ի բնիկ բարբառն գոյ:

Հ. Ապա ուրեմն ոչ է մարթ ճարտարել

բառու արտաքսոյ այնոցիկ՝ որ առ մատենադիրս գտանին։

— Ամրթի իսկ է ըստ պատշաճի յօրինել ածանցականս և բարդել, այլ խնայելով և բազում զգուշութեամբ ըստ քերականական խիստ կանոնաց։

Հ. Եւ իցի՞ բատական առ ՚ի պարզութիւն երկիւղած նմանութիւն նախնեաց ՚ի բառս և յեղանակս բանից։

— Ամեննին ոչ, զի այդ նիւթական և եթ է պարզութիւն. այլ կարեարագոյն ևս խնդրի պարզութիւն իմաստից. վասն ուրոյ պարտ է ճարտարախօսին քաջ երկնել ՚ի մտի զիմաստս, և ապա ծնանել։ Զի եթէ որ խօսին՝ ոչ քաջ ըմբռնիցէ զիմաստս, անհնարին է թէ պարզ իմացուցէ զայն որում խօսին։

Ո. այս կարեոր է զգուշանալ և ՚ի կարի համառատութենէ ՚ի բացատրելի զիմաստս, և ՚ի հակառակէն այնորիկ յաւելորդ շատախօսութենէ։

Հ. Կարիցին օրինակաւ պարզաբանել ինձ զվարդապետութիւնդ.

— Բուզունդայ կամելով ասել և եթ վասն եսիսկոպոսին Դանիէլ, թէ յաւուրս ձմերացնոյ խորհէր գնալ ուրեք ընդ ձիւնախաղալ լերինս, այսպէս բազմաբանութեամբ անիմանալի առնէ զբանն. « Յաւուրս ձմերացնոյն յորժամ կուտեալ զիւեալ մեծութիւն բազմութեան թանձրութեան ձեռնց, կուտակեալ հիւսեալ

ձեանց ՚ի վերայ ձմերային լերանց, յայնպիսի յերանց վերայ, ընդ այնպիսի ժամանակի կամէր ուրեք երթալ ՚ի պէտս ճանապարհի»։

Հ. Զի՞նչ թերութիւն գտանես ՚ի բանիս. « Եւ հանգեան ընդ վարսագեղ ծառովն, որ շուք մեծ ՚ի պարտիզի անդ գործէր »։

— Մարթի բատիցն ընտիրս գոլ և զբնիկ նշանակութիւն իւրեանց պահել, և իմաստիցն յերկարանշխիւրոց ևս ծայրայեղ խոտորմանց հեռի կալ յաւելորդաբանութենէ և ՚ի կարի համառատութենէ, այլ երկումութեամբ միոյ ՚ի բարիցն կորուսանել զպարզութիւն. որպէս բառդ շոք աստանօր՝ զվայիշչութիւն և զովլանի անխատիր նշանակելով։

Մարթ է յաճախագոյն ես ՚ի յոռի շարագրութիւնէ բառից կորուսանել բամին ըզպարզութիւն. վասն որոյ պարտ է ճարտարախօսի յիշել միշտ զառ ՚ի նախնեացն աւանդեալ սահման քերականութեան, զի « Քերականութիւն է հմտութիւն, որք ՚ի քերթողաց և ՚ի շարագրաց իբրու բազում անգամ ասացելոց ». այսինքն է զի ոչ զամենացն եղանակս բանից նախնեաց օրէն է ՚ի կիր արկանել, այլ զյաճախագոյն առ ՚ի նոցանէ ՚ի կիր արկեալ։

Հ. Զիարդ վայելուչ և զօրաւոր յօրինին ճառոք.

— Ոչ է մարթ համառատու զպատախանի առնել հարցուածոյդ. զի դա հարկ առ

Նէ ինձ զամենայն աղքս աղքս հանդիսից
ճարտասանութեան առաջի առնել, և զիւ-
րաքանչիւր նոցա պատշաճեալ ձևս առ ՚ի
զարդ և զօրութիւն, և զբերթողականին
իսկ փոքր ՚ի շատէ տալ զկանոն։

ԴԱՅ Բ

Երեք աղքք ճարտասանութեան. — Յառաջաբա-
նութիւն. — Ուաջարկութիւն. — Բաժանումն։

Հ. Քանի աղք են ճարտասանութեան.

— Երբեակ. կացրդական, բազմոչա-
կան, ատենական։

Հ. Զինչ է կացրդականն։

— Պարսաւ կամ զովեստ զիրաց ինչ.
վասն որոյ կացրդականը են ներբողեան և
գամբանական ճառք, և որ ՚ի ծնունդս, ՚ի
հարսանիս, կամ որ ՚ի շնորհակալութիւն
և յուրախակցութիւն յօրինին։

Հ. Զինչ է բազմոչականն։

— Համազել զոք յօդտակարն և խորշե-
ցուցանել ՚ի վլաստակարէն. վասն որոյ
բազմոչականը են ամենայն խրատական
և յորդորական ճառք, և որովք ճարտա-
րախօսք երբեմն վարելին յատեանս տես-
չութեան իրաց աշխարհին։

Հ. Զինչ է ատենականն։

— Ամրաստանութեան կամ ջատագո-
վութեան ճառ, որպէս որ յատենի ՚ի լուր
դատաւորց ճառին։

Հ. Առ ի՞նչ զանազանութիւնս այս է
պիտանի.

— Առ ՚ի սահմանել զկէտ նպատակի
ճարտարախօսին. զի ՚ի կացրդականն և
՚ի բազմոչականն առաւել ջանալի է նմա
զկամնն և զմիրտ շարժել, իսկ յատենա-
կանն հաւաննեցուցանել զմիտս, և ըստ
այնմ պատշաճի զձևս ճարտասանականն ՚ի
կիր արկանել, և համեմատ առաջարկու-
թեան զօն ճառին յերկրել։

Հ. Իցեն ինչ որ այս ամենայն աղքի
աղքի ճառից անխտիր պատշաճիցին.

— Այս ամենայն իրօք. և այսոքիկ են
վեցեակ մասունք ճառին, որ են յառա-
ջաբանութիւն, առաջարկութիւն, պատ-
մութիւն, ցուցումն, յորդոր, և վերջաբա-
նութիւն։

Իբր ոչ եթէ այս ամենայն մասունք յա-
մենայն ճառս անհրաժեշտ կարևորք իցեն,
այլ ՚ի կարգաւոր ճառս այսոքիկ առաւե-
լագոյն մասամբ մոտանեն։

Հ. Զինչ է յառաջաբանութիւն.

— Պատրաստել զմիտս ունինզրաց ՚ի
լուր բովանդակ ճառին։

Հ. Զինչ կարեոր է յառաջաբանին.

— Նախ զի անզստին ՚ի բնէ ճառին ա-
ռեալ իցէ, և քաջ ընդ նմա կցորդեալ.
վասն որոյ խրատէ կիկերոն՝ խորհել նախ
զբովանդակութիւն ճառին, և ասկա յօրի-
նել զառաջաբանն։

Երկրորդ՝ առաւելագոյն զգուշութեան

ալէտք են 'ի յառաջաբանին առ 'ի քաջ քա-
ցատրութիւն իմաստից և 'ի բարւոք շարա-
դրութիւն . զի 'ի սկզբան անդ ունկնդրացն
միտք և լսելիք դեռ անխոնջք՝ դիւրաւ
ստգտանիցեն զթերութիւն : Դարձեալ և
'ի հակառակէն առաւել քան ամենայն ու-
րեք 'ի յառաջաբաննելն խուսելի է 'ի պա-
ճուճանաց . զի ինքնաղարդ պարզութիւն
կարեւոր հանգամանք են յառաջաբանու-
թեան :

Երրորդ՝ պարտ է յառաջաբանութեան
վինել հանգարտ և մեղմ, եթէ ոչ գէպք
ինչ անակնկալ պատճառս տացենյանկար-
ծական յառաջաբանութեան . այլ յայն-
ժամ պարտ է զընթացս բովանգակ ճառին
պատշաճել նմին, ասկա թէ ոչ նոււղեալ
անկանք բանն :

Չորրորդ՝ մի ինչ 'ի զօրաւոր փաստից
յիշատակեսցի 'ի յառաջաբանին . զի այն
ապա 'ի բնիկ տեղունչն ոչ ինչ աղեսցէ :

Հինգերորդ՝ պարտ է յառաջաբանին
համեմատել չափոյ երկայնութեան ճառին
և գեղեցկութեան . որպէս զի մի գուռն
քաղաքին գեղեցկագոյն քան դքաղաքն ի-
ցէ, կամ քաղաքին վտանգ առաջի կայցէ
փախչելց 'ի բաց, ըստ ծաղրական . Դիո-
գինեայ առակին :

Հ. Զինչ է առաջարկութիւն .

—Պարտ է ճարտասանին յաւարտ յա-
ռաջաբանութեանն առաջի առնել զպատ-
ճառս ճառին . և այն կոչի առաջարկու-
թիւն :

Եւ պարտ է առաջարկութեան գոլ բա-
ցայաց և ճիշգ, որովհետեւ իմացուած բո-
վանդակ ճառին յայն հաստատեալ է :

Եթէ պատճառք ճառին քաջածանօթք
իցեն, մարթ է նորածե իմն զառաջարկու-
թիւնն առնել առ 'ի զարթուցանել զմե-
լիս . զոր օրինակ Աէնիէրի 'ի ճառել զսա-
տուածութենէ Փրիստոսի, սցսպիսի յօրի-
նէ առաջարկութիւն .

«Եթէ Քրիստոս չէր աստուած, ամպա-
րբշտագոյն քան զամենայն մարդիկ գտա-
նէր» :

Օգնէ բազում ուրեք և բաժանումն 'ի
պարզութիւն առաջարկութեանն և ճա-
ռին :

Հ. Ո՞ր իցեն կանոնք բաժանման .

—Կախ՝ զի մի մին 'ի մասանց բովան-
դակեսցի 'ի միւսն, այլ իսկապէս զանա-
զանեսցին 'ի միւսեանց :

Երկրորդ՝ զի մասունքն 'ի միասին բո-
վանդակեսցեն զառաջարկութիւնն :

Երրորդ՝ զի մի բազմամասն իցէ բաժա-
նումն, այլ գուն ուրեք աւելի քան զերիս
մասունս :

Չորրորդ՝ զի մի արուեստակեալ իցէ
բաժանմումն, այլ 'ի բնէ առաջարկութեանն
յառաջ ածեալ :

Այս ամենայն պայմանք քաջ պահին 'ի
բաժանմանն զոր Մասիլիոն առնէ 'ի ճառն
չարչարանաց Փրկչին . զի զբնարանն «Ո-
մենայն ինչ կատարեալ է », բաժանէ

յերիս այսպէս. Քանզի կատարեցաւ արդարութիւն առ 'ի յԱստուծոյ, չարութիւն առ 'ի մարդկանէ, և սէր առ 'ի Քրիստոսէ:

ԴԱՍ Գ.

Պատմութիւն. — Յուցումն 'ի ներքին տեղեաց. — Սահման. — Թուումն մասանց և Ստուգաբանութիւն:

Հ. Զինչ է պատմութիւն, զոր երրորդ մասն ճառի ասացեր.

Պատմութիւն 'ի գատասացութիւնս առաւելապէս ունի զտեղի, և է մի 'ի կարերագոյն և 'ի գժուարին մասանց ճառին. զի պարտ է անդ ճարտասանին զամենայն ինչ ասել ճշմարտութեամբ, և մի ինչ յեղծումն իւրոյ գատին:

Պարտ է նմա անգստին արկանել գչեմունս ցուցակութեանց ճառին, պարզելով զհանգամանս նպաստամստոյցս իւր, և տկարացուցանելով զհակառակորդին:

Ի բացայստութիւն պատմութեան ընդ նախասացեալ պայմանս խնդրին և առաւելացոյն խնամք 'ի ճշգրտապատում առնել զանձինս, դժամանակ, զտեղի և զայլ կարեոր հանգամանս:

Պարտ է գարձեալ հաւանական յօրինել զպատմութիւնն, և համառօտ' առանց աւելրոդ հանգամանաց:

Ի վարդապետական ճառս զտեղի պատ-

մութեանն ունի բացատրութիւն իրացն, զորմէ ճառին են:

Հ. Զինչ է ցուցումն, զոր չորրորդ մասն ճառի ասացեր.

Հերքել ինչ կամ հաստատել փաստիք, Քանզի պարտ է ճարտասանին յետ 'ի ներքս ածելոյ զառաջարկութիւնն ցուցանել զայն, գասանելով փաստս զօրաւորս, և բարւոք կարգաւորելով զգտեալան:

Հ. Ռւստի խնդրելի են փաստք.

Տեղեաց, ուր փաստիցն գիւտք են, կէսք կոչին ներքինք և կէսք արտաքինք, ումանք հասարակք և այլք յատուկք:

Հ. Որ իցեն ներքինք.

Ներքին տեղիք են, որ 'ի բնէ առաջորկեալ իրացն տան ապացոյցս. որպիսիք են՝ սահման, թուումն մասանց, ստուգարանութիւն, Ճարդք, սեռ և տեսակ, պատճառ և գործք, նմանութիւն և անհմանութիւն, բազգատութիւն, հակագրութիւն, նախընթաց և հետեւորդ և յարակից հանգամանք:

Հ. Զինչ է սահման.

Սահմանն է բան բացայստիչ բնութեան իրին. որ բատ իմաստափրաց համառօտ կազմի բաղկացեալ 'ի սեռէ և 'ի տեսակէ. որպէս սահման մարդոյ կենդանի բանական:

Բայց ըստ ճարտասանից ոչ 'ի սեռէ և 'ի տեսակէ այլ 'ի գործոց և 'ի պատճառաց և յայլոց հանգամանաց կազմի ընդարձակացն, և կոչի ստորագրական սահման:

Այսպէս Ոսկեբերան ստորագրէ զար-
ծաթասէրն.

« Զիք և չիք ինչ անիմաստադոյն քան
զընչիցն ծառայ. թուի թէ իշխանացէ, և իշ-
խան ՚ի գլուխ ունի. թուի թէ տէր իցէ,
և ծառայութիւն հարկանէ. կապանս վա-
րակէ զանձամիք, և ուրախ է. գրգէ զգա-
զանն, և բերկրի. ՚ի գերութեան վա-
րեալ, ցնծայ և խայտայ. շուն կատաղի
տեսանէ՝ ՚ի վերայ դիմեալ ոգւոցն, և յան-
հոգս է. զոր պարտ էր խառանել և սո-
վամահ առնել, առատացեալ յանխնայ-
շանի առ կուրծսն կուտէ, զի ևս քան
զես ՚ի վերայ խաղացցէ և ահագինս լի-
նիցի »:

Հ. Զինչ է թուումն մասանց.

— Չե բանի՞ որով ճարտասանն զիւրա-
քանչիւր մասանց իրիք ասէ որ ինչ զրո-
լորէն է իմանալ: Որպէս Նարեկացւոյն գե-
ղեցիկ հատուածն, յորում զշոգւոյն նա-
ւակոծութիւն այլաբանաբար նկարագրէ:
« Ուստի նաւն ՚ի բաղվամանէ վայրենի ա-
լեացն խորտակեցաւ. թեոյն ձեռնար-
կութիւն քայլացացաւ. կայմ ամրարձ-
ման ՚ի կայից իւրօց խլեցաւ. առագաս-
տին թռչարան յանկարկատելի ծուէնս
պատառեցաւ. շինուածոյն շուք անզար-
գեցաւ, առասանք ձգողականաց խզե-
ցաւ, տեսարան գլխոյն զիտակի խոնար-
հեցաւ, ապաւանդակին պարան կտրե-
ցաւ, ապաւինութիւն խարսխին լուծաւ,

լուծք ստուարք ամոլիցն կցորդութեան
բաժանեցան, սամիք ուղղացն հետոց
գալարեցան, լաստ հիմանն հաստարա-
նի ընկղմեցաւ, զեկացն կառուցմունք
անդրէն սուզան, չուոցն յարմարութիւն
պակասեցան, ողնափայտին պատսպարան
խկոյն բեկաւ, կապարանք զստին հաս-
տուածոյ յօշուեցաւ, զողք ամիբովման
ծոցոյն կազմածոյ անսրգեցան, խելք ըըր-
թանցն եղերաց խախտեալ ոստեաւ, պաղ-
պաջունք բազմականացն անկեալ բար-
ձաւ, վանդակապատին վայելչութիւն յա-
տակեցաւ, զահաւորակին հանգստարան
շփոթեցաւ, մածմունք տախտակաչարք ՚ի
միաբանութեանց միմեանց անջտանեցան,
հեղյոյք պնդման բեկուացն քարշեցան,
արգասիք իրին յիշատակարան ողբոց ինձ
նմանեցաւ: Նաւուզիցն հանդէպ նաւին
դեղերեալ ողբոց, ձեռն ՚ի ծնօտի եղեալ
արտասուաց գետան իջուցանէ »:

Հ. Զինչ է ստուգաբանութիւն.

— Ստուգաբանութիւն է, ըստ ճարտա-
սոնից, ՚ի նշանակութենէ անուան ածել
զհաստատութիւն. զոր օրինակ՝ Պարտ է
իմաստասիրի սիրող գոլ իմսստութեան:

Ըստ այսից է և Արիգեայ ստուգաբա-
նութեամբ անուան առն իւրօց պարտաւելն
զնա. « Մի դիցէ տէր իմ զիրտ եւր ՚ի վե-
րայ առն ժանտի Նարազաց, զի ըստ ա-
նուան նորս և ինքն է. Նարազ անուն նո-
րա, և անզգամութիւնընդ նմա »:



Եւ Ոսկեբերան այսպէս սկարսաւէ ըղ-
խեղկատակութիւն.

«Եւ զի ուսանիցիս, միտ զիր. և անուն
իսկ խեղկատակութեանն յանդիմանիչ է
կատականացն. յայտ է թէ չէ առողջ և
կատակն. նախ ինքն իսկ 'ի յանձնէ կա-
տակի, զի հարկ լինի և զերեսն ծռել, և
զբերանն և զաշն այլայլել: Զի հարկ է
նմա այնուհետեւ և զիբերպարանն և զծաղր
և զգնացս փոփոխել, և հտպտել, և ամե-
նեցուն նմանել, և աղջի աղջի պարսա-
ւանս հնարել իմանալ. և հեռի են 'ի քրիս-
տոնէից գուսանական բանք»:

ԴԱՍ Գ

Լծորդք. - Սեռ և տեսակ. - Պատճառք և
գործք. - Նմանութիւն և անմանութիւն. -
Բաղդատութիւն:

Հ. Զինչ են լծորդք.

— Լծորդք են՝ որք անդատին 'ի նմին բա-
ռէ ածանցեալ' իբր թէ լծորդին ընդ ար-
մատոյն: Արդ որպէս 'ի ստուգաբանու-
թենէ անուան, այսպէս և 'ի լծորդ բառից
կամ յածանցականաց առնուն ճարտա-
սանք զհաստատութիւն. զոր օրինակ
«Մարդ եմ, և զմարդկայինս յինչն ոչ օ-
տար համարիմ»:

Ըստ այսմ և Ոսկեբերան ասէ.

«Եւ քանդի սրբութիւն արար զնա մեղաց

մերոց, կացցուք մնասցուք սուրբք, և մի
ինչ կալցուք ալլու յանձինս. այլ զգեղն
և զվացելչութիւնն զոր զգեցոյց մեղ՝ պա-
հեսցուք անարտա, զի ոչ ինչ գտանիցի
աղտ և խորշ կամ թէ այլ ինչ այնպիսի»:

Հ. Զինչ է սեռն և տեսակ.

— Սեռ կոչի բոլոր ինչ, որ պարունակէ
ընդ իւր և բազում մասունս այլատեսակս.
և տեսակ, որ պարունակէ ընդ իւրեւ բա-
զում անհատու, Արդ է ուրեք զի ճարտա-
սանն զհանգամնանս պատշաճեալս սեռին
կամ տեսակի հասարակաբար նկատեալ,
ապա զառաջարկութիւնն որ ընդ նորօք բո-
վանդակի՞ ի վերայ ածէ: Ըստ այսմ Եղի-
շէ վարդապետ առ 'ի ներողել զհրաշալի
արգամիս աստուածսիրութեան 'ի սուրբ
Վարդանանս, նախ զմիրոյն Արտուծոյ
հասարակաբար յօրինէ ներբող, և ապա
յառաջարկութիւն մատչի.

«Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն
մեծութիւն երկրաւոր, և այնպէս աներ-
կիւզս առնէ զմարդիկ' իբրեւ զանմարմին
զօրս հրեշտակաց. որպէս անդատին 'ի
սկզբանէ է տեսանել զբաղումն բազում
անդամ 'ի բազում տեղիս: Վարդիկ, որ
սիրովին Աստուծոյ իբրեւ զինու վառեալք
էին, ոչ ինչ խնայեցին զանդիտելով իբ-
րեւ զանարի, զոլով վատասիրտք, կամ
'ի մահ անձանց, կամ յափշտակութիւն
ընչից, կամ 'ի խողխողումն սիրելեաց,
կամ 'ի գերութիւն ընտանեաց, ելանել

՚ի հայրենի երկրէն և անկանել ՚ի ստըրկութիւն յօտարութեան։ Որպէս յայսմժամանակի տեսաք աչօք մերովք. զի ըդնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս Հայոց։ Քանդի իբրև ետես մեծն Վարդան» և այլն։

Հ. Ո՞րպէս ՚ի պատճառաց կամ՞ի գործոց մարթ իցէ առնուլ առաջցոյց։

— Բազում ուրեք ճարտասանն ՚ի հանգամանաց պատճառին զլաւութիւն կամ զյուութիւն գործյն առնու ցուցանել, և կամ զհակառակն։ Այսպէս Սարգիս փառապեա կուտակութեամբ եղեռնական գործոց ագահութեան պարսաւէ զախտն։ «Սակայն արմատ ամենայն չարեաց արձաթսիրութիւնն է ըստ առաքելոյն, և ագահութիւն. վասն զի չիք և չիք ինչ չարք, որ ոչ ՚ի սոցանէ ծնամնին. ատելութիւն մարդկան, խռովութիւն, և պատերազմ առ ազգակիցու, պոռնկութիւն, և գործութիւն և սպանութիւնք, և այլ ևս անթիւ վնասք՝ զորս ովլ որ կարէ թուել։ Զի եթէ զտէրն տիեզերաց և զարարիչն արտաքոց ՚ի վաճառ էած այս ախտ և ետ ըսպանանել, զի՞նչ այլ ինչ մեաց ՚ի չարեաց՝ զոր ոչ կարիցէ զործել։ Եւ եթէ զտուքեալն՝ դիբիստոսի ընտրութեանն արժանաւոր՝ այնպէս վաղվազակի գերի առեալ տարաւ, և զթիւն սպակասեցոյց, և յահաւորն զնա յանդգնեցոյց, ապա ովկ ոք կարէ կալ առաջի բուռն զօրութեան նորա»։

Դարձեալ և ՚ի զիրս իմաստութեան։ «Ընդ որոց թէ ընդ գեղն զուարձացեալք զնոսա աստուածս կարծիցեն, գիտաւցեն թէ որչափ ևս նոցա տէրն առաւել լաւ է. զի որ զեղեցկութեան արարչապետն է՝ նա հաստատեաց զնոսա։ Ապա թէ ընդ զօրութիւնս և ընդ աղեցութիւնս զարմանացեն, իմասցին ՚ի նոցանէ՝ որչափ ևս որ կազմեացն զնոսա առաւել զօրաւոր է»։

Հ. Մարթ իցէ և ՚ի նմանութենէ կամ յաննմանութենէ ցուցանել ինչ.

— Այս ամենեկն. բայց ՚ի յոզպ կրից զուն ուրեք վարի ձևս այս. և ոչ երեք օրէն է յանձնանօթ իրաց առնուլ նմանութիւն կամ աննմանութիւն։ Օրինակ իմն յՈսկեբերանէ վասն նմանութեան,

«Չտեսանես և զմարմնոց իսկ զաչս. յորժամ հանապաղ ընդ ծուխ գայցեն, արտօսր բերեն. եւ յորժամ՝ ՚ի խաղաղ օգս և ՚ի մարգս յազբիւրս և ՚ի դրախտս զբօնուցուն, առողջագոյնք և քաջատեսր. Նոյնպէս և մտացն ակն եթէ յեղատիւրս Հոգեռոր բանիցն ճարակիցի, սուրբ յստակ և քաջատես լինի. իսկ եթէ ընդ ծուխ ինչ աշխարհի իրացս գայցէ, բժարեր արտօսրալից լինիցի, և զազգի ազգի լավիւնս լայցէ և աստ և անդ»։

Ա. Ա օրինակ ՚ի Լամբրոնացւոյն. «Ոչ ՚ի այս արութիւն զինուորի՝ յիւր ապարանս թուր շողացուցանել, և զօդ

Հարկանել. այլ որ 'ի հանդիսի տեղին իշխանէ, և ընդդէմ ախոյեանին կայ: Նոյնպէս իմա, զի չէ ուղիղ մարտ հոգեռոր՝ որ 'ի ջորյ գետ նստի, և զիս 'ի կիլիկիա յաշաղէ »:

« Եւ արդ աղէ ասա. ճարտարախօսն ոչ զվերջին բանսն փութայ առաւել յօրինել, զի գովեալ գրուատեալ մեկնիցի: Եւ սպասաւորն վերջին նուազաց կարի պատկառ կաց զի մի պարսաւ լիցի: Եւ նահատակն եթէ ոչ զվերջին մարտն առաքինագոյն ցուցանիցէ, ոչ ապաքէն ամենայն աշխատութիւնն անօգուտ է: Եւ նաւավարն եթէ յամենայն ծովուն ըզդուշանացէ, և մօտ 'ի նաւահանգիստն խրիցէ զնաւն կամ բախիցէ, ոչ ապաքէն զառաջին վաստակն կորոյս: Եւ թիշկն եթէ թեթեացուցանիցէ զցաւ հիւանդին, և յորժամ մօտ 'ի կատարեալ առողջութիւն ածիցէ, յայնժամ զեղծցի, ոչ ապաքէն զամենայն ջանն կորոյս: Սյոյնպէս և որ զառաքինութեան կատարումն ընդ սկզբանն ոչ միաբանեն, եղանին և կորուսանեն զամենայն: Նոյն և 'ի կառամարտիկն, որք 'ի զիսոյ ասպարիզացն պնդակազմ զերիվարսն արձակեն, և յետոյ մեղկիցին ինչ և ծուլանացեն, ոչ պարզեացն հասանեն, և ոչ 'ի տերանցն ճանաչին »: Ուկեր:

Իսկ յաննմանեաց այսպէս ածէ հաստատութիւն Սարգիս վարդապետ.

« Զոր օրինակ առանց Փրիստոսի չկարէ ոք արդարագործութիւնս առնել, զոր և ինքնիսկ ասաց՝ առանց իմ ոչ լնչ կարէք առնել, նոյնպէս և ոչ առանց սատանայի մեղս գործէ ոք »:

Հ. Զինչ է 'ի բաղդատութենէ ցուցումն .

— Յորժամ ճարտասանն 'ի մեծէ ըդփոքըն, կամ 'ի փոքուէ զմեծ և կամ 'ի հաւասարէ դհաւասար յառաջածէ. զոր օրինակ.

« Եթէ առ Աստուածն իւր սուտ գտաւ, առ ո՞որ 'ի մարդկանէ զա արդար գտանիցի »: Եղիշ. պատմ:

Երկրորդին օրինակ.

« Եթէ մեք հեռագոյնս 'ի ձէնչ միայն 'ի լսելն այսպիսի ընկալաք յանձինս մեր սուդ դառնութեան. ապա ո՞րչափ ևս առաւել կուր հաղորդեալքոր 'ի չարչարանս ընդ հօտից ձերոց ». Ցովի. կար:

Օրինակ երրորդին.

« Համարիք, եթէ այն գալիլիացիք եղեն մեղաւոքք քան զամենայն գալիլիացիս, զի զայնպիսի անցս կրեցին. ոչ, ասեմ ձեզ. այլ եթէ ոչ ապաշխարիցէք, ամեներին նոյնպէս կորնչիջիք »: Ղուկ. ժգ. 2, 3:

ԴԱՍ Ե

Հակադրութիւն . - Նախընթաց և հետեւորդ և
յարակից հանդամանք . - Արտաքին տեղիք :

Հ. ԶԲՆՀ Է 'Ի հակադրութենէ ցու .
ցումն .

— Ճարտասանին բաղում ուրեք զներ-
հականս առ միմեանս կացուցանելով , յա-
ւելու զօրութիւն մեծ 'Ի բանս . զոր օրի-
նակ . « Որ ինքն իւր չար է , այլում բարի
ոչ կարէ լինել , և որ ինքն ընդ իսւար-
դնայ , այլում ոչ առաջնորդէ ճշմարտու-
թեան լուսով : Որպես զի չիր յանիրաւու-
թիւնէ արդարութիւն , այսպէս 'Ի ստութե-
նէ ճշմարտութիւն » . Եղիշ . պատմ :

« Չեկաց գահին առընթեր՝ զկողս քերել
առ 'Ի զօհս մասուցանելոյ 'Ի հարկէ . այլ
հասեալ կայ 'Ի վերայ սաստիկ ցանկու-
թիւն ընչից և ագահութիւն , և փորէ
կաչս : Ոչ ոք 'Ի զօրտկանաց արկ զինդ 'Ի
խարոյկ և կացոյց 'Ի վերայ կասկարա-
յից . այլ մարմար բոցն բորբոքեալ առա-
ւել քան զայս այրէ զոգիս : Չկայ մօտ
թագաւոր՝ բաղում պարզե խոստացեալ
առ 'Ի զերծուցանել , 'Ի մօտ կան մոլե-
կան փառք , որ չար քան զայն խոտը-
ղեն » . Ոսկեր :

Եւ Եղիշ 'Ի խրատն միանձանց .

« Եւ արդ ես տեսանեմ 'Ի մերում աշխար-
հիս և ոչ զոք ազատեալ յայսպիսի աղե-
տից : Յետս ընդդէմ ընթերցաք զգեղից ցիկ
զրեալսն . 'Ի պատճառս ուխտաւորութեան
հեռացաք 'Ի սուրբ ծնողացն , և արարաք
բաղում հարս օտարութիւն . զորս պատուե-
լոց արժանի էր՝ անարգեցաք , և յորս ոչն
ունէաք իշխանութիւն զնել մեծարանս ,
զախտ աղետից մերոց յայժ ծախեցաք : Ա-
զատեցաք 'Ի հարկաց արքունիք զորս ա-
ռանց մեզաց էր հարկին , և մոտաք ընդ
հարկաւ ստացուածոց՝ որ լի են անսառակ
ադահութեամբ : Զելաք յանկողինս սուրբ
հարսանեաց , և արարաք մեզ բարձրագա-
հոյս առամել քան զաշմարհի . . . Կօշիկը
ոտից մերոց յանդիմաննեն զմեզ եթէ ոչ
են սուրբ ճանապարհք մեր : Հանդերձք
մեր աղաղակեն զգործոց ձեռաց մերոց ,
եթէ մերկ եսք յերկնաւոր զգեստուց : Ե-
րիվարք մեր ցուցանեն մեզ , եթէ ոչ եմք
յափշտակելոց ընդ առաջ առանն 'Ի վերայ
օդոց : Ենիուածք ապարանից մերոց յայտ
առնեն , եթէ ոչ ունիմք մեք տաճար ա-
ռանց ձեռագործի յերկինս , յոր մտանե-
լոց են ամենայն գասք սոսկացելոցն յեր-
կրաւոր ախտից : Կալուածք անդաստանաց
մերոց կշտամբեն զմեզ , եթէ չիք մեր բա-
ժին 'Ի վիճակսն երկնաւորս : Մրգուզք ան-
յագք եղաք 'Ի կերակուրս , և առանց չա-
փոյ արքաք գինի պղտորիչ խորհրդացոց և
մտաց : Խոր 'Ի քուն ննջեմք ամեներեան ,

և երազ թուի մեղ ճշմարտութիւնն : Կա-
փուցեալ են աչք մտաց մերոց 'ի տեսա-
կան խորհրդաց , և անյագ պազշոտեալ
հայել 'ի կեանս աշխարհիս : Արդելեալք
զլսելիս 'ի սուրբ ընթերցուածոց , և ուն-
կընդիր եմք բառաշման խաշանց մերոց :
Ոչ եկն մեղ հստ անոյշ 'ի Հոգւոյն սրբոյ ,
վասն զի սիրեցաք մեք զիւղ ախտա-
լից աշխարհիս : Ոչ ճաշակեցին քիմք ո-
գւոց մերոց զկերակուր երկնային , վասն
զի պատրարեցաք զանձինս մեր 'ի զանա-
զան խորտիկս : Մութ է գոյն զիմաց
մերոց , վասն զի ոչ զուարթացան երեսոք
մեր 'ի խորհուրդս սրբութեան : Ճաւալից
են անդամք մարմնոց մերոց , վասն զի յա-
ռաջ քան զմարմնա՝ զոգիս ախտացու-
ցաք : Գերեզմանաց բռելոց նմանեցաք
յանձինս մեր , վասն զի ունայն եմք 'ի
չնորհաց սուրբ Հոգւոյն . վասն այսորիկ և
ամենայն չարիք հասին յաւուրս մեր » :

Հ . Զինչ է 'ի նախընթաց և հետևորդ
և 'ի յարակից հանդամնաց ցուցումն .

— Բազում ուրեք 'ի հանդամնաց աս-
տի յայտնի կամ 'հաւանական ասլացոյցս
առնու ճարտասանն . զոր օրինակ 'ի ծու-
գել արեգական՝ հարկ է զի իցէ տիւ , և
եթէ աիւ է հարկ է թէ ծագեալ իցէ ա-
րեգակն :

Ս.յապէս քաջն Վարդան զյոյս օգնա-
կանութեան առ 'ի յԱստուծոյ հաստատէ
'ի նախընթաց հանդամնաց . . .

«Յերկուս և յերիս կոիւս տէր ինքնին մեծաւ
դրութեամք օգնեաց մեղ . որպէս զի զա-
նուն քաջութեան ժառանգեցաք , և զգօրսն
արբունի չարաչար հարաք , և զմողմն ան-
ողորմ սատակեցաք , և զալցութիւն կոա-
պաշտութեանն 'ի տեղեւաց տեղեւաց սրբե-
ցաք , զանօրէն հրաման թագաւորին եղ-
ծար ապականեցաք , զմառվութիւն ծովուն
ցածուցաք . լիռնացեալ ալիքն դաշտա-
ցան , բարձրադէզ փրփուրն սպասեցաւ ,
դազանացեալ սրտմութիւնն դագարեաց :
Որ 'ի վերաց ամպոց որոտայր , նկուն ե-
ղեալ քան զառվական բնութիւնն 'ի վայր
գտաւ ընդ մեղ խօսելով » :

Խակ յարակից հանգամանք թէպէտէ և
ոչ համօրէն 'ի միասին , այլ ստէպ 'ի ճահ
պատահեն ճարտասանին . և են ութ այսո-
քիկ 'Ո՞վ , Զի՞նչ , Ո՞ւր , Ի՞ւ , Փանիցս , Ըն-
դէր , Ո՞րսէս , Ե՞րր :

Զքաղումն յայսցանէ վայելուչ 'ի կիր
արկանէ իմաստունն 'ի բանս յայս .

«Մինչեւ խաղաղութեանն պատեալ էր
զամնայն , և այն ինչ գիշերն իւրով ա-
րագութեամքն ընդմիջէր , ամենազօր քան
քո յերկնից յաթուոց արքունեաց սաս-
տիկ պատերազմնող 'ի մէջ սատական եր-
կրին հասանէր : Սուսեր պողովատիկ զա-
նաչառ հրամանգմբ քո բերեալ և 'ի մէջ ան-
ցեալ , զամեննեսին լնոյր մահուամք . անդ
առ երկնիք քերէր , և այսր յերկիր հա-
սանէր : Յայնժամ վաղլազակի ցնորք ան-

Հնարին երազոց խռովեցուցանէին դնուսա, և արհաւիրք անկարծք՝ ՚ի վերայ հասանէին: Եւ այլ ոք այլուր անկեալ կիսամահ, վասն որոյ պատճառասնաց մեռանէր՝ յայտ առնէր: Զի երազոցն խռովեցուցեալ դնոսա, գնոյն յառաջազոյն գուշակէին: զի մի յանգէտս; վասն որոյ չարաշարն տանջէին, կորնչիցին»:

Հ. Ո՞ր են արտաքին տեղիք.

— Խակ արտաքին կոչին տեղիք՝ Օրէնք, Համբու, Արձանագիրք, Երգումն, և Վըկայք, յորոց մարթ է ճարտասանին քաջ հաստատութիւն ածել բանիցն:

Հ. Զիսմրդ պարտ իցէ զվաստս կարգաւորել.

— Պարտ է հզօրագոյն փաստիւ խիք գրաւել նախ զմիտս, և աւագ ատկաւ ՚ի ակարագունից ՚ի հզօրագոյնս անցանել, յաւելեալ դիւրաքանչիւր պատշաճ օրինակս և վկայութիւնս: Մի խառնակել զտարասեռ փաստս ընդ միմեանս, այլ ուրոյն զբաժանն և զօգտակարն և զիրաւացին կարգել, հերքելով զհակառակ-սըն:

ԴԱՍ 2

Յորդոր. — Վըկայքաբան:

Հ. Զինչ է յորդորն, զոր հիմդերորդ մասն ձառի ասացեր.

— Ճարտասանին ոչ միայն պարտք են խելամտեցուցանել զոսնկնդիրս, այլ և զկամնն յորդութիւն կրիցն յուղմամբ:

Հ. Ո՞ր են գլխաւորք՝ ՚ի կիրս, զոր պարտէ ճարտասանին յուզել ըստ պատշաճի.

— ՈՒր և ատելութիւն, բարկութիւն և հեղութիւն, խնդութիւն և տիրութիւն, երկիւղ և քաջալերութիւն, կարեկցութիւն և միփթարութիւն:

Հ. Ո՞րպէս զմի մի ՚ի կրից այտի մարթ իցէ զարթուցանել.

— Զաէր՝ նկարագրութեամբ գեղեցիկ հանգամանաց անձին կամ իրաց, զոր պարտն իցէ սիրելի ընծայեցուցանել. և դարձեալ յուսով առ ՚ի նմանէ բարեացն և օգտից: Խակ զատելութիւն ՚ի հակառակէն՝ նկարագրութեամբ յուսութեանց նորա, և երկիւղիւ առ ՚ի նմանէ չարեացն:

Զքարկութիւն՝ յիշատակաւթշնամանացն կրելոց, խակ զինզութիւն՝ անկնզծ խոստովանութեամբ յանցանաց, անչարութեամբ դիտառութեան յանցաւորին, և յիշատակաւ վաստակոց և լաւութեան նորա:

Զինդութիւն՝ մեծութեամբ բարեոյն և բազմաժամանակեայ ակնկարութեամբն կամ՝ անկարձելի յաջողութեամբ: Խակ ըզտիրութիւն հակառակօք սոցին:

Զիրկիւղ՝ մերձաւորութեամբ վտանգին և անխուսափելի հետեւութեամբ չարեացն, խակ զքաջալերութիւն՝ յուսով յաջողութեան, զիւրին և հաւանական յաջողութիւն իրացն ցուցանելով:

Զկարեկցութիւն՝ մանրապատում առնելով զաղէտս վշաացելոյն, յուցանելով զի չէր արժանի չարեացն, և դդթութիւն՝ յուցանելով զի լսեմութիւն և զբարութիւն։ Խակ զմիմիթարութիւն՝ թեթեացուցանելով ըստ կարի զանրութիւն չարեացն, յուսացուցանելով՝ ի փոխարէնսն աստ և ՚ի հանդերձեալ, և զարիութեանն յուշ առնելով զլսեմութիւն և զօգուտ։

Հ. Եցեն ինչ կանոնք առ ՚ի յոյզս հասարակաց ամենայն կրից ճահաւորիք։

— Են իսկ. և նախ՝ զի ճարտասանն ըղդածեալ իցէ կրիւքն, զոր յայլս կամի զարթուցանել։

Երկրորդ՝ զի նախ համոզեսցէ զմիտս փաստիք և ասլա ջանացի չարժել ըղդմիրու։

Երրորդ՝ զի ՚ի պատշաճ տեղուջ զյորդորակն արասցէ առ ՚ի շարժել զիկիրս, որ ըստ յաճախ սովորութեան ՚ի վերջաբանին ՚ի դէպ գոյ։

Չորրորդ՝ զի մի զգացուսցէ ունինդրացն թէ տէա մատչի ՚ի յորդորակն, այլ յանըդդասափց ՚ի վերայ ածել զյոյզս կրից՝ տակաւ պատրաստելով առ այն զսիրտս։

Հինգերորդ՝ զիտել զլեզու և զբարլառ կրից, որ է ամենեին առանց արուեստաշ կութեան, և եռանդուն լի ձեռփք՝ առանց զարգուց և նրբարանութեանց։

Վեցերորդ՝ մի ընդհատումն առնել յուղման կրից, այլ ինչ ՚ի ներքս ածեալ, և մի ։

Ֆջուցանել զեռանդն կրից եկամուտ զարւ զուք կամ նմանութեամբ։

Եօթներորդ՝ մի կարի յամել ՚ի յորդորակս, զի եռանդն կրից չէ յերկարատեւ։

Յաճախ են ՚ի ճառս Ոսկեթերանի չքնաղ օրինակք զարթուցիչք կրից որպէս և ուրանօր յաղագս սուրբ խորհրդոյն ճառէ։

« Վասն որոյ տմեննեին արթուն պարտիս լինել. քանզի և ոչ սակաւ տանջանք պահիցին այնոցիկ որբ անսարժանութեամին հաղորդիցին։ Զմուաւ ած որպիսի ցասումն մատնչին և խաչահանուացն եղել. զգոյշ լիր այժմ, գուցէ և գու պարտական մարմեոյ և արեան գտանիցին։ Նորս զմարմինն սպանին, և գու յաղտեղեալ հոգիդ ընդունիս յետա այնչափ երախտեացն։ Քանզի չչատացիւ մարդ լինել և ապտակիլ և մեռանել, այլ և տակաւին զանձն իւր խառնէ ընդ մեզ, ոչ միայն հաւատովք, այլ և արգեամբք խակ մարմին իւր յօրինէ զմեզ. Քան զինչ չէ պարտ սրբագոյն լինել այնմ, որ յայնմ զենման վայելիցէ. քան զարպիսի ճառագայթս պայծառագոյն ձեռինն, որ զայն մարմին հատանիցէ. և բերանոյն, որ հոգեոր հրովիս լնուցու. և լեզուին, որ համակ ՚ի կարմիրս յահազին յարենէն ներկանիցի։ Զմուաւ ած որպիսի պատուով պատուեցար. կամ յորմէ սեղանոյ վայելես. զոր հրեշտակը տեսանեն և զարհութին, և չիշխան համարձակ ընդդէմ հայել ՚ի փայլաւ

տականցն որ անտի հատանիցն, և մեք նովաւ կերակրիմք, և նովաւ զանգանիմք, և լինիմք մի մարմին և մի հոգի: Ո՞ պատմեսցէ զզբաթիւնս տեսան, լսելի արասցէ զամենայն օրհնութիւնս նորա: Ո՞ հովիւ իւր անդամոցն կերակրէ զիւր ոչխարսն. և զինչ ևս ասացից հովիւ, այլ և մարք ևս իցեն բազում անդամ որ յետերկանց և ծննդոց՝ զացեկաց տան զորդիս: Խոկ սա ոչ ծուժեաց զայս առնել, այլ ինքնին կերակրէ զմեզ իւրով արեամին, և ամենայնիւ ընդ իւր զրկախառն առնէ զմեզ. . . Եւ արդ մի ծուլանացեմք, որ այսչափ արժանի եղիաք սիրոյ և պատուց. չտեսանիցիմք զման կունս մատազոյ որպիսի յօժարութեամք բուռն զատեսանց մարցն հարկանիցն, որպիսի յօժարութեամք մածուցաննեն զշըթունսն ընդ մարցն շրթունս: Այսպիսի յօժարութեամք մատիցուք յայն սեղան և ՚ի մայրենի հոգեւոր բաժակն. մանաւանդթէ ևս յոլովագոյն քան զմանկանցն ձգեսցուք մեք զննորիս հոգւոյն, և զմին միայն տրումութիւն համարեացուք, չլայցելեն յայնպիսի կերակոր: Քանզի չէ մարդկեղէն զորութեան զործն, որ առաջի կայ, զոր յայնժամ յընթեացն ժամ արար, և այժմ զնոյն զործէ. մեք զապասաւորաց աստիճան ունիմք, և սրբէ և վերստին կազմէ նա »:

Հ. Զինչ է վերջարանն.

— Վերջին մասն ճառին, յորում ճարտասանն ՚ի դիտաւորութիւն բովանդակ ճառին, ազգովագոյնս ջանայ հասանել:

Վասն որպ պարտ է ՚ի վերջարանին համառուել զամենայն զիաստու, կնիք զհզորագոյնն զնելով:

Բայց զործ է գիտել ըստ ժամանակին աւարտել զճառն. զի մինչև ցուցեալ զառաջարկութիւնն զհետեանն ՚ի վերայ ածել ծաղրելի է: Գարձեալ և զպերճարանութիւն ընդ զօրութեան բանից վայել չապէս խառնելի է ՚ի վերջարանին, զի և ճարտասանն ընդ ճառին հաճոյ լիցի լսելեաց:

ԴԱՅ Է

ՏԵՂԵՔ ԱԵՒՓԱԿԱՆ ԵՐԵԳ ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ:

Հ. Իցէ՛ և այլ ինչ զանազանութիւն ճարտասանական տեղեաց քան զներքինսն և զարտարինս.

— Այս ամեննեին. զի զորոց յայսվայր ասացաքն հասարակ կոչին տեղիք, բայց են և սեփականք երեց ճարտասանական հանդիսիցն:

Հ. Ո՞ իցեն կացրդական հանդիսին սեփական տեղիք.

— Նախ ազգն կամ հայրենիք, եթէ աղնուազգի իցէ ներբողեալ. խոկ եթէ յան-

տոհմութենէ աղնուացեալ, պարտ է զաւսարինութիւն նորա և զլաստակո պահծացաննել որովք անձամբ զանձն աղնուականացոյց:

Երկրորդ՝ բաջակիրթ գաստիարակութիւն ներբողելցյն:

Երրորդ՝ մեծութիւնք, եթէ բարւոր վարեալ իցէ նորիմքք, և 'ի զրկին յայնցանէ անխոռվ կացեալ:

Չորրորդ՝ համառօտիւ իմն և 'ի վայելուչ կերպարանաց առնելի է զներբող, և մանաւանդ 'ի տպեղութենէ զպարսաւ:

Հինգերրորդ՝ բարեմասնութիւնք բնականք և ստացականք. առաջնովքն գովելի է եթէ բարւոր ուրուք վարեալ իցէ նորօք, և վերջնովքն եթէ ճգամբք ստացեալ իցէ դայնս:

Վեցերրորդ՝ գործք ներբողելցյն, որ ուսումնականք և որ այլ ինչ կենցազօգուտ արդասիք՝ որ յաձախին պարծանս մարդոց:

Յօթներրորդ՝ փառք և մրցանակք, որս տարեալ ուրուք իցէ:

Ութերրորդ՝ հանգամանք մահուն, եթէ վասն հաւատոց կամ յօդուտ աշխարհի կամ 'ի վերայ հայրենեացն զմահ յանձն առեալ իցէ:

Ըստ սմին օրինակի և զբաղոք մարթ է ներբողել 'ի հիմնագրէն, 'ի վաղեմի հնութենէն, 'ի տեղւոյն, 'ի ձեռոյն, 'ի մեծութենէ, 'ի գեղեցկութենէ փողոցացն և

կրապարակաց, յաշխարհսմուտ շինուածոց, 'ի կամրջաց, 'ի նաւահանգստից, 'ի հին աւանդից, յանառիկ ամրութենէն, յանխոռվ խաղաղութենէ, 'ի բարւոր տեսչութենէն, 'ի ճոխութենէ, 'ի բարգաւաճշահավաճառութենէ, 'ի բազմամարդութենէ, 'ի հանճարոյ բնակչացն, յականաւորմարդկանէ, որ անդ կացեալ, 'ի ստածիչ օդոց, 'ի բերոց երկրին, այլովքն հանդերձ:

Որ ինչ զներբողինէն ասացաք՝ նոյնք օգնեն և առ 'ի սրբաւ, անմասն 'ի գովելցաց անտի ցուցանելով զպարսաւեալն:

Հ. Ո՞ր իցեն բաղխոհական հանդիսին սեփական տեղիք.

— Նախ ցուցանել զարդարութիւն առաջարկութեանն. դի ոչ բնական օրինաց, ոչ քաղաքականին և ոչ սատուածայնոցն և մարդկայնոց դրական օրինաց հակառակի, և ոչ վաղեմի սովորութեանց կամ կարծեաց՝ որ զօրինաց ունին զօրութիւն:

Երկրորդ՝ ցուցանել զօդտակարութիւն, որ առաւել յորդորիչն է. և զոյցիմ՝ որ յալսախոտն առնելոյ զայն ծնանիցին. իսկ եթէ կարեւոր ևս առ 'ի կեանս և 'ի բարեկենդանութիւն իրբն իցեն, հզօրագոյն ևս ցուցանելի է զայն:

Երրորդ՝ ցուցանել զիտառ և զպարծանս որ անտի յառաջ զայցեն, քանդի բազումք այնորիկ են՝ որ ցանկութեամբ փառաց և երկիւղիւ վատանունութեան առաց

ռաւել յորդորին քան թէ օգտակարութեամբ:

Չորրորդ՝ ոչ միայն զհնարաւորութիւն իրացն, այլ և զդիւրութիւնն ցուցանելի է: իսկ եթէ գծուարին իցէ, յաւելու պարտ է և զալարծանս յաղթելոյ գժուարութեանցն:

Այսորիկ 'ի համոզելն. իսկ 'ի հերքելն ինչ հակառակօք սոցին հնարիւք վարելի է՝ անիրաւ, վնասակար, անօգուտ, անպատշաճ, գժուարին և անհնարին իսկ ցուացնելով:

Ընդ բաղխոհական հանդիսիւ բովանդակին և բարոյական խրատք և քարողք. այլ 'ի սոսա պարտ է ճարտասանին ցուցանել զպարտս ունկնդրաց 'ի կատարումն աստուածային և մարդկացին օրինաց, և սպառնալեօք սպառուհասից երկեցուցանել զնոսա: Եւ ապա վայելչականաւն ևս և օգտակարաւն և խոստացեալ վարձուքն հոգեորսականօք և ապա մարմնաւորօք քաջալերել զնոսա, և զդիւրութիւնն ևս և զդուարձութիւն կատարման իրայն 'ի վերոյ յաւելու, և յորդորակօք կատարել զհառն:

ԴԱԱ Ղ

Տեղեք ատենական հանդիսին:

Հ. Ո՞ր իցեն ատենական հանդիսին սեփական տեղիք.

— Ատենախօսին երկեակ պարտք են, գտտախաղի և չատագովի:

Արդ գատախաղին նախ քամենայն պարտ է ցուցանել զհաւաստիս յանցանաց ամբաստանելոյն 'ի հանդամանաց անտի գործոյն. զոր օրինակ զյանցանս սպանութեան յարիմաշաղախ հանդերձիցն, 'ի զէնս կրելոյ 'ի ծածուկ, 'ի յառաջագոյն սպառնալեացն, յայլագունելոյ զիմացն, 'ի փախստենէ, և այլն:

Երկրորդ՝ յականատես վկացից:

Երրորդ՝ 'ի խոստովանութենէ պարտաւորին:

Բայց բազում այն է՝ զի ոչ յայտնի զըտանին հաւասարիք, և յայնժամ գուշակութեամբ ևեթ հարկ է վարել գատախաղին, յորմէ գուշակական գատն այն կոչի: Եւ տեղիք գուշակութեանցն են նախընթաց և զուղընթաց և չետեռորդ հանգամանք, զոր օրինակ 'ի դատ սպանութեան նախընթաց հանդամանք են եթէ ամբաստանեալն թշնամութեամբ էր ընդ սպանելոյն, եթէ մահ սպառնացեալ էր նմա, եթէ զրկեալ 'ի նմանէ, եթէ սովորեալ 'ի հա-

բուռածս կարելլըս կամ յացլ ո՞նիրս։ Զուզուցնթացք են եթէ պատեհէ էր նմա անպատուչաս զերծանել, եթէ լսելի եղեւ աղաղակ և հեծութիւն, և այլ այսափսի նըշանք։ Իսկ հետեւրդք են խուճապել նորագվարօն, փախչել, այլագունել դիմացն, զէն 'ի ծածուկ ունել, պատ 'ի պատ պատասխանիք, այլովքն հանդերձ։

Իսկ ջատագովին պարտ է նախ միստել զյանցանս ամբաստանելցին անդասին 'ի նոցին հանգամանաց անհնարին ցուցանելով զայն և 'ի վեր քան զկար նորաւ բայց եթէ արգարե սպարտաւոր իցէ յանցանացն, պարտ է ջատագովին թեթեացուցանել բատ կարի զյանցանսն, ցուցանելով եթէ էին ինչ ամբաստանելցին իրաւունք կամ պատճառք 'ի գործ անզր ձեռնարկեցը. վասն որոյ պարտ է առաւել ևս ջատագովին հմուտ լինել օրինաց և իրաւանց և սովորութեանց։ Իսկ եթէ բնաւ ամենեին չիցէ մարթ արդարացուցանել զգործն, հարդէ զկամս յանցաւորին ցուցանել անպարտ, դիպաց ընծայելով ըզդործն, կամ առջութեան, կամ արբեցութեան, կամ բռւռն թափոյ կրից, կամ գրգռութեան թշնամոյն, այլովքն հանգերձ։

Համառօտիւ ասել, յոյժ այլազգ են 'ի միմեանց գործ դատախազի և ջատագովի, և գժուարագոյն յոյժ երկրորդիս գործ քան զառաջնոյն։ Ամս պարտ է ցուցանել 'ի յա-

ոաֆաբանի իւրում, զի ոչ շարժի յատելութենէ կամ յայլոց կրից, այլ 'ի սիրոց ևեթ արգարութեան և նշանրտութեան։ Իսկ ջատագովին պարտ է ջանալ յինքն յանկուցանել զմուլիս ցածութեան բանիւք, և կասկածանս իմն և երկմտութիւն զհակառիկորդէն արկանել 'ի միտս ունեկընքացն։ Դատախազին պարտ է զօրաւոր և բացայցտ առնել զպատմութիւնն, իսկ ջատագովին մեղմ և ուրեք ուրեք սրօղեալ։ Դատախազին պարտ է տակաւ սաստիկացուցանել զփաստս, և կնիք զհզօրագոյն 'ի փաստից 'ի վերայ ածել։ Իսկ ջատագովին զհզօրագոյնս 'ի փաստիցն նախ ցրել, և մի երբէք խուսել 'ի պատասխանարութենէ, այլ մանրախուզի հետազօտել զփաստս հակառակորդին և հերքել։ Իսկ 'ի վերջաբանին պարտ է երկաքանչիւցն ևս համնդուն յօրինել ըլքանն, միոյն 'ի վրէժմանդրութիւն և միւսոյն 'ի գթութիւն շարժելով զմուլիս, յորում զօրավիգն մեծ իցեն ջատագովին վաստակեք և առաքինութիւնք ամբաստանելցին։

ԴԱՅ Յ.

Զեք բառեց։

Հ. Յայս վայր զմասանց իւրաքանչիւր զազգի աղգի ճառիցն և զսեղեաց նոցա

պարզաբանեցեր զկանոնս . արդ ասա ինձ ,
իցեն ինչ որ ամենայն մասանցս սցսոցիկ
առ հասարակ պատշաճիցին , և որ այնո-
քիկ իցեն . ”

— Գերականին պարտը են անսխալ ըղ-
բանս յօրինել նիւթականին ևեթ վացել-
չութեան ուշ ունելով . խակ ճարտասանին
պարտ է իմանալի իմն վայելչութիւն յա-
ւելով ՚ի նոսա : Եւ առ այս ՚ի կիր արկա-
նէ նա զձես , որոց յամենայն մասունա
ճառին են մուտք :

Հ . Զի՞նչ են ձեք .

— Ձեք են նորօրինակ բացատրութիւնք՝
առ ՚ի առաջ ազգուութիւնն խօսից :

Եւ յայցանէ են որ բառից ևեթ կոչին
ձեք , որպէս փոխանակ ասելցյ՝ Զիր որ ու-
րեք , ասելն՝ « Զիր որ չիք ուրեք » : Եւ են
որ իմաստից կոչին ձեք . որպէս փոխա-
նակ ասելցյ՝ Բաղում վիշտս կամ փորձու-
թիւնս կրեալ , ասելն՝ « Բաղում ևս ձիւ-
նաբերս յանձին կուտեալ » : Կամ փոխա-
նակ ասելցյ՝ Զոմանս սրով կոսորէին , ա-
սելն՝ « Զոմանս բազմախողխող երկաթոյն
տային կերակուք » :

Հ . Քանի՞ են ձեք բառից .

— Տիրապէս չորք . աւելագրութիւն ,
զեղչումն , յոզնահոլովք և նմանաձայնու-
թիւն :

Հ . Զի՞նչ է աւելագրութիւն .

— Կրկնումն նոյն կամ համանշանակ
բառի , պէսպէս ձեռվք . զոր օրինակ կըրկ-
նութեամբ ՚ի սկիզբն .

« Ո՞ր են դպիրքն , ուր են խրատտուքն ,
ուր է որ ունի զհամար պահակերաց զմե-
ծի և զփոքու ». Էսայի :

Դարձեալ կրկնութեամբ ՚ի վերջն .

« Խոկ արդ բնութիւնս իմ ոչ կըտամբեալ
յանդիմանէ զիս՝ եթէ ստեղծայ մերկ , և
եթէ եղայ ՚ի գրախսին մերկ , և եթէ եկի
անտի մերկ , եթէ ծնայ մերկ , և եթէ ան-
դրէն յերկիր մերկանդամ երթամ » . Եղիչ :

Դարձեալ խառն կրկնութեամի .

« Ուզորմիմ ողբրմիմ սիրելեաց ձերոց , և
բազում անդամ ողորմիմ անձանց ձե-
րոց » . Եղիչ :

Դարձեալ համանշանակ բառից կըրկ-
նութեամբ .

« Եթէ յանկ այսպիսի միտս ունիցիս , իբ-
րև զսգաւոր շրջիս հանտպուղ , լսո , հե-
ծես , յոգոց հանես , աշխարես զցայդ և
զցերեկ : Մի մեղաւոր միայն կոչեսցուք
զանձինս մեր , այլ զմեզս զամենայն մի
ըստ միուղէ զմեծն և զիոքրն այց արաս-
ցուք , խնդրեսցուք , զի մի մնասցէ անցի-
շատուկ ». Ասորիս :

Հ . Զի՞նչ է զեղչումն .

— Լութիւն մասանց ինչ բանի պէս-
պէս ձեռվք , զոր օրինակ .

« Քննեցաւ (վեասապարտն) , գտաւ , պատ-
ժեցաւ , ՚ի սուր սպառեցաւ » . Մակար :

Աստանօր լուն շաղկանք :

« Բարկութիւն ամենահօրն զիջաւ ՚ի հաշ-
առութիւն , զի ՚ի մէնջ խաղաղութեան պա-

տարագն» . Լամբ : Ուր լոփ բառս Մատուցաւ :

« Յետ տեսանելոյ զնա յարուցեալ , և չօշափելոյ ձեռամբ թումայի , զի՞նչ » . Լամբ : Այսինքն տակասին յետ այսորիկ զի՞նչ առնէին տռաքեալքն :

Հ . Զի՞նչ են յոզնահորովք .

— Կրկնումն նոյն բառի յայլ և այլ հովվա , կամ բայի յայլ և այլ ժամանակս և յեղանակս , զոր օրինակ .

« Փառաւորեմք զլյստուած յորժամը զմիմեանց բեռն բառնամք , յորժամը միմեանց զիրկս արկանեմք , յորժամը զմիմեամբք փարփակմք , յորժամը առ միմեանց ջոլորիցմք , յորժամը միմեանց կարեկից և վշտուկից գտանիցմք , յորժամը ՚ի վերայ իրեաց արտասուեմք » . Սարգ :

Եւ դարձեալ . « Երիթացեալ և բըրդ-գլխալ առ ամենայն ոք դիմէ , զամենայն ոք աղաշէ , ամենեցուն աղերսէ » . Սարգ :

Եւ դարձեալ . « Ալ իմաստունք լսցին և լան միշտ կենդանի բանիւքն իւրեանց » . Լամբ :

Եւ դարձեալ . « Ի խաւարային ժամուգիսաւարային կերակուրսխաւարային մարմնոյս տացուք » . Երիշ :

Հ . Զի՞նչ է նմանաձայնութիւն .

— Բառք կամ յանգք նմանաւորք միմեանց . զոր օրինակ .

« Փըթթեալ վարդից նման թերթից ,
« կամ կերունակ ճըղաց խընձոր » :

Այլ օրինակ .

« Ծովն ՚ի միջի իմ ծածանէք ,

« Քաղցրիկ օգովկ ծիծաղէք » . Ճնորմ :

Այլ օրինակ .

« Գոհար վարդն վառ առեալ .

« Ի վեհից վարսիցն արփենից .

« Ի վեր ՚ի վերայ վարսից .

« Ծաւալէք ծաղիկ ծովային » :

Այլ օրինակ .

« Տատանին տագնապաւ տերեք տնկոց եւ գլուխն ծառոց շարժեալք ՚ի հողմոց ուժզին բաղսելոց » . Նարեկ :

Ցետինս այս ձեւ ՚ի քերթուածս առաւելապէս ունի աեղի , և այն բազում զգուշութեամբ . զի խաղքս այսորիկ բառից մանկական առնեն զշարագրածն :

ԳԱՎ Ժ

Զեք իմաստից :

Հ . Ո՞ր իցեն ձեք իմաստից .

— Ամենայն բան՝ արտաքոյ սովորական ասացուածոյ բացարեալ , եթէ փօխարեւութար , եթէ այլաբանօրէն , և եթէ այլովոր և է օրինակաւ :

Հ . Անեկնեալինձ զգոստ մի ըստ միոնէ .

և նախ թէ զի՞նչ է փօխարերութիւն .

— Փոփօխումն նշանակութեան բառից յայլ ըստ նմանութեան կամ ըստ համեմատութեան : Զոր օրինակ Լիա լուսոյ կու-

չել զաշս , Արումնացան զրամբասողն և զքսու , կապուտակ դաշտ զծով . Ասաւոս բռացիկն զճանճիկն փոսուռաց և այլն :

« Արդարեւ ճշմարիտ սարդի ոստայն կամեցան անկանել՝ որ զայս այսպէսն դրոշմեցին ՚ի ստագիր գիրսն իւրեանց » . Բարսելու :

« Ես ձայն զատիւծուն ասեմ , որ դոչէր ՚ի քառաթեկն » . Նարեկ : Աստանօք առիւծ գիրիստոս , և քառաթեւ զուրբ խաչն փոխաբերաբար նշանակէ :

Բայց դգուշագիր է նախ մի յանարդ իւրաց առնուլ փոխաբերութիւնս ազնուագունից : Վասն որոյ ստագանէ Որատ ըգտողն Մարկոսի ,

« Ի Եւան Աւանեայ բարձրադիտակ

« Եթուք Հերմիէս ծիւն ըսպիտակ » :

Երկրորդ՝ պարտ է փոխաբերութեան գոլ բացայաց և մերձաւոր , և մի մթին և բռնազբուեալ , որպէս եթէ Աշխարհակ երկնարդեալ կոչիցէ որ զայր բարձրահասակ :

Երրորդ՝ մի զերթողականս ՚ի կիր առնուլ ՚ի ճարտասանելն . զոր օրինակ մարթէ քերթողի ասել զումերէ անստգիւտ թէ ՚ի զալարագեղ գարնայնի տիոցն վախճանեցաւ , բայց ճարտարախօսի գուն ուրեք :

Չորրորդ՝ մի զիրն ընդ փոխաբերութեան խառնակել , ուրեք ՚ի փոխաբերեալ միտս և ուրեք ըստ նկարագրին իմացեալ . զոր օրինակ փոխանակ ասելոյ թէ Արտասուք Կարճեցին զկեանս նորա , ոչ է օրէն ա-

սել զետք արտասուաց կարճեցին զթել կենաց նորա :

Հինգերորդ՝ մի ՚ի միում վայրի խոկել բազում փոխաբերութիւնս , մանաւանդ զանկցորդելիս ընդ միմեանս : Ստգտաննել ի յայսմ մասին մերս Յովհաննէս կաթողիկոս յասելն .

« Յայնմէնետէ տագա նիւթ հրաբորոք գտունութեան մտաց գտեալ ոստիկանին զայն պիսի յաղթութիւն , հրկիզութիւնս լազումն ափսեալ տարածանէ ընդ ուրատ երկրի մերոյ . և ՚ի միջօբէի իրրեւ գիշերի մութ և մէգ և մառախուղ և խաւար աղջամիջին պատեալ պաշարէր զասպանագեանս ազն . և ՚ի լծակս կըսոց եղեալ զերկունս տագնապ տարակուսանաց , հակամիտեալ կուտեալ գտանէին ՚ի վերայ մեր ծանրատալլուկ անուր Հագարու , առաւել քան զբարիս ձորյն Նաբոլիայ : Վասն զի նետք կինից և տէգ տեառն տեղացին ՚ի մեզ . բանզի արմատ գառնութեան , զոր երբեմն խլեաց տէր ՚ի տանէս թորգումայ , կրկին շառաւիղեալ տնկեցաւ յիմանալի այգեստանս մեր ՚ի փշահեղձ մացառ վերընճիւղեալ յեղծումն և յապականութիւն » :

Հ . Զի՞նչ է փոխանունութիւն .

— Փոխանունութիւնն է յարժամ պատճառք գնին փոխանակ գործոյ . կամ գործ փոխանակ պատճառի , կամ պարունակեալ փոխանակ պարունակելցյն , և կամ

Հակառակն նորին, կամ ժամանակն փոխանուկ անցից, և կամ սոցին սակի փոխադրութիւնք: Զոր օրինակ.

« Լոէր զի ընթեռնոյր զԵսայի մարգարէ » .
այսինքն զզիրս Եսայեաց մարգարէի :
« Յառնել առաջի ալեաց » . այսինքն ծերոց :

« Հնադանդեցուցանէր զամբարտաւան և
զբիրս ապստամբութիւն նոցա ». այսինքն
զմարդիկն ապստամբ :

« Յափշտակեցաւ, զի մի նենդութիւն
սպատրիցէ զանձն նորա ». այսինքն նենդողք :

« Մանկութիւն վաղվաղակի վախճանեալ ».
այսինքն մանուկ վաղվամեռիկ :

« Ողբամ զբեզ Հայոց աշխարհ » . այսինքն
ընակիչք հայաստանի :

« Ըմպել զբաժակ » . այսինքն զբալելին որ
՚ի բաժակի :

« Եւ փախեան ՚ի Հայո ». այսինքն յաշ-
խարհն Հայոց :

« Կորսս զբարն Նոյի ». այսինքն զմարդիկ
Նոյեան զարուն :

« Զամենայն արբունս մանկութեան կոտո-
րեալ ». այսինքն զմանկտին ամենայն :

« Բարձի ակն ունել ». այսինքն իշխանութեան :

« Արհամարհել զթագ ». այսինքն զթագա-
ւորութիւն :

Հ · Զինչ է խելամութիւն .

— Աչինչ ընդհատ ՚ի փոխանութենէ

վարել զմասն փոխանակ բոլորի, զնիւթ
փոխանակ իրին, զսեռ ընդ տեսակի, զե-
զական ընդ յոգնականի, և որ սոցին սա-
կի ձեք: Զոր օրինակ.

« Ահա ոտքն, որք թաղեցին զայրն քո ՚ի
դրան, հանցեն և զեւզ » :

« Վասն այնորիկ և չնչին փայտին հաւա-
տան մարդիկ զսնձինս իւրեանց ». այս
ինքն նաւուն :

« Եւ տեսցէ ամենայն մարմին զիրկու-
թիւն Աստուծոյ, զի տէր խօսեցաւ ». այս
ինքն ամենայն մարդ, որ է տեսակ սեռա-
կան անուանս մարմին :

« Մի լինիք որտէս զծիս և զջորիս, զի ոչ
գոյ ՚ի նոսա իմաստութիւն ». այսինքն իր-
րեւ զանբանս :

« Տկարն խրախուսեսցէ թէ հզօր եմ ես,
հանդարան պատերազմող եղիցի ». այս
ինքն տկարք խրախուսեսցին, հանդարաբ
պատերազմողը եղիցին :

« Սատակել զբետացին և զամովրհացին ».
այսինքն զբետացին և զամովրհացին :

ԴԱՅ ԺԱ

Հեգնութիւն . — Երդիծանութիւն . — Փոխա-
ռութիւն . — Անուանաստեղծութիւն :

Հ · Զինչ է հեգնութիւն .

— Հեգնութիւն է ուր հակառակ բա-
ռիցն են իմաստք նոցա . զոր օրինակ .

« Ո՞վ քո զօրութեանդ, 'ի ծայրն հասեր իւմատից. փրկեցեր զոգի քո՞ զայդ ասելով ». Լամբ: Զար պարզաբար ասելի էր. Պակասամիտ ես, 'ի խորս տղիտութեան կաս, և զոգիդ.քո դատապարտես բանիւդ:

« Հարցանեն ոմանք ցիմաստունս մեր, կենդանւոյ լինի պատարագ թէ ոչ. իսկ որ բուն կատարեալին են՝ պատստիսանեն, ոչ ընաւ ». Լամբ: Ուր ահա իմաստունն երան կատարեալ նշանակեն՝ դժակառակն, այսինքն զտիմար և զանգէտ:

« Մեծաճայն կարդացէք, զի աստուած է. թերես զբօսանք ինչ իցեն նմա, և միանդամայն թերես առնիցէ հրաման, կամ թէ 'ի քուն իցէ և յառնիցէ » . այսինքն ՚ի զուր է կարդարդ մեր, զի չէ նա աստուած :

Սովին ձեռով Գրիգոր կաթողիկոս պատստանձեցուցանե զջուտէորդին, որ զշոռմայ եկեղեցին ասէք կործանեալ:

« Ապա յայտ իսկ է, և թէ 'ի զուր աշխատեցաւ Պաւլոս, 'ի զուր աշխատեցաւ և Պետրոս, և ոչ ուղղեցան ոտք նորա 'ի զնացա՛ ընդ որ խորհեցաւ և արար: Ընդունայն են և քարոզութիւնք նոցա, և սուտ էին ինստամանք աեւան առ Պետրոս՝ թէ 'ի վերայ այգը վիմի շնուցից զեկեղեցի իմ, և զրունք գժոխոց զնա մի յազթահարեսցեն: Արդ յազթահարեցաւ և կորեաւ, զի ոչ է եկեղեցի, այլ այր աւազակաց. ոչ մկրտութիւն 'ի թողութիւն մեղաց, այլ միայն լուացումն չլոյ, Արդ ու-

բախ լեր Պիղատոս, ցնձայելք և զուք զատք քահանայապետաց. վասն զի ոչ ըստանիք տէր, այլ մալրեցուցիչ. ոչ խաչեցիք աստուած, այլ գող և աւաղակ և խոռվարար. ոչ հովիւ քաջ, այլ վարատող ոչխարաց. սուտ է որդին որոտման, և իրաւ է որդին Տուտեայ » :

Հ. Զինչ է երդիմանութիւն.

— Դժնդակ հեգնութիւն. զոր օրինակ. « Վահ որ քակէիր զտանարն, և զերիս աւուրս շննէիր զնա. ասլրեցո զքեզ, եթէ որդի ես Աստուծոյ էջ 'ի խաչէդ » :

Այսպէս Սմբատ սպարապետ զշամ փուր հրաշէկ ածեալ զգլուսով Մեհրուժանայ, ամէք. « Պատկեմ զքեզ, Մեհրուժան, քանզի 'ի խնդիր էիր թագաւորել Հայոց. և ինձ ասպետիս պարտ է զքեզ պասկել ըստ սովորական իշխանութեան խնց հայրենեաց ». Խորեն:

Ծնդ ձեռվլ ընդ այսուիկ բովանդակին և զսրովանք, որով ճարտարակասն կըշտամբէ զարժանին զսրովանաց. զոր օրինակ Լամբը ունացի զբանարկուն.

« Ո՞ւր զու, զբարարիչ զատախալ, եկ այժմ կաց մեզ առընթեր, ոչ իբր սիրելի, այլ իբրև զթշնամի. տես և ողբա յանձն քո, տես և յամօթ լեր 'ի գործս քո. տես, սա այն է որում զմաշն մեքենայեցեր, որում զլեզին արբուցեր, զոր զոլացեալ Համբաւեցեր » :

Են և պատրուակեալ կտամիանք, որ

Հաելեայն տան խմանալ զգսրովանս . զոր օրինակ Պաւլոսի ասելն ցկրնթացիս .
« Յայդմ ոչ գոլեմ զձեղ » :

Եւ Ասկեբերանի ատէսլ զանձն 'ի մէջ բերել և խառն ընդ այլս յանդիմանել .
զոր օրինակ .

« Ո՞րշափ չարեօք լի եմք , և ոչ զգամք .
զմիմեանս խածանեմք , զմիմեանս ուտեմք ,
մեղանչեմք , ամբաստանեմք , բամբաստեմք ,
ընդ ընկերաց փառս խանդամք » :

Հ . Զինչ է փոխառութիւն .

— Զմիոյ իրիք հանգամանս այլում տալ
ըստ համեմատութեան կամ ըստ նմանու-
թեան . զոր օրինակ .

« Գիշերադէմ գոլով ես , 'ի բնաւից պար-
սակիմ » . այսինքն սեադէմ . Գօշ :

« Որբան ՚ի սե և 'ի մուր կեանքս պան-
զըլսախիմք » . այսինքն ՚ի խաւարացին և 'ի
տխուր կեանս յայս . Լամբ :

« Ծնդ աշացտացն նեղեղոց մշտագիշերն
խարիսափանօր » . այսինքն որպէս միշտ ՚ի
խաւարի խարիսափեղով . Նարեկ :

« Ի կողմանս ասորիստանի գագարէ առ
գեառվե երկրուսնեայ աւուրս » . այսինքն
երկամեայ ժամանակ . Խորեն :

Ըստ այսմ ասեմք . Անցին հուճք երեք ,
փոխանակ ասելց ամք :

Ըստ այսմ և Եղիշէի վարդապետի ա-
սելն .

« Բազում ձմերաց հալեցան սառնամա-
նիք , եհաս գարուն և հիփն նորեկ ծիծ-

ռունք , տեսին և խնդացին կենցաղասէր
մարդիկ . և նորա (երանելի տիկնայքն) ոչ
երեէք կարացին տեսանել զանձկալիսն
իւրեանց » :

Հ . Զինչ է այլաբանութիւն .

— Բան ՚ի բազում փոխաբերութեանց
հիւսեալ . որպէս Շնորհալւոյ այլաբանեն
դվախնձոն եղեօր իւրոյ Գրիգորի Կաթողի-
կոսի օրինակաւ նաւարկութեան .

« Խնդն նաւու հաւատոյ ընդ ծովլ աշխար-
հիս՝ հողմով Հոգւոյն ուղղակի նաւա-
սիւսեալ ծմարտութեամք և առարինու-
թեամք , եհաս անվիսաս յանքոյթ և առանց
ալեաց նաւահանգիստն » :

Այլ օրինակ .

« Ծընան հուսանք աղդըս բազումն ,
Եւ մարըք մանկունք ըզհապարակըս
ծերոց .

Ի գրկըս սըրբութեան աղօթից և պա-
հոց .

Անեցին հաւատովք զարգացեալք ՚ի
բրիստոս » . Շար :

Գեղեցիկ է յոյժ այլաբանութիւն այ-
գույն ՚ի սաղմոսս .

« Այգի յԵղիստոսէ փոխեցեր , հաներ
զհեթանոսս և զնոսա տնկեցեր , և առաջ-
նորդեցեր նմա : Հաստատեցեր զարմատա
նորա և ելից զերկիր . ծածկեաց զերինս
հովանի նորա , և բարունակ նորա զմայրս
Արտօնծոյ : Զգեաց զորթ իւր մինչև ՚ի
ծովլ մինչև ՚ի գետս ևն շառաւիզք նորա :

Ընդէր քակեցեր զցանկ նորա . կթեն զնա
անցաւորք ճանապարհի : Ապականեաց
զնա խող անտառի, և երէ վայրի արտօնե-
ցաւ 'ի նմա : Աստուած զօրութեանց, դարձ
հայեաց յերկնից, և տես . այց արա այ-
դւոյս այսմիկ, և գարման տար սմա՞ զոր
տնկեաց աջ քո » :

Այլաբանութեան նոյն կանոնք են որ
ինչ փոխարերութեան . այլ 'ի սմա զդու-
շալի է և ևս՝ չփոխել զայլաբանութիւնն
այլ յայլմէ, այլ յորոց իրաց առեալ իցէ
նմանութիւնն նովին և աւարտել :

Հ . Զինչ է անուանաստեղծութիւն .

— Ներգանակութիւն բառից ըստ ի-
մաստիցն . զոր օրինակ ճճուել կամ ճռու-
զել ճնճղկանց, բզզել մեղուաց, գարդա-
փել տախտակաց, ճղփումն ջուրց, ճռնչել
ծղինեաց, ճարճատին փոց 'ի հուր, չըր-
շին տերեսոց, և այն :

Վայելուչ և զօրաւոր յոյժ առնէ զրանն
ձես այս, որպէս տեսանի օրինակօքս,

« Անդ էր տել թնդիւն վահանաց, շա-
հիւն աղեղանց, չողիւն սուսերաց, շաշիւն
նշանաց, շատաշիւն նետից » . Մակար :

« Կոփիւնք վահանաւորացն, և ճայթմունք
լարից աղեղանց զմելիս ամենեցուն տո-
հասարակ խացուցանէին » . Եղիշէ :

« Եւ 'ի արոփական զոփմանէ ոտիցն թըն-
դեալ տանիքն, և 'ի վայր վլուզեալ » .
Յովին . կար :

« Ի զիւ գայր 'ի զիւ սայլիկն 'ի զիւ
ի Մասեաց յաջ կողմանէն » . Նարեկ :

ԴԱՍ ԺԲ

Դերանունութիւն և Շրջաբանութիւն . — Զա-
փաղանցութիւն . — Բացագանչութիւն :

Հ . Զինչ է զերանունութիւն կամ շըր-
ջաբանութիւն :

— Փոխանակ անուան ուրուք այլ ինչ
հասարակ անուն սեփականել : Զոր օրի-
նակ՝ Փողն տարսոնեան, այսինքն Պաւ-
լոս . Ամորդին, այսինքն Յովհաննէս մկրո-
տիչն . Որդին կորատեան, այսինքն Յուգա,
և այն : « Յապազս արմատոյն հանուրց
մարդկութեանս, կամ թէ հաճոյ ումեք
թուեսցի ասել ծայրին » . այսինքն Ազա-
մայ . Խորեն :

Ըստ այսմ է և շրջաբանութիւն . զի զոր
համառօտի սակաւ բառիւք մարթ է առա-
ջի առնել, ճարտասանն բազում բառիւք
առաջի առնէ :

Զոր օրինակ փոխանակ ասելոյ՝ թէ ի-
րբեկ եղել զիշեր, ասէ .

« Մինչ դեռ խաղաղութեանն պատեալ էր
զամենայն, և այն ինչ զիշերն իւրով արա-
գութեամբ ընդմիջէր » . Խմաստ :

Փոխանակ ասելոյ՝ Իրբեկ զարուն եղեւ,
ասէ .

« Իրբեկ 'ի բաց եղաւ ձմեռնային ճիւնախա-
ղաղ սառնամանեաց ցրտութիւն : — Իրբե-
կ գարնանային հարաւահողմն զձմերայնոյն

Ժամանակ ցրտութեանն ՚ի բաց մերկանայր : — Իբրև զրունք գարնայնոյն բացան և աւուրեն ջերուոք զաեղի փոխարեւեցին : — Իբրև ձմեռնային սդաւորութիւնն ՚ի գարնանային բարեխառնութիւնն օդոց յեղանակէր զփոփոխումն » . Յախն կար :

Փոխանակ ասելոց՝ իբրև այդ լինէր, ասէ . « Իբրև լոյսն զգիշերն մերկանայր : — Այն ինչ կամէր առաւոտն ՚ի գիշերոյն մերկանալ : — Այն ինչ վարդադոյն ծայրակարմիր ազեղակն ընդ երկիր ծաւալել կամէր ». Մակար :

Փոխանակ ասելոց՝ Մինչեւ էր մեռեալ, ասէ .

« Մինչ դեռ ջերմ ողիքն ՚ի ծոցոյն չեւ էին թափեալ, և շունչ վախճանին չեւ էր հասեալ : — Մինչ դեռ յուրացն սպարզել ապաստան կայր » . Մակար :

Լամբրոնացի զմիսկ բառս խօսել տեսս ինձ քանի օրինակաւ բացատրէ .

« Պետրոս՝ որ ՚ի կափառնառում մնեալ՝ լըսեմք զի ընդ հոռմայեցւոց լեզուն խրոխտալով արշաւէ . և Փիլիպապոս՝ որ ՚ի Բեթսայիդա գալիքացւոց՝ արաբացւոց բարբառովն զիսօսս իւր յօդէ . Յովհաննէս՝ որ ՚ի Նաղարէթ մնեալ՝ զիարդ կիլիկեցւոց ծայրիւն զմեղ հարցանէ . Թաղէսոն այն տիսմար տեսէք որբան վայելուչ մեծաց Հայոց բառիւրն զբանս իւր յօդէ » .

Հ. Զինչ է չափաղանցութիւն .

— Արաւելուկ կամ նուռազել տարասայշման զգօրութիւն բանեն : Զոր օրինուկ .

« Իբրև զմրրիկ կառք նորա, արագագոյն քան զարծուիս երիւլարք նորա » :

« Գոյ հնար թուել զիվճան հեղեղատի, և զաւազ ծովու, և զիմիս անձրեի, և ոչ զատեղծեալն առ ՚ի քէն նորազիւտ բանս և իրա » . Յախն իմաստ :

« Արգարև խոկ բազում աշխարհանաց արժանի եմք, բազում ողբոց, եթէ ամենայն աշխարհս ձայն առնուցու, զողբս հարկանիցէ, և բարինք և փայտք և ծառք և երեք և թոչունք և ձկունք, և ամեննեին ամենայն տիեզերք համօրէն ՚ի ձայն ազի և ողբորմ աշխարհանաց աշխարիցենն, ոչ ինչ արժանի աշխարհեցն աշխարիցենն » . Ոսկեր :

« Ոչ ինչ եթող չարիս՝ զոր ոչ գործեաց ՚ի կեանս իւր, և ոչ մեաց ՚ի մեծամեծ չարեացն, որ ոչ անցին ընդ նա ՚ի մահուան իւրում » . Եղիշէ :

« Բազում անգամ է տեսանել զգաղանս վայրենիս, զարջ զինձ զգայլ զառիւծ հանգարտացեալս գարմանելով և մարդասէրս, խոկ զբարկասիրան և ոչ երբէք : Բազում անգամ և զծոլ տեսանեմք հանգարտացեալ յայեաց և ցածուցեալ ՚ի վայրենութենէ . խոկ զբարկացողն և ոչ բընաւ : Հանապազ ՚ի գաղանութեան կայ, միշտ ՚ի վայրենութեան, յար ՚ի տամարդութեան, համակ յալէ կոծութեան » . Մարդ :

« Զի եթէ զլիճ մի ծովուց 'ի յարակու-
թիւն գեղց յեղեղեցից, և զդաշտս ասպա-
րիզը բազմօք սահմանեալ 'ի տարածութ,
լայնութեան բարտենի չափեցից, և զլու-
րակս յոգունց անտառաց շամբից եղեգանց
'ի հաստուածս գոյութեան գրչաց կազմե-
ցից, և ոչ զթիւ մի 'ի բարդելոցն անօրէ-
նութեանց զօրեցից ընդ զրով սահմանի
դրաւել ». Նարիկ :

Հ. Զինչ է բացագանջութիւն .

— Բարբառ յայտարար սաստկագոյն
յուզման կրից հոգւոյ . զոր օրինակ .

« Ո՛վ մեծը տուրեառութեան չնորհի եր-
կնայնոցն և երկրայնոցս . սոքա և տուն մար-
մին, և 'ի նոցանէ առին զշողին ». Լամբ :

« Ո՛հ ես մեզայ նըման նըմին,
Եւ յանցանաց մօրն Եւային .

Եւս առաւել քան ըզնոսին

Գըտայ յանցող սուրբ օրինին ». Շնորհ :

« Ո՛վ անքերելի տգիտութեանս և ա-
պառում բարուցս . Եկ Երեմիա ցաւակից
մարդարէ, և վշտակցելով ողբա զբեկումն
իմ և ժողովրդեան իմոյ ». Լամբ :

« Ո՛հ, կարի է առասպել՝ և առասպե-
լաց առասպել ». Խորեն :

« Ո՛վ համբոյր՝ նենգութեան նշան, և
առիթ մահու ». Շար :

Ի սոյն ձեւ սպատկանի և մակագանչու-
թիւնն, որ 'ի վախճան բանին 'ի կիր ար-
կանի, զնոյն ունելով զօրութիւն հանգոյն
բացագանջութեան :

Որպէս Լամբրոնացի յետ ճառելոյ զան-
հաս խորհրդոց տնօրէնութեանցն Քրիս-
տոսի և գալստեան Հոգւոյն, 'ի վերայ
ածէ .

« Խորհուրդ լայն և ընդարձակ . առաւե-
լութիւն գիտութեանն Աստուծոյ տեսանի,
եղբարբ » :

Եւ յաճախ ուրեք 'ի վարս հարանց զէետ
պատմութեան առաքինութեանց նոյսա յա-
րէ պատմիչն .

« Այս է խոնարհութիւն . — Այսպիսի է
Հնագանդութիւն ». և այլն :

ԳԱՍ ԺԳ

Տարակուսութիւն . — Աղերսանկք . — Անէծք :

Հ. Զինչ է տարակուսութիւն .

— Կեղծիք երկուանաց մոտաց ճարտա-
սանին, առ 'ի բերել զչետ զելս տարա-
կուսանացն . զոր օրինակ .

« Հիացեալ զարմանամ մտօր, և ոչ գի-
տեմ ուստի սպարտ և պատշաճ իցէ առնել
սկիզբն ճառիս ». Բարս :

« Եւ արդ ուր արգեօք զգարշապարս ու-
ախն կառուցից, և կամ յոր վստահութիւն
զաշն իմ յառեցից : Զի եթէ 'ի ձեզուն
բարձրութեան երկնի, անտի անձրեւաց
հուրն Սոգոմայ . իսկ եթէ 'ի յատակս յու-
րութեան երկրի, սա երաց զկոկորդն
ըմբռնողական և եկուլ զիտագան բանա-
ց* »

կաւն Արիբոնի : Եթէ ՚ի համատարած օգոյն պարզութիւն , այն եղեւ եզիատացւոցն խաւար չօշափելի : Այլ դու ամենազօր արարիչ բնաւից ; և ինձ ողորմեա կրկին զըթութեամբ » . Նարեկ :

« Զի թէ պահանջէ յինէն հայրս հոգւոց և դուք ընդ նմին գործունեացր բարեաց՝ յանձն առից , զարհուրիմ երկիւղիւն նայեցեալ յիմն տկարութիւն , և ՚ի մեծի այսր աստիճանի բարձրութիւն , մանաւանդ ՚ի չար և յանման բարեաց ժամանակիս : Իսկ եթէ յասցանէ և որ նման սոցին զանգիտեալ ընդդիմանամ կոչողիդ հրամանի , երկնչիմ գործեալ յանհնազանդութեան զատաստանէ : Եւ այսոցիկ տարակուտանաց ելք ոչ այլ ուստիք , բայց եթէ յաստուածահանոյ ազօթից ձերոց » . Շերու :

« Ոչ զիտեմ ուստի զայս օրէնս գտեալ մեր . ՚ի նախնեացն ոչ ունիմք , զի ահացուցաւ վերագոյն . և յայլ ազգս ոչ անսանիմք . և նորս առաքեալ ոչ յայնեցաւ մեզ , որ խախտեաց զառաքերցն սահման , Յայտ է թէ ունիմք յանիմաստութենէ և յարհամարհութենէ օրինացն Աստուծոյ » . Լամբ :

« Եւ արդ ուստի հաւանեցուցից դձեզ , ոչ զիտեմ . զայն ասացից՝ թէ որդն նոցա ոչ զախճանի և հուրն ոչ շիջանի , թէ ըշմիւն որասիցէ թէ երթիցեն ՚ի հուրն յաւիտենից : Եթէ զմեծատունն ածեալ կացուցից առաջի , և տակաւին ասիցէք թէ

վասն սպառնալիաց ասացեալ է : Եւ արդ ուստի հաւանեցուցից դձեզ : Սատանայի միտք են այդ , անօդուտ չնորհ չնորհ՝ որ ամենելին ծոյս կազմէ . և արդ ուստի բառնայցեմք զայն ՚ի միջոյ . որչափ և ասիցեմք ՚ի գրոց , ամէք՝ վասն սպառնալիաց է : Այլ զայլոց զհանդերձելոցն և ՚ի գրուս ելելոցն ոչ ես : Լուարուք զջրհեղեղէն . մի թէ այն վասն սպառնալիաց ինչ ասացաւ , և չեղն , և չել ՚ի գլուխ » . Ոսկեր :

Հ . Զինչ են աղերսանք .

— Պազատանք խառն ընդ պատճառաւ բանութիւնս առ ՚ի հաւանեցուցանել :

Սղգողագոյն է ձես , և յաճախ սովորութիւնն է ՚ի կիր առնուլ ՚ի վերջաբանութիւնս : Զոր օրինակ Լամբրոնացի ձեւացուցանէ աղերս ՚ի գիմաց Որդւոյ առ Հոգի . « Այսուհետեւ քեզ եկեալ եհաս ժամանակ՝ գործոյ , ունի վառակից իմ Հոգի . պարափս և զրոյդ մարդաբարութիւն ցուցանել ՚ի յերկրի . այսուհետեւ քեզ ալպատան առնեմ զանուն աստուածութեանս մեր յարգեւ առ մարդիկ : Հայր իմ ներեաց և եթող զարարտն՝ որով զուն խափանեցար ՚ի հեղոյ առ նոսա՝ մարմնոյ իմ պատարագաւն . սա առ զիս առհաւատաշեայ ՚ի նոցանէ , և տայ նոցա զքեզ խաղաղութիւնն : Է՞ջ այժմիկ , սիրոյ աղբիւր , սիրով առ նոսա , և միսիթարեա զորս ՚ի պանդիտութեան վայրն նժեհն և անցաւոր կենօք տառապլին : Քեզ տամ զնոսա , քեզ յանձն

առնեմ զնոսա. զբեղ խոստացայ նոցա,
և այժմ՝ի քեզ ամրափակեմ զնոսա զա-
մենսեան»:

« Աղաչեմ զամենսեան, և զոտս եղ-
բարցդ սրբոց արտասուօք սիրոյն համբու-
րեմ. ներեցէք իմոյ անդգամութեանս, և
իբր վլուակից ծառայակից ընկալարուք
դիս, և զձեղ ընկալցի Յիսուս Քրիստոս
տէր մեր». լամբ:

Հ. Զինչ Են անէծք.

— Ձե մաղթելց այլոց կամ անձին չա-
րիս առ զայրացման. զոր օրինակ.

« Անէծք այնպիսի բանից ». Ուկեր:

« Կորիցէ օրն՝ յորում ես ծնայ, և գի-
շերն՝ յորում ասացին թէ ահա արու: Խա-
ւարեսցի զիշերն այն, և մի խնդրեսցէ
զնա Տէր՝ի վերուստ: Մի եկեսցէ՝ի վե-
րայ նորա լոյս. ընկալցի զնա խաւար և
ստուերք մահու. եկեսցէ՝ի վերայ նորա
մէզ: Անիծեալ լիցի օրն այն և գիշերն,
և տարցի զնա խաւար. մի եղիցի յա-
ւուրս տարւոյ, և մի թուեսցի յաւուրս ամ-
սոց: Այլ զիշերն այն եղիցի՝ի ցաւս, և
մի եկեսցէ՝ի վերայ նորա ուրախութիւն
և մի ցնծութիւն: Խաւարեսցին աստեղք
զիշերոյն այնորիկ. սպասեսցէ և՝ի լոյս
մի եկեսցէ, և մի տեսցէ զարուսեակն ծա-
գեալ »: Յոր:

« Այլ իմ մեսցի և կորիցէ անուն և յի-
շատակ յերեսաց երկրէ, և խաւարեսցին
բիբր աշացս, և մի տեսցէն զլոյս. և քա-

կեսցին ականջքա՞ւ և համբ եղիցի հովեալ
բերանս, և լեզու իմ՝ի քիմս իմ՝կցեսցի,
և մէզ և մառախուզ մեղաց և ստուերք
մահու պատեսցէ զբոլոր անձնս, եթէ ինչ
շարժեցաց կամ զգացայց տեսանել կամ
լսել կամ խօսել զարդարացն զանիրաւու-
թիւն... Փաւ լիցի ինձ ձեռս ամբառնալ
յօծեալն Աստուծոյ... ապա թէ ոչ, բաց-
ցէ երկիր զբերան իւր, և կլցէ զիս կորըս-
տեամբ ընդ բանակն Աբիրոնի, և կենդա-
նւոյն իջցեմ՝ի գտուս ». Յովի. կար:

« Վասն այսորիկ Աստուծած՝ի սպառ
կործանեսցէ զբեղ յաւիտեան.
Եւ խլյեսցէ զարմատըս քո,
Յերկրէ հանցէ կենդանական: ...
Սրդ քեզ ելցէ կարճ՝ի յօրեր,
Եւ կայենին հասցէ երեր:
ի գառնութիւն գարձյին տարերք,
Զըրհէ զեղին ելցեն զետերք:
Աեւա ամսն մըթին կարկըտարեր,
Զբեղ արասցէ անալըտղաբեր.
Սորոմացւոց հուր ծըծըմբեր
իջցէ՝ի գլուխդ արիւնակեր: ...
Սրդ՝ի զըժոխս իջցես՝ի խոր,
Գեղ անկողին մէցք և ցեցեր.
Եւ նոյն հրեշտակըն մահաբեր
Սըրով հատցէ զբեղ՝ի յազդեր: ...
Տուն քո լիցի անհետ աւեր,
Եւ գու գերի աղջով երեր ». Շնորհ:

ԴԱՍԱՀԱՅԱԿ

Հարցումն. — Հաղորդակցութիւն. — Լոռութիւն. — Շնորհումն:

Հ. ԶԲՆՀ է Հարցումն.

— Ձե Հարցական, ոչ առ ՚ի խնդրել պլուծումն տարակուսանաց՝ այլ առ ՚ի սովորել գունդնդիրս, և առ ՚ի սաստկագոյն բացպարել զբանն, զոր օրինակ.

« Ընդէ՞ր, աշս ունելով և ականջս, ոչ տեսանեմք և ոչ լսեմք: Փանի՞ ասպարէզ է ՚ի բերանայ մինչև ցունկն, զի զբարբառ սորին ոչ ներեմք ունկանն լսել և տեղի տալ: Այսքան էր խաւարեցուցաք զալայծառութիւն եկեղեցւոյ վասն մնոտի յուսոյ»: Լամբ:

« Մի՞ թէ որ տնկեաց զունկն, ինքն ոչ լուիցէ: — Ո՞վ իցէ նմանքեղ յաստուածու, տէր. կամ ով նմանիցի քեզ, փառաւորեալդ ՚ի սուրբս»: Ուր պարզաբար պարտէր առել, Որ տնկեաց զունկն, ինքն ևս լսիցէ: Ոչ ոք է նման քեզ յաստուածու, տէր. և ոչ ոք նմանիցի քեզ, փառաւորեալդ ՚ի սուրբս:

Այսպէս և Ոսկերեան փոխանակ առելոյ թէ այլ ոչ ևս կարեմ համբերել, հզօրագոյն յոյժ գործէ զբանն հարցուածոյ պայմանաւ առելով. « Մինչև ցայդ վայր համբերիցէմ»:

Մերթ ևս հարցմանն առընթեր դնի պատասխանին. վոր օրինակ.

« Իսկ արդ չա՞ր արժան էր ասել թագաւորին. քաւ, ևս ոչ ասեմ. այլ խրատ ՚ի գործ արկեալ զայլս ուսուցանեմ»: Եղիշէ:

« Զի՞նչ պառուղ յայնժամ ետան աշխարհի. զի՞նչ այլ, բայց եթէ երկիրս երկին եղիւ, և փառքն որ ՚ի բարձունս էր Աստուծոյ և յերկիրս տարածեցաւ»: Լամբ:

« Զի՞նչ ծանր հրաման առաք առնել. զսա՞րս հատանել անցանել, թէ ընդ օդութաշէլ թէ ընդ բնութիւն համատարած ծոլուն ցամաքաթես սլանով, և ոչ երբէր. այլ այնպէս զիւրին է առաքինութիւն, մինչև այնպիսի զործոյ մի ինչ կարուտանալ այլ միայն ոգւոյն և զթոյ: Զո՞ր գործի ունեին առաքեալքն որ զայնպիսի ուղղութիւնս արարին. ոչ միաձորձ և բոկք շրջէին, և ամենեցուն յաղթեցին: Զի՞նչ գժուարին ՚ի հրամանաց իցէ. Մի՞, ասէ, առներ զոր թշնամի. մի ատենար զոր. մի չար զումերէ խօսիր: Ասցին հակառակը են գժուարինք, և ոչ սորա».

Ոսկեր:

Ընդ սովորմբ բոլանդակի և ձեն հաղորդակիցութեան, որով ճարտարախօսն վրատաշցեալ ՚ի դատիւր՝ հարցանէ զունկըն զիւրս. զոր օրինակ.

« Արդ աղէ ասա, ո՞ր է արժանահաւտաւալի. բանքն եթէ արդիւնքն. ո՞չ ապարէն արդիւնքն. զի բանք չվճարեն ինչ ՚ի հա-

ւատոց սակա, բանիւ դՔիրխատոսին կրել
զանուն, և գործով զատանային, զի մի
և լի է այնպիսին անհաւատութեամբ».

Սարգ:

«Որդ աղէ ասա, եթէ յանկարծ կոչ
վինդիշի ՚իքաղաք ուրեք արքունի, որք ոչ
գրաստու ինչ կարօտ վինդիշին, ոչ պատա-
նեաց, ոչ կօշկաց, և ոչ այլ ինչ կայի և
կաղմածոյ, այլ զհացիկն միայն և զջուր
յաղերացն բաւական համարիցին . և
այլքն ասիցեն՝ եթէ ոչ կառս կաղմիցէք,
և ոչ կակուզ անկողինս պատրաստիցէք,
չկարեմք երթալ, եթէ ոչ բազում սպա-
սաւորս ունդիցիմք, և ստէպ հանդչել հա-
սանդիցէ, և նժոյդ ևս և կարձութեան վանս
և այլ ինչ բազում պէտս, չկարեմք եր-
թալ. և ընդ ոյս արքան է զարմանալ, ընդ
նոսա՞թէ ընդ սոսա, յայտ է թէ ընդ սո-
սա, որք ոչ ինչ իւիք ումեք բուռն վինդն:
Կոյնպէս և յաշխարհիս ճանապարհի ո-
մանց բազում պէտք են, և ոմանց չափ
ինչ. որպէս զի աղքատութեամբն, եթէ
պարտ ինչ էր, ՚ի գէպ էր մեծամտել».

Ասկէր:

Հ. Զինչ է լոռութիւն.

— Լուելովն ինչ աղդողագոյն տալ իմա-
նալ զայն, զոր օրինակ.

«Զի՞մի մի թուիցիմք. այլ զամենայն անար-
ժանս յառաջ մատուցանէր, և զամենայն
արժանաւորս յետս տանէր».

Եղիշէ:

«Որ մեղանչէ, օրինազսնց է. իսկ որ

զօրէնս լուծանէ, զի՞նչ անուռն է նորա. ևս
պատկառիմ ասել, մանաւանդ թէ երկըն-
չիմ. զի մի աղեկէզ բժշկութեամբս վասն
՚ի խոր հարմանս զդեղ բանիս երեւցացց
թշնամի».

Լամբ:

«Զորս վասն Կառնոսի և Արամազդայ
պատմութիւնք իցեն ամաչեմ տաել. ոչ
սակս նոցա՞որ արքանի են ամենայն պար-
սաւանաց, այլ խնայեմ ՚ի լեզու իմ, զի
մի ժանտասցի յիշատակօք պղծութեան
նոցա».

Պարգ:

«Ո՛վ թշուառութեան, և արտասուաց
արժանի մոլութեանս . վասն այսորիկ և
քահանայք երովլ, ՚ի դպրաց կարգ թերեսս
կարողանամք մնել, և եակակապոսք բը-
նաւ և ոչ ճաշկեալ զբաղցրութիւն բա-
րեկարութեանս, զոր բովանդակին ասել
հեղդանամք, բաւականացեալ ՚ի լինելս ան-
ձամբ անձին կշտամբէչ».

Լամբ:

«Քահանայք քարոզք բանին
Եւ սպասաւորք սուրբ խորհըրդին
Անխըրտաբար վարուք կէին,
Զոր չէ տաել պարտ գործէին».

Շնորհ:

Ըստ այսի է և կեղծեօք զանց առնելոյ
դրանիւք իւիք ասելն զայն. զոր օրինակ.
«Թողից ասել զես գմնդակագոյնսն այսոր
ժամանակի եակիսկոպոսաց զործ. զի և
բազում անարդանաց և տուժից տանին
յայլագգեաց, ոչ յաղսդս աստուածային
օրինացն այլ վասն սնոտի փառաց յուսոյ».

Զարտուղմն՝ որ նախ քան զայս ՚ի միա-

շնութեանն և մինչդեռ ՚ի տաճարին խաղաղութեան էաք՝ տայր աշխարհ, ձեզ թողումք իմաստասիրել քան թէ բանիւ զանձառն ճառել ». Ենորի:

Հ. Զի՞նչ է շնորհումն.

— Շնորհել անիրաւ ինչ հակառակորդին, վստահացեալ յանձնն իրաւունս: Զոր օրինակ տանէ առաքեալն.

« Խսկ արդ ասիցես. ոստքն փշրեցան, զի ևս պատուաստեցայց: Բարւոք է. անհաւատութեամբն իշրեցան, և զու հաւատովք հաստատեցար. մի հպարտանար, այլ երկիր. զի եթէ Աստուած ՚ի բուն ոստան ոչ խնայեաց, գուցէ երբէք և ՚ի քեզ ոչ խնայեսցէ »:

« Բայց համարեաց՝ թէ ՚ի հաւատոցն թիւրեցան. ՚ի կարգացն ոյր աղազաւ. զի այլ է հաւատոյն բան, և այլ է աւանդութիւն կրօնից: — Դարձեալ թիւր՝ մի ազգն կամ երկուն. երեք ազգ քրիստոնէցց, և որ ընդ նորօք բաղմապահիկ ազինք հաստատուն աշխարհօք և աթոռութիւն՝ զիսրդ վրդովեցան ՚ի ծմբարտութենէ, և առ յեղյեղեալ և տատանեալ ազգս մեր նոյն միայն մնաց հաստատուն ». Լամբ:

« Գեղեցիկ դատիմք ՚ի ձէնց, եղբարք. քանզի գրեալ է, մի փոխեցես զսահմանս զրո եղին հարքն քո. և որ քակէ զցանկ, հարցէ զնա օձ: Բայց ասա, զո՞րս խոստավանիս զու հարս քո. եթէ զառաքեալն և զհայրապետոն որբ աստուա-

ծաշունչ բանիւր գեռ ևս կենդանի են ՚ի միջի մերում, և առ ամենայն ջշմարտութիւն առաջնորդեն, և ես եմ նոցա ջատագով, և առ ՚ի նոցանէ վարժեալ և աշակերտեալ: Ապա թէ այլս ոմանս, որոց ոչ անուն երեխ ՚ի միջի մերում, և ոչ արձանագրութիւն բանից՝ վկայ իւրեանց ուղղութեանն, զիմաստասիրութիւնն պարտիմք յայսմ վայրի ՚ի գործ արկանել, և ընարութեամբ ճանաչել, մի գուցէ լիցին մեզ մոլորեցուցիչը ՚ի սրբոցն հետոց, որպէս ծերը խարայէլի ՚ի Մովսիսէ ». Լամբ:

Ի սոյն պատկանի ձև վստահութեան, որով ճարտարախօսն աներկիւր ձայն տայ հակառակորդին, որպէս Շնորհալի առժպիրչն.

« Ծանիր և զայս, զի զիս թէ և ամենայն լեզուք գովեսցեն յայն բարին որ ոչ է առիս, հոգմոց հնչմունք վարկանիմ. և թէ պարսւաէ ոք և գատի յայն ինչ որ ՚ի մըտացս խղճէ ոչ գատիմ, ոչ փայթ ինչ առնեմ. խսկ եթէ յորոց ունիմ և ասէ ոք, ոչ վասն ասելցյն, այլ վասն ունելցյն վշտանամ »:

« Յոր ինչ ոք համարձակիցի, անզգամութեամբ ասեմ, համարձակիմ և ես: Երբ բացեցիք իցեն, և ես. խարայելացիք իցեն, և ես. զաւակ Աքրահամն իցեն, և ես. պաշտօնեայք Փրիստոսի իցեն, յանդզնազոյնս ասացից թէ առաւել ևս ես »:

ԴԱԱ ԺԵ

Բացադարձութիւն. — Դիմառնութիւն,
... Նկարագրութիւն:

Հ. Զինչ է բացադարձութիւն.

— Խօսք առ անձն բացակայ կամ վախ-
ճանեալ, և կամ առ անշունչ խել և առ
անզգայ իրս. զըր օրինակ.

« Լուր երկին, և ունին զիր երկիր, զի
տէր խօսեցաւ»:

« Զարթիր Երեմաս զարթիր, և ողբա
հանդերձ մարդարէութեամբ զոր ինչ թը-
շուառացաքս և զոր ինչ թշուառանալոցս
եմք. զուշակեա զյառնել հովուացն տղի-
տաց, որպէս երբեմն Զաքարիա յիսրայե-
լին» . Խորին:

Այսու ձեռվլ Նզիչ վարդապետ՝ ի կար-
գի պատմութեանն յանկարծ խօսել սկսա-
նի առ թագաւորն Պարսից.

« Զի կոծիս, զի մրցիս, զի այրիս, զի բոր-
բորիս, զի շիջանիս, զի կոչես՝ ի խորհուրդ
զայնոսիկ՝ որ զոզիսն ձեր՝ ի ձենչ քաղեալ
հանեալ է զանապականդ յապականու-
թիւն, և զապականելի մարմինդ զիշաքարչ
արարեալ՝ իբրև զազիր մեռելոտի՝ ի բաց
ընկեցեալ Ապաքէն զայդ կամիս, զի ծած-
կես զիսորհուրդ ամբարշտութեան. տես-
ջիր յորժամ յայտնեսցի, ապա զիտասցես
զելս կատարածի զորա» :

Հ. Զինչ է զիմանութիւն.

— Նոյնաէս բացակայ կամ վախճանեալ
անձանց, և կամ անշունչ և անդգոյ ի-
րաց՝ մարդկօրէն խօսք. զոր օրինակ.

« Յորդանան լրւեալ վախստական դառ-
նայր» .

Վըտակ առ վըտակ պատգամաւոր լի-
նէր.

Գետ, մի զարհուրիր, քո արարիչն եմ
ես.

Եկեալ մըկըրտիմ, և լըւանամ զմեղս» .
Տաղ:

Ըստ այսմ և Շնորհալի ձեացուցանէ՝ ի
դիմաց Եղեսիոյ առ Հռոմ քաղաք զգիմառ-
նութիւնս.

« Եւ գու Հըռոմ, մայր քաղաքաց
գերազայծառ և պատուելի,

Մեծին աթոռըդ. Պետրոսի

Առաքելոց գըլիսաւորի,

Եկեղեցիդ անշարժելի

Ի կեփայեան շինեալ վիմի.

Դրանց զըժոմոց անցազթելի

Եւ ինքե երկնիցըն բացողի.

Ահա առ քեզ բանըս խօսիմ

Վիճակ ւաթոռըս թագէի.

Լուր ՚ի հեռուստ իմոյս ձայնի,

Ահր ողբակից ինձ յայս վայրի» :

Օրինակը գեղեցիկը յԵղեկէ.

« Այսաէս ասէ տէր տէր ցՏիւրոս... ամե-
նայն իշխանք ազգաց ծովուզ ... յոգւոց
հանցին ՚ի վերայ քո, ողըս առցին ՚ի վե-

բայ քո և ասացեն. զիա՞րդ կորեար քականցար 'ի մէջ ծովու քաղաքդ հոյակառ, որ եղեր զօրացեալ 'ի մէջ ծովու գու. և բնակիչը քո, որ զարհութեցուցանէիր զամենայն բնակիչս՝ քո: — Ի ձայնէ բարբառոյ քո նաւասիլարք քո երկիւզիւ զարհութեցին... Կոծ դառնութեան առցեն որ զիք նոցա 'ի վերայ քո, ոզքս առցեն և ոզքասցին. Ով՛ էր իրին դժիւրոս՝ որ լուսաց զաղարեաց 'ի մէջ ծովու »:

Զգուշութեամբ պարտ է զձես զայս 'ի կիր արկանել, և 'ի սաստկութեան և եթիրից, և մի յերկարաձգել յոյժ զայն:

Դարձեալ և 'ի մեծամեծ իրս և եթ վարել նովաւ և ոչ 'ի չնչինս, զոր օրինակ ոչ 'ի գէպ խօսել դիմառնաբար առ հանդերձ ու րութ կամ առ ոտն:

Դիմառնութիւն է և զործս ինչ կամ կիրս տալ անշունչ և անզգայ իրաց. որպէս Մամրէտ տայ մահու.

« Զաեզի կալաւ ջիսուս աւուրս երկուս, թոյլ և տաւազակին մտանել 'ի տուն սիրելոյն. և մոււտ ապականագործն, և արար խոռվութիւն ըստ կամաց իւրոց. գոռողացաւ հալարտացաւ մահ, և կատարեաց զկամս իւրոյ չարութեանն»:

« Գողալով սարսեցին դժոխք, տեսանելով զթագաւորն անմահ » . Եարւ

Հ. Զի՞նչ է նկարագրութիւն.

— Յայտ յանդիման առաջի աչածց կացուցանել զիրն ստորագրութեամբ. վասն

որոյ պարտէ առաջի առնել զիւրաքանչիւր մասունս իրին, զյարակից հանգամանս, զպատճառում՝ այլովքն հանդերձ. զոր օրինակ.

« Զտեսանիցես զիրեսս պատերազմողացն, զիա՞րդ տրտմագին 'ի խոնարհ կալսին. յօնքն ահազինք և զէմք խոժոռք. աչք արիւնախառն և սիրտ 'ի թնդով 'ի վիր վազեն և զկուրծս բազլիսն՝ ժողովեալք զումարեալք համօրէն, զահի հարեալք 'ի մի վայր ժողովիալք և ճակատեալք բազում կարգօք, առաւել յօրինուածովք ». Ասկեր:

« Քաղցր է ինձ ասել և յազագն գեղեցիկ գաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնառով յօրինուածովք: Քանդի զմիջոց հովոնին մեծի լուս մարդկութեամբք և պայծառ շնուռածովք լուսաւոր որսիչս ական ըիթ. իսկ չուրջ զմարդկութեամբն ծաղկոցաց և հօտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զրբովն զայլ բոլորակութիւն տկան: Իսկ զբազմութիւն այցեստանւոյ իրը զարտեանաց խիտ և զեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն գիք կարակնածե զեղաւոր կուսից յօնից զարեանդաց համեմատ. իսկ 'ի հարաւոյ հարթութիւն դաշտաց պարզութեան գեղեցկութիւն. իսկ գետն բերանացեալ դարաւանց ափանց՝ զերկթերթիւն նշանակէ շըրթունս: Եւ այսպիսի զեղեցկութեան զիր, անըթթելի իմն գողցես 'ի բարձրաւանդակ

թաղաւորանիստն զհայեցուածմն ունի»։
Խորեն։

« Ծիկնայք փափկասունք չայոց աշխարհին, որ գրգեալք և գդուեալք էին յիւրաքանչիւր պաստեռունս և ՚ի գահաւուրակո, հանասաղղ բոկ և հետի երթային ՚ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն։ Որ ՚ի մանկութենէ իրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամծովք էրէոց, խոտաբուտ կենօք իրբել ըղվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամք, և ոչ յիշէին ամենենին զուգուական խորտիկան։ Մեացեալ ներկան մորթք մարմնոց նոցա. վասն զի ցերեկ արեակեզք էին և զամենայն գիշերս գետնաբերեակք։ Մազմուսք էին մշտնջենաւոր մըրմունջք ՚ի բերանս նոցա, և միթիթառութիւն կատարեալք՝ ընթերցուածք մարզարէիցն։ Միաբանեցին երկու երկու իրբեամոլք հաւասնք և հաւասարք՝ ուղիղ տանելով զակոնն արքայութեանն, զի առանց վրիպելոյ հասցեն ՚ի նաւահանգիստն խաղութեան։» Եղիշ։

Սովոր ձեռովք գեղեցիկ յոյժ նկարագրէ Ռոկերերան զընակութիւն սրբոց միայնակեցացն։

« Եթէ գժուարին ինչ թուիցի քեզ այս, և կ երթիցուք յայն տաղաւարս. զի արդեամբք իսկ ուսանիցիս զդիկութիւն։ Խուզմ և եթ շինսցին. և եթէ չուել հասանիցէ, այն-

պէս թողուն և չուեն, որպէս զօրականիքն ՚ի խաղաղութեան դրանակն թողուցուն և դնայցեն. քանզի այնպէս բանակեալ են. մանաւանդ թէ ևս աւելի ցանկովի տեսիլ տեսանել իցէ։ Քանզի և ցանկալի խոկ տեսիլ է տեսանել զանապատն լի վանականօք, վարկապարազի խորանօք խիտ առ խիտ թէ ՚ի թե հարեալ ճիզն ՚ի ճիզն զապարմանց թեւակս խառնեալ քան ըղզորականացն բանակի. ուր սրահակը ձգիցին, և զտէզս և զգեղարդունս կանգնեսցն, և զբնիցն գեղարդեանցն զաղեղնակապարման, պղնձապատու զգըլուխն առնիցեն, և մեծապայծառ իմն կմբեայ վահանացն փայլիցեն, և կողինաւորք և զրահամատոր շողայցեն, թագաւորին սպաս առնիցեն ՚ի դաշտի ուրեք ՚ի հարթ և յոզորկ վայրի, և ճաշք զճաշն մըղիցեն, և ընթրիք զընթրեօք անցանիցեն, գուսանք երգիցեն, փողարք զճայն փողոցն նուազիցեն. սակայն և այնպէս չիցէ զեղեցիկ տեսիլն քան զայն, զորմէ այժմ ևս պատմում։ Եթէ երթիցուք յանուարատն, և տեսանեմք զբիստոսի զօրականացն զիսորանս, ոչ սրահակս ձգեալս տեսանեմք անդ, և ոչ շողունս գեղարդանց, և ոչ խորանս ոսկեզօծս արքունիս, այլ այնպիսի ինչ եթէ ոք յերկրի, և առաւել և այնչափ երկայնագոյն այլ երկիր զօրծէր, և ՚ի վերաց բաղում երկինս ձգեք, ոչ ապարէն նար իմն և չքնաղ տեսիլ ցաւցա- կ

նէր. նոյնպէս և անդէ տեսանել, զէ ինչ
ընդհատ յերկնից բնակութիւնն նոցա.
քանդի և առ ոնսա հրեշտակը իջանեն և
հրեշտակապետացն տէրն. Զիթէ առ Ար-
րահամ եկն, որ կին ունէր և որդիս սնու-
ցանէր, քանդի ետես եթէ հրերասէր է,
յորժամ ևս առաւել առաքինութիւն ու-
րեք գտանիցէ, զմարդն աղատեալ յեր-
կրէ, և 'ի մարմինի զմարմինն արհամար-
հեալ, ո՞չչափ ևս առաւել և անդ բնա-
կեսցէ, և պար առեալ շրջիցին 'ի միջի նո-
ցա գունդք հրեշտակաց. քանդի և նորա
այնպէս կազմեցին զանձինս, որպէս և
նմա հաճոյ է»:

Ընդ սովին ձեռվլ բովանդակին և նկա-
րագրութիւն բարուց կամ զիմաց, և կամ
խառն երկոցունցն նկարագիր. զոր օրի-
նակ նկարագրէ Ցովշաննէս կաթողիկոս
գմէնն Աշոտ.

« Քաջահասակ էր նա և անձնեայ և թիկ-
նաւէտ և զուարթերես և մրայօն, նկարէն
իմն և նիշ արեամ յաշս ունելով որպէս
զյակինտ կարմիր 'ի մէջ մարգարտի ծա-
գեալ, և վայելչացեալ գեղեցկութեանն
այեօք, մեծիմաստ և քաղցրաբան, և առ
կերակուրս խրախնանաց ոչ իննդացեալ
նորա ընդ լաւագոյնսն, և ոչ արհամար-
հեալ զնուաստագոյնսն... Միանդամայն
իսկ ասիլ, եթէ որ ինչ մարդկութեանս է
պիտանի ոչ ինչ կասեցուցանէր»:

Նոյնպէս և Սարդիս վարդապետ զբար-
կացողն նկարագրէ.

«Յօնիքն անկեալք և խոնարհեալք, երեսը
դեղինք և ապականի ալք, չրթունքն սեաւք
և երթացեալք, ունչը երկայն և սուր,
ձայն խոշը և թիւր, աչք հրատեսակք,
բանք ընդդիմազրեալք և անախորժելիք,
և բոլորովին դժնեաց և ահարկու տեսո-
ւաց»:

ԴԱՍ ԺԶ

Հակագրութեան. — Կախումն :

Հ. Զինչ է հակագրութիւն.

— Զե բանի, յորում բառք բառից կամ
իմաստը իմաստից ներհականք յօրինին.
զոր օրինակ.

«Վ ասն առողջութեան զապիկարն կար-
գայ, և վասն կենաց զմեռեալն աղաչէ, և
վասն 'ի թիկունս հասանեայ տարակուսե-
լոյն մազթէ. և վասն ճանապարհորդու-
թեան զայն որ և զոտն յոտանէ չկարէ
փոխել, և վասն ընչաւետութեան և գոր-
ծոց կորովութեան յանարդասաւորէն ձե-
ռօք զարգասաւորութիւն ինդրէ». Խմաս :

«Որդ կրիցն լիցուք մի աղճատիչք, այլ
ցաւակիցք. մի եպերիչք, այլ առողջացու-
ցիչք. մի կակծեցուցիչք, մի երդիծամիչք,
այլ միմիթարիչք». Լամբ :

Վայելուչ է ձևս սցո մանաւանդ 'ի կըշ-
տամրութեան. այսպէս հաւատացեալք
զնախարարս Հայոց տկարացեալս 'ի հա-
ւատոց կշտամբէին.

«Վարդապետք էիք առարկելական քարոզութեանցն, արդաշակերս լինիցիք մոլար խարէութեանն. ուսուցիչը էիք ճշմարտութեանն, արդ ուսուցանէք զարտիք խարէութիւն մոգաց. քարոզք էիք արարչական գօրութեանցն, արդ զարտերս աստուածս խոստովանիք. յանդիմանիչը էիք ստութեան, արդ և քան զառւան ստագոյնք լինիցիք. 'Ի հուր և 'Ի հոգի մկըրտեալք, արդ 'ի մոխիք և յաճիւն թափաւիցիք. կենդանի մարմնով և անմահ արեամբ էիք մնեալ, արդ 'ի ճենձեր զոհից և 'ի շարաւս աղտօղիս մրճոտիցիք. տաճար էիք Հոգւոյն սրբոյ, արդ զաշարան դիւաց լինիցիք. քրիստոսազգեացք էիք 'ի մանկութենէ, արդ մերկացիալք 'ի փառացն դիւարար արեգական կաթաւիցէք. ժառանգ էիք արքայութեան, արդ անձամբ զեկենին». Եղիշէ:

Սովին հակաղրութեան ձեռվ բաղդատէ Ռակերերան զվարս այնր ժամանակի որերոյն ընդ սրբոց միայնակեցացն.

«Մեր յորանչիցիք, իորդայցենք, այսր անդր յեղյեղիցիք, մինչ նորա զգիշերն ամենայն ընդ օրհնութիւնսն հանիցեն: Եւ յորժոմ այդ լինիցի, հանգչին փոքր մի. և յորժամ ընդ գործ խառնիցիք, նորա խուն քնովն յագեցեալք և հանգուցեալք, դարձեալ միսանգամ յօրհնութիւնսն կալմիցին: Խակ մեք չե այդ եղեալ իւրա-

քանչիւր զընկեր կոչեմք համարս պահանչել, և էիսր ընդ հրապարակս ճեմ առեալ շողայցենք: Խակ նորա դարձեալ իբրեւ զառաւօտին զաղօթսն և զօրհնութիւնս կատարեն, ապա յընթերցուածս զրոց շըրջիցին: Վինչ մեք ամենեքին ճաշիցեմք, խազայցիք, ծիծագիցեմք, ուսուցանիցեմք զորովայնս, որկորստութեամբ շուայտիցեմք, մցոյցեմք, նորա օրհնութեամբքն զիայլիցին: Զիք ժամ սեղանոց և ոչ խորտկաց յառաջ բերելոց. և դարձեալ յետ ճաշոց 'ի նոյն ոճ մասնիցեն, կան պատկան օրհնութեանցն: Աշխարհականք և ցերեկն ննջին. նորա ցանկ արթունք և պատրաստք 'ի պաշտամանն. արդարեւ որդիք լուսոց են և որդիք տունջեան»:

Հ. Զինչ է ձե կախման:

— Տարտամեալ ունել զոգիս ունկընդրաց՝ ակնկալեալ 'ի լուր կարենոր ինչ իրաց:

Սովին ձեռվ յօժարամիսս առնէ ճարտասանն զունկնդիրս, որով ազգողագոյն մասնեն բանք 'ի լոելիս նոցա. զոր օրինակ. «Կամիմ և նոր ինչ ասել. այլ մի ինչ կարի զարմանայցէք կամ խոռվիցիք: Եւ զի՞նչ իցէ: Պատարագն նոյն է. եթէ չափ և գոյզն ոք մատուցանիցէ, և եթէ Պաւզոս և Պետրոս գլխովին սակայն նոյն է. զոր և Քրիստոս իտ աշակերտացն, ըգնոյն այժմ՝ քահանայքս կատարեն, և չէ ինչ ընդհատ յայնմանէ». Բակեր:

Ճարտար ՚ի կիր արկանէ զձես զայս
Յովսեալոս ՚ի պատմել զիրս կնոջն, որ
վասն սովոյն զօրդին իւր խորովեաց և ե-
կեր. զի յետ պատմելոյ թէ ո՞րպէս յանչնա-
րին սովոյն զկաշիս վահանացն և զիսոտ
ցամաք ճարակէին ջրեայք, յաւելու ժապա.
« Բայց զի՞նչ պիտոյ է մեզ ոչարութիւն
սովոյն յանշոյնչ կերակրոցն ցուցանել, զի
ունիմ ես ցուցանել գործ մի, որ նման նմա
ոչ ՚ի մէջ Յունաց և ոչ բարբարոսաց
պատմի եթէ զործեցաւ. զի գողումն և
սոսկումն է պատմել, և լալեաց զժուռա-
րին է հաւատալ: Արդ կամակար անիոյթ
առնէի ես անցանել զայսու թշուառու-
թիամբ, զի մի ստել հրեեցայց յետա-
մացացն, եթէ ոչ բազում վկաց ունէի. և
թերես չնորհս ինչ գուզնաբեայընդ որդիս
ժողովրդեան իմց առնէի ես, ինայելով
զայն ինչ զոր արդեամբն պաշտեցաւ»:
Եւ ապա յարէ զպատմութիւնն:

Կրկին օրինակը գեղեցիկը դարձեալ
յիսկերանէ.
« Եւ ո՞ւր է զի չէ ախտն այն (խեղկատա-
կութեան.) արդ և յեկեղեցի ևս եմուտ,
և ՚ի զիրս ևս մեսնեցաւ. Վասցից ինչ, զի
ցուցից զչարեացն առաւելութիւն. ամա-
չեմ, բայց սակայն ասացից. քանզի կա-
միմ ցուցանել թէ ո՞րչափ տարածեցան չա-
րիքն, զի մի կարծիցիմ եթէ վասն չնչին
իրաց սուտ խօսիցիմ, այլ զի գոնես այն-
պէս կարացից մերժել զձեզ ՚ի պատրա-

նացն: Եւ մի որ համարիցի եթէ ՚ի մտաց
ինչ կարկատեմ, այլ զոր ինչ լուայն զայն
առեմ: Եմուտ ոմն ՚ի տուն աւագաց, թէ-
պէտ և ծաղու բանք են, սակայն սոսացից:
Եթե սկուտեղ խորտկօք առաջի եղին,
առէ. ընկալարուք զմբատ, զի մի բարկաս-
ցի որովայն»:

« Հաւատայցէք արդեօք եթէ եղեւ ջրհե-
ղեղ, եթէ առանցելոց ինչ բանք թուիցին
ձեզ, ուր և լերինքն յորս տապանն դազա-
րեաց՝ վկայեն. զՀայոց լերանցն ասեմ:
Ա.Ա ևս յաճախութեամբ, և յայլ ևս բան
՚ի նոյն յայսնագոյն ածիցէ բանս. Երթեալ
ուրուք իցէ ձեր ՚ի պաղեստինացւոց աշ-
խարհն: Այսուհետեւ ոչ ևս բանս, այլ
արդիւնս իսկ ասեմ. թէպէտ առաջինքն
քան զարդիւնքն յայտնագոյնք են զի զոր
զիրք ասեն, և քան զաշաց տեսիլ հաւա-
տարմագոյնք են: Երթեալ ուրուք իցէ ձեր
՚ի պաղեստինացւոց աշխարհն. զինչ ոք ՚ի
ձենջ վկայեսցէ ինձ, որոց զաեզին իսկ
տեսեալ իցէ. քան զԱսկազոն և քան ըդ-
Գազա ՚ի վերոյ, անդ իսկ ՚ի սպառուածի
Յորդանան գետոյ վայրքն ինչ բազում են
և ամենալիցը, մանաւանդ թէ էին, քանզի
այժմ ոչ է նոյնպէս, որ երբեմն իբրև զգը-
րախատ Աստուծոյ էին»: Եւ ապա նկարա-
գրէ զՍոդոմայ հրոյն արգասիս:

ԴԱՍ ԺԵ

Նախապաշարումն . . Զե Բաղմայելանակ .
Բաժանորդութիւն :

Հ. Զի՞նչ է նախապաշարումն .

— Յառաջ բերել զառարկութիւն այլոց, և լուծանել զայնս . որպէս առնէ առաքեալն .

« Խսկ արգ ասիցես . ոստքն փշրեցան, զի ես պատուաստեցայց : Բարւոք է, անհաւատութեամբն փշրեցան, և գու հաւատովք հաստատեցար . մի հպարտանար, այլ երկիր . զի եթէ Աստուած՝ ի բուն ոստօն ոչ խնայեաց, գուցէ երբեք և ՚ի քեզ ոչ խնայեացէ » :

Այսպէս և Ասկերերան յառաջ բերէ զանազրմածացն առարկութիւնս և հերքէ . « Այլ բազում անզամ , ասէ, ետու : Եւ նա չուտաիցէ հանապաղ . և զորդիսն քո, յորժամ յաճախ խնդրիցեն, միթէ ՚ի բաց մերձեսցես . ո՛ անհնարին անամօթութիւն . . Զգիտիցես որ հարկը որովայնին են, որ զամենայն ինչ վասն նորին հնարիցիս : . . Այլ ՚ի շատիստութիւնս հատանիս . այսր անուան այսչափ դահեկանը ՚ի վարձու կան, և սյսր անուան ևս աւելի, և նա մուրանայ : Զմանկատոյ դրոյց խօսիք և զշաղփազիութիւնս . քանզի և նորքա միշտ առասպելաց դացեկացն անսան : Զաւնում յանձն, չչուտատամ՝ քաւ լիցի,

փոխ սր տայցէ և ՚ի բարութեան իցէ և մուրանայցէ : Ե՞ր վասն, աղէ առա . զի՞նչ ինչ քան զմուրանալ գործ ծանականաց կայցէ . լաւ է մեռանել քան զմուրանալ » :

Հ. Զի՞նչ է բաղմայելականակն ձեւ .

— Բազմօրինակարար զնոյն և զմի բան յեզյեղէլ, զանազան եղանակօքն ազդուղագոյն զբանն առնելով :

Ի յօրինուած այսր ձեռյ խառնին բազում և այլ ձեր :

Աքանչելի յօրինէ Արգիս վարդապետ զոյս ձեւ ՚ի կոչելն Աստուծոյ զԱղամ յապաշխարութիւն .

« Լուր նմին Աստուծոյ, զի՞նչ ասէր առ մեղուցեալ և թագուցեալ մարդն . Աղամ ուր ես : Միթէ ոչ զիտէր թէ ուր էր . միթէ ոչ տեսանէր ամենատես ակնն, միթէ տգիտանայր արարիչն . քաւ լիցի : Ացամ ուր ես . արտմութեան էր ձայնն, տարակուսանացբարբառն : Որպէս հովիւ զի կորուսանիցէ ոչչափ ՚ի հօտէն, և արտմութեանն ձայնիւ լուցու զանտառն, նոյնզունակ և արարիչն զդրախտն : Աղամ ուր ես . ընդէր թաքչիս յերեսաց արարչիս, հիմ ամօթովլ լցեալ ես և երկիւզիւ : Ոչ վասն այդորիկ ստեղծի զքեզ, զի փախստական լինիցիս յինէն, ոչ վասն այդորիկ փառօք զարգարեցի զքեզ, զի ամաչէլիր յինէն, այլ զի ՚ի զիրկս քո և ՚ի հոգի ընդունեիր զիս : Աղամ ուր ես . յորպիսի անարգանս, յորպիսի զազրալի տեսակս,

յորպիսի ամօթ երեսաց, յորպիսի խիղճ մտաց, յորպիսի ալիս տարակուսանաց; Լուայ, ասէ, գծայն զնալց քո՞նի դրախտի աստ, և երկեայ, քանզի մերկ էի, և թագեաց... Արդարե ստուգատիչ մերկ, ոչ ՚ի հանդերձից միայն այլ և յարդարութենէ »:

Հ. Զինչ է բաժանորդութիւն.

— Յիշտառակեալ առ հասարակ զկարեոր մասունս բանին, և ապա մի բառ միոջէ բացարարէլ զայնս. զոր օրինակ. « Արդ տես զբազցրութիւն և զսաստկութիւնն Արտուծոյ. ՚ի վերայ կործանելոցն սասակութիւն, և ՚ի վերայ քու քազցրութիւն Արտուծոյ ». Հառ:

« Հոգիք սրբաց հետի են յայսպիսի ախտակրութեանց (այսինքն ՚ի մարդահաճութենէ), այլ մանոււանդ ընդդիմակացը այսպիսի ախտից են բանիւք և արդեամբք: Բանիւք, յորժամ՝ ասէն Դատիթ. Արտուծած ցրուեսցէ զսկերս մարդահաճույից: ՚ի վերայ այսորիկ կնքէ առաքեալ բանիւք իւրովք. Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի: Խակ արդեամբք, յորժամ՝ թշնամանէին և բամբասէին և նախատէին, և ըղփառաց ինչ ոչ հոգային, և փոխորէն ըղնախատիչն ոչ նախատէին, այլ և երախտիս հասուցանէին ». Այարդ:

« Քանզի որ մարք են առաքինութեանց սկզբունք՝ խմաստութիւն, արութիւն, ող-

ջախոհութիւն և արդարութիւն, վրիպեալ գտանին յիմումն իշխանականի մասին: Զի ոչ խրատեցի զբանն որ յիս' խմաստութեամբ, և ոչ զցանկութիւնն՝ ողջախոհութեամբ, և ոչ զարձեալ զայսոսիկ խրատեցի արդարութեամբ ». Շերին:

ԴԱՅ ՃԸ

Ուղղութիւն. - Անցումն. - Արտուղութիւն:

Հ. Զինչ է ուղղութիւն.

— Ուղղել զասացեալն պատշաճագոյն ասացուածով. զոր օրինակ. « Այս է քո պանձալի աստուածաբանութիւնդ, մանոււանդ թէ յիմարութեանդ ցոյցք, զնիւթս զայս յաւ: Էժակից ասել արարչական զօրութեանն ». Լամբ:

« Արտանօր ամաշեմ ասել զնչմարտութիւն, մանաւանդ թէ զանօրէնութիւն և զամարցութիւն ազդիս մերոյ, զմեծի ողբոց և արտասուաց արժանի սոցա ըղգործու ». Խորինեն:

« Զայսոսիկ լսելով, եղբարք, հայեսցուք ՚ի մեզ և սթափեսցուք յահազին արբեցութենէս, եթէ արբեցութիւն պարտ է անուանել զմերս, և ոչ խելագարութիւն և կամ դիւաբաղսութիւն ». Սարգ:

« Արտ ազբիւր հրեղէն հոգեսոր րզիսէ ՚ի սեղանոյս, և քո զայս թողեալ ՚ի թատրն ճեղիս... թողեալ զՔրիստոս՝ որ նստի

առ աղբիւրս, քանդի և այժմ առ աղբիւրն նստի, ոչ ընդ շամբաւացւոյն միայն խօսի այլ ընդ համօրէն քաղաքիս: Բայց թերեւ և այժմ ընդ շամբաւացւոյն. քանդի չիք ոք և այժմ առ նմա մօտ, այլ ումանք մարմնով միայն, և այլք և անձամբ իսկ մեկուսի»: Ոսկեր:

« Անդ իսկ 'ի սպառուածի Յորդանան գետոյ վայրքն ինչ բազում են և ամենաւ լիցք, մանաւանդ թէ էին, քանդի այժմ ոչ է նյոնպէս, որ երբեմն իբրև զդրախան Աստուծոյ էին»: Ոսկեր:

Հ. Զինչ է անցումն.

— Զօդ կցորդութեան մասանց ճառին. զոր օրինակ.

« Եւ արդ վասն զի ծանուցաւ վարք 'ի շատէ որքան միանգամ յաստուածազգեաւ տէցն տուաւ յանցագս երկնայնոցն իարգաւորութեան, բեր այսուհետեւ զբնաւանեցոյնն մեր զիցուք առաջի առ 'ի քննութիւն»: Շեորի:

« Այլ այսօրիկ քեզ բաւականացեալ, ես 'ի կարգ պատմութեանն զարձաց»: Ցով. կար:

« Բայց մեք զայսոսիկ 'ի տեսողս անդր թողացուցեալ, և զորս աչօք իսկ տեսեալ է մեր՝ ոչ դանդաղեցուք պատմել»: Նոյն:

« Այլ չգիտեմ զիսրդ վայրապար ընդ խարս եկի յայսպիսի բանքս. զայս խրատէի հեզութեամբ ուսուցանել, և ես ինձէն 'ի ցասումն զառածայ: Թէ այնպէս

իցէ, գարձցուք անդրէն 'ի մեր խրատն, և հօգ տարցուք ամենայն թերութեան կենոց մերոց, զի ուղղեցուք զոր կամիցիմք: »: Ոսկեր:

« Ահաւասիկ երեք ճառք, և զսկզբանս բան ոչ ևս կարացաք լուծանել. մի թէ վայրապար ինչ առէն եթէ խորք անդնդոց են միտք ճառիցս: Օ՞ն առեալ այսօր զննացեալն արկանիցեմք 'ի հարց և 'ի փորձ»: Ոսկեր:

Հ. Զինչ է արտուղութիւն.

— Սուղ ինչ հեռացումն 'ի կարգէ բանին, առ 'ի հանգիստ ունկնդրաց կամ յառաւել աղգուութիւն բանին:

Բայց ամենսին զգուշացի է զի մի ինչ ըսնի և անցարմար մուծցի 'ի ներքս, և զի 'ի կատարածին վայելչաբար զարձցի յառաջադիր բանն:

Այսպէս Յովինեպոս 'ի պատմել զարտերազմն Հրէից ընդ հառմայեցիս: առնէ արտուղութիւն, ստորագրելով զհրահանգս հոռմայեցի զօրականին,

« Աստանօր յոյժ զարմանարյ արժանի համարիցի ոք զնախագահութիւն հոռմայեցոց, որք այնպէս վարժեն զժառայս, մինչ զի ոչ միայն 'ի պաշտօն կենաց՝ այլ և 'ի գործ պատերազմի օգտակարք իցեն: Իսկ եթէ ոք նայեցի 'ի նոցա կրթութիւն զինուորութեան, արդարեւ իսկ ծանիցէ զի զայսքան թագաւորութիւն ոչ չնորհիւ բարեբախտութեան՝ այլ իսրեանց քաջու-

թե։ մը ստացան։ Քանդի զինու վարել ոչ
եթէ ՚ի պատերազմի սկսանին, և ոչ միոյն
յորժամ պիտի է զմեռս շարժեն մինչ ՚ի
խաղաղութեան պարապիցեն, այլ ընդ զի-
նու որպէս թէ բնութեամբ մացեալք...
ոչ երեք ժամանակի սպասեն»։ Եւ յետ
նկարագրելոյ զիրթութիւն նոցա և զիլու-
թիւն և զարիւթիւն և զամենայն ինչ
խորհրդով զործել, յաւելու ապա։ « Արդ
որոց զործք սկսանին ՚ի խորհրդոց, և ըզ-
խորհրդուալն այնչափ յօժարութեամբ կա-
արեն զօրք, զինչ զարմանք՝ եթէ Եփ-
րատ յարեւելից, և ՈՎկիանոս յարեւմից,
և ՚ի Հարաւոյ Ովրիկեայ քաջարեր երկիր,
և ՚ի Հրամիսայ Հռենոս և Դանուբ և սահ-
մանք թագաւորութեանն Հռոմայեցւոց
գոր բարուք կարիցէ ոք ասել զեռ փոքր
գոր զատացուածն ստացողաց։ Արդ զայս
միշեցի, ոչ զի սփոփիցեմ զարաթեամն
և զիսովամէրսն երկեցուցոնեմ։ թերեւս
և առ Հմտութիւն քաջութեան հետեւողացն
ստացեալքս օգտակարք եղիցին, որք ոչ
զիտեն զահմանազրութիւն զինուարու-
թեան հռոմայեցւոց։ Բայց զարձաց անդ-
րէն ուստի ելի»։

Զկերպարանս այսր ձեսց բերեն ՚ի Հա-
մառուսութեան և միջնիւալ պարբերու-
թիւն, զորս փակագծիւ սովորութիւն է
ոմանց արոհել։ զոր օրինակ։

« Եթէ ոչ զիտեք, եղբարք, զի ընդ զի-
տունու օրինաց խօսիմ, զի օրէնք ափեն

մարդոյ որչափ ժամանակս կենդանի է»։
Համ: իրր ասել, արտօնիք զիտել զայս,
զի օրէնսդէաք էք։

« Եւ արդ միտ զիր և հաւատուցն և հնա-
զանդութեան առաքելոցն։ Թէպէտ և ՚ի
զործ արուեստին զրազեալ էին, (և զի-
մէք իսկ թէ զարդ քաջցը և պատիր
ձկնորսութիւն էր), սակայն ոչ ինչ դան-
գալցեան լսել այնմ որ Կոչեացն գնոսա»։
Բակեր։

« Երթեամբ ուրուք իցէ ձեր ՚ի պազես-
տինացւոց աշխարհն, (այսուհետեւ ոչ ևս
բանս, այլ արգիւնս իսկ ասեմ, թէպէտ
առաջնիքն քան զարդինսն յայտնագոյնք
են. զի զոր զիրք ասեն, և քան զայց
տեսիլ հաւատարմազոյնք են)։ Երթեամբ
ուրուք իցէ ձեր ՚ի պազեստինացւոց աշ-
խարհն»։ Բակեր։

Գ.Ա. ԺԹ

Ըստայնումն:

Հ. Զինչ է ընդլայնումն։

— Զսուզ ինչ իմաստ ընդարձակել առ
՚ի բացայացտագոյն իմացուած, և առ ՚ի
ստատիվագոյն ազգուութիւն բանին։

Եւ զոր օրինակ կրկին ազգ են ձեսց,
ըստ բացից և ըստ իմաստից, նոյնպէս և
ընդլայնումն կրկնակի յօրինի, բատիւք և
իմաստիւք։

Հ. Որպէս յօրինի ընդլայնումն բախւը.

— Յօրինի, որպէս ՚ի կարգո ձեռց ասացաք, յաճախութեամբ նոյն կամ համանշանակ բառից, զոր օրինակ Դաւիթ յովբան զԱբիսողոմ, ազգեալ ՚ի բնութենէ զծևս զայս յօրինէր.

« Որդեակ իմ Աբիսողոմ, Աբիսողոմ որդեակ իմ. ու տայր զմահ իմ փոխանակ քո, ևս փոխանակ քո Աբիսողոմ որդեակ իմ, որդեակ իմ Աբիսողոմ»:

« Եւ մեք յորանչիցեմք, ձգտիցիմք, քոչքիցեմք, քոչքոտիցեմք, չնչիցեմք, խորդայցեմք, այսր անդր յեղյեղիցիմք, և յորայս խաղայցեմք, և ազգի ազգի խոտպանն զմտաւ ածիցեմք, մինչ նորտ զզիշերն ամենայն ընդ օրհնութիւննն հանիցեն». Ոսկեր:

« Եւ արդ վասն այնր չչո պարտ ըիւրապատմիկ պատառ պատառ կոտորել, ցանկ սովանանել, բազում մահուց համերել, և զամենայն զինչ և ինչ իցեն չարչարանք կրել և բանիք և արդեամբք. և եթէ կեն գանւոյն հրով այրել իսկ հասաներ, չչո պարտ այրել վասն հասանելոյ խոստացելոց բարութեանցն ». Ոսկեր:

Ընդ սովորն ձեռով բովանդակի և ընդլայնումն ՚ի ձեռն փոխարերականն բառից. որպէս Աբրդիս վարդապետ առնէ ՚ի գովել զնախնի սուրբ միանանան.

« Որք իմաստուն վաճառականքն էին, ան-

ցաւորօք զյաւիտենականն գնելով ըդկեանս, ճարտար զեկավարք, որք առանց նաւակոծութեան անցին ընդ ահազին ծովս կենցաղսոյ. արիստոյն դօրականքն ՚իրիստոսի, որք ոչ էքան ՚ի հոգեւոր պատերազմին. միամիտ աղաւնիքն, որ ՚ի խուճապերոյ բաղեին ՚ի սիրոյն Աստուծոյ ոչ խուճապեցան. ողջ խոչ տատրակքն, որ ՚ի գարշ ցանկութեանց տոփանացն ոչ աղաւեղացան. բանաւոր ծիծունք, որ ՚ի յօձիցն խարամանեաց ոչ վեասեցան. անմեղ գառինքն, որ ՚ի գայլոցն պատառողաց ոչ կեղեքեցան »:

Ըստ սմին օրինակի և շրջարանութեամբ յօրինի ընդլայնումն. որպէս Եղիշէ վարդապետ փոխանակ ասելոյ դուխտադրուժն Վասակայ թէ ուրացաւ զհաւատս ՚իրիստոսի, ասէ.

« Քանզի մոռացօնք եղեն նմա գալուստ Որդւոյն Աստուծոյ, և ոչ յիշեաց զքափոզութիւն սուրբ աւետարաննն. և ոչ ՚ի սպառնալեացն զանդիտեաց, և ոչ յաւետիսն միխթարեցաւ. ուրացաւ զաւազանն, որ յզացան զնա. և ոչ յիշեաց զբնկալուչ սուրբ Հոգին, որ ծնաւն զնաւ. Անարդեաց զմարմինն պատուական որով սրբեցաւ. և առ սոն եհար զարիւնն կենդանի որով և քաւեցաւն ՚ի մեղաց. ջընջեաց զգիբ որդեգրութեանն, և իւրովք ձեռովք խորտակեաց զհաստատուն կնիք մատանացն. ել ՚ի թուոյ երանելացն, և

ապստամբեցոց ընդ իւր զրադումն . ձեռն արկ կահսկարութեամբ և եմուս յորդեղորութիւն զիւալաշութեանն , և եղեւ աման չարին , և եղից զնա սատանայ ամենայն խորամանկութեամբ . ՚ի ձեռն էտ իրրեւ զիւհան , և ագու զնա իրրեւ զրահան , և եղեւ զնա իրրեւ զրահան :

Յօրինիք դարձեալ և ՚ի ձեռն աստիճանաց . զոր օրինակ .

« Զկարիցնս թափուր յընչից լինել , գէթ զայլոց մի յափշտակիցնս . չկարիցնս պահել , դժնեա ՚ի փափկութիւնս մի հատունիցնես . չկարիցնս ՚ի գետնի ննջել , գահոյս արծաթապատս մի առնիցնս ». Պակեր :

« Թելսդիր լիր , աղաջեա , զամենայն հնարս հնարեցիր . թերես կարասցես զոման ասրիցուցանել . և եթէ զոմանս ոչ , սակայն կէս մի . և եթէ կէս մի ոչ , սակայն զերիր մասն մի , սակայն տասներորդ մի : Եւ եթէ ոչ այսպէս , գննեա զմի ոք ՚ի բազեաց : Եւ եթէ ոչ զմի ոք , սակայն զրո առնձնդ ասլեցուցես ՚ի տանջանաց ». Պարգ :

« Ոչ միայն առաքեալք , այլ և սպասաւոք , այլ և ականատեսք իւսնին . և ոչ միայն ականատեսք , այլ և սիրելիք , և բարեկամբ , և որդիք , և ժառանգք , և ժառանգակիցք » . Նոյն :

Հ . Ո՞րպէս յօրինի ընդլայնումն իմաստիք .

— Ճարտարութիւն մեծ ճարտասանին յայսմ իսկ է , ճոխաբանել առանց շոտառութեան և ճամառաւակութեան , և այս իսկ է տիրապէս ընդլայնումն . և առ այս շիք վարժապետ վիհագոյն քան զիսկերեանին ճառից յաճախ ընթերցուած :

Օրինակի ինչ ՚ի ճառից անտի պարզաբանեցնեցն զպատասխանիս քան գամենայն բացատրութիւնս բանից : Քանդի զուող իմաստս զայս , զի ոչ ինչ իսկի օրէն է մարդոյ մեծամտել , այսպէս ընդարձակէ .

« Ո՞րչափ ինչ բարութիւնս ճնանիցի մեղ խոնարհութիւն . զինչ կամիցիս , ոմս չունել , անցաթումն լինել , մարդասիրութիւն . այս ամենայն բարիք ՚ի խոնարհութենէն են , և սոյին հակառակ ՚ի հափառութենէ : Հարկ է այնպիսւոյն թշնամանիչ լինել , հարկանող և բարկացող և զառն և անհամբոր , գազան մանաւանդ և ոչ մարդ : Ուժզին իցես , և յայն սակա մեծամտիցնս . թէ այսպէս իցէ , և վասն այնորիկ առաւել պարտիս խոնարհել : Զի՞ չնչին իրօք մեծամտիցնս . քանզի և առիւծ զաղանաղոյն քան զրեղ է և վարադ ուժգնագոյն , և դու իրըն զմիխս մի ես առ նորօք . և աւազակը և զերեղմանակրիտք , և ՚ի վսեր եկեալըն . և ծառացքն իսկ քո , և թերես որ կարին իսկ անազատք և չարաբարոյք իցեն , զորագոյն քան զրեղ իցեն : Եւ այն գովուածիք :

թեան ինչ արժանի իցեն. և չկայցե՞ս ինչ
ծանակ այնպիսի ինչ իրօք մեծամտել »:
« Ա.Ա. թերեւս գեղեցիկ և բարենշան ոք ի-
ցես. և այն աղջկանցնազմոր են. բայց սա-
կայն քան զսիրամարդ գեղեցիկ չիցես, և
ոչ այնպէս ծաղկալց համապայծառ թես
ունիցիս իրրեւ զայն թռչուն որ վարսիւքն
և զիսամկօքն, որ խրճացեալ կարակնեալ
բազմանձեմուկ տանովն յաղթէ քեզ գե-
ղեցկութեամբ: Նա և փորն կարի իսկ գե-
ղեցիկ է և այլք ևս բազումք 'ի թռչնոց,
ընդ որս թէ կամիցիս անցանել 'ի հանդի-
սի՞ ոչինչ ամենեին տեսանիցես զանձն:
Բազում անգամ և մատադ մանկափ, և
աղջկունք անփորձք յամնւմութենէ, և
պոռնիկ կանայք և արք կանացիք իդա-
ցեալք նաղեցան այնպիսի պարծանօք: Եւ
արդ այն պարծանաց ինչ արժանի իցէ
կամ մեծամտաթեան »:

« Եւ թերեւս զի մեծատուն իցես, հպար-
տանայցես: Ուստի իցէ զոր ունիցիսն, և
կամ զինչ ունիցիս. ոսկի, արծաթ, ա-
կանս պատուականս. այն և աւազակաց
և սպանովաց պարծանք են և ոսկեհանաց,
և որք 'ի քրէտկան մետազմն խոնջիցին:
Թերեւս զարդուք ինչ և պաճուճանօք հը-
պարտանայցես, զայն և 'ի ձիսն է տեսա-
նել. պարսիկ և զշառաւունն նկարեն և
պաճուճեն, այլ 'ի մարդկան միջի 'ի բո-
զանոցս և եթ վայելեն այնպիսի պաճու-
ճանք, ուր պատիրքն և որոգայթքն են:

Զամաչեն չթրջիս այնպիսի իրօք հպարտա-
նալ, որովք և մնասունք հանգոյն քեզ
լինիցին, և ծառայք և սպանովք և կա-
նայք և աւազակք և գերեզմանակրկիտք »:
« Ա.Ա. 'ի տունս ինչ գեղեցիկս պարծիցիս:
Բազում թռչունք ևս 'ի գեղեցիկ տունս
բնակեն. մանաւանդ ճայք ևս առաւել
պայծառագոյն բան զբո տունսն ունին ըր-
նակութիւնս: Ա.Ա. թերեւս ճայնիւ ինչ
հպարտանայցես: Քան զիսորն և զանակ
և զասպուճակ չիցես ինչ ճայնիւ երբէք
քազզը և հեշտական մրմնջել Ա.Ա. թերեւս
ովէսպէս արուեստիւք: Եւ ո՞լ որ յայնմ
զմեզուօք զնաբատրակօք անցանիցէ. ո՞ր
դրօշոլ, ո՞ր նկարիչ, ո՞ր գետնափոր զտա-
նիցիք քան զնոսա իմաստուն, որ կարիցէ
ճարտարութեան մեզուաց նմանել: Ա.Ա.
թերեւս բարակ ինչ հանգերձիւք. այնու
սարդք իսկ անցանեն զանցանեն զքե:
Ա.Ա. թերեւս ոտիւք արտգութեամբ. և այ-
նու ևս անասունք զինչ, մանաւանդ նա-
պաստակք և այծեմունք և այլ ևս անա-
սունք՝ որ արագ իցեն ոտիւք: Ա.Ա. թե-
րեւս 'ի տար աշխարհ ինչ երթալուլ. և այ-
նու թռչունքն անցանեն զքե: Մանաւանդ
խորդք և ծիծառունքն՝ որ դիւրաւ հարկա-
նեն զտարաշխարհական ճանապարհս. ոչ
սպաշար բառնան, և ոչ զբաստու կարօ-
տանան, այլ ընդ ամենայնի բաւական են
նոցա թերեն: Նովին և նաւ և զբաստ ինչ
և կառք և հողմիք, և ամենայն դինչ և իցէ,

արագագոյն են քան դքեզ, Այլ թերեւս
քաջատեսութեամբ ինչ հպարտանայցես.
այլ ոչ ինչ նման ես այծեման և արծուոյ,
թերեւս զի արագ լրիցես. այլ չիցես սուր
ականջօք քան զէշ: Եւ թերեւս հոտքաջ
առնուցուս. այլ չկարես անցանել զշամբ:
Եւ թերեւս զի գործունեայ և համբերող իւ
ցես. այլ չես ձեռնհաս լինել անդագար
իրեւ վլրջիւն: Եւ թերեւս զի ոսկի բաղում
յանձին ունիցիս. այլ ոչ որպէս զննդիի
մրջիւնն »:

« Իսկ առողջութեամբ յոյժ իսկ առաւել
են քան զմեզ անասունք. և անհոգու-
թեամբ ինչ չերկնչին յաղքատութենէ,
չկասկածն ՚ի կարօտութենէ: Հայեցա-
րուք, ասէ, ՚ի թռչունս երկնից, զի ոչ
սերմունեն, և ոչ չնձեն, և ոչ ժողովեն
յըստեմարանս: Թէ այսպէս իցեն, քան
զմեզ՝ զանասունս լաւագոյն արար Աս-
տուած: Տեսանես որչափ ինչ վնաս իցէ
չքննելն. տեսանես, որչափ ինչ չնորդէ
մեզ իրացն քննութիւն. որ քան զամե-
նայն մարզիկ առաւել մեծամուէր, գտաւ
և քան զանասունս ևս խոնարհագոյն.
այլ ինայեսցուք ՚ի նա, և չնմանեսցուք
նմա: Մի, զի քան զբնութիւնս առաւել
մեծամուեաց, իջուցանեմք զնա յանանոց
աշտիճան, այլ կանգնեսցուք զնա անտի,
ոչ վասն նորա, այլ վասն հասարակաց
պատուոյ՝ զի նա արծանի էր այնպիսի ինչ
կրելց »:

Նոյն ինքն գարձեալ զսուզ իմաստո
զայս, հայեցեալ ՚ի կապանս Պաւլոսի
զամենայն վիշտու ըստ նմին օրինակի յանձն
առցուք, ընդարձակէ այսպէս.

« Եւ արդ մի արտմեսցուք ընդ նեղու-
թիւնս ինչ, որ վասն Քրիստոսի իցեն. այլ
յուշ լիցին մեզ և կապանք Պաւլոսի, և
նյոն եղլիցի մեզ յորդորիչ: Եթէ իրատի-
ցես զոմանս աղքատանալ վասն Քրիստո-
սի, յուշ արասիր նոցա զկապանսն Պաւ-
լոսի, և զանձն և զնոսա եղկելիս համա-
րեսջիր, եթէ զմարմինս ևս ՚ի կապանս
արկ վասն նորա, զու և ոչ կերակրելով
զքալցեալս լինիս հազորդ ուղղութեանցն:
Յուշ արա զկապանսն Պաւլոսի, թէ չկրե-
ցեր ինչ այնպիսի չարչարանս, և չցան-
կանացնս այնուհետեւ ընկերին: Յիշեա
զկապանսն Պաւլոսի, և տեսջիր զի ան-
պատեհութիւն է նմա այնչափ ՚ի վիշտու
կալ, և քեզ այզչափ փամիկանալ: Ցան-
կանացնս զրգութեան. զմտաւ ածջիր
զբանան Պաւլոսի, զի նորին աշակերտ ես
և նորին զինուորակից, զիաւրդ ՚ի գեպ իցէ
զզինուորակիցն ՚ի կապանս տեսանել և
զանձն ՚ի գրգութեան: Նեղութիւն ինչ ՚ի
վերայ հասանիցէ, և կարծիցես եթէ թո-
զու ՚ի ձեռաց. առաջի աչացդ նկարեա
զկապանսն Պաւլոսի, և տեսանիցես թէ
՚ի նեղութեան լինել չէ ՚ի ձեռաց թողլոյ
նշանակի: Եւ յորդամ՝ ՚ի միտ անկանիցի
կերպատ հանդերձ զզենոււ, յիշեաջիր զիո-

պահան Պաւղոսի, և քան զկապերոսն ա-
պահարից անարգազոյն ևս թուեսցին քեզ
և կամ որ ընդ այլ գայու ինչ թօթափեալ
իցեն: Կամիցին ոսկի գարդս կրել յան-
ձին: Դմուռ ածջիր զկապանն Պաւղոսի,
և քան զչուան ինչ հին չթուիցի քեզ լա-
ւադոյն: Կամիցին ծամս գործել և գեղե-
ցիկ երեել, նկարեսջիր վերկաթն Պաւղո-
սի 'ի բանտին, և խանդաղատեսցին միտք
քո յայն զեզ, և զքո պֆնանն գարշելի
համարեսջիր, և դառնապէս հաշիցես հա-
ռաշիցես նորս կապոնացն »:

Հ. Ասա ինձ արգ համառօտիւ որ ինչ
յօրինակաց տատի պարտ իցէ 'ի միտ առ-
նուլ.

— Նախ զայն իսկ, զի թէպէտ և զուղ
ինչ իմաստ օրէն է ընդարձակել, մանա-
ւանդ թէ ճարտօտրութիւն իսկ է, այլ զգու-
շալի է յոյժ՝ չյաւելու յայն գուղնաբեայ
և չնշին հանգամանս, և մի այնպիսի ինչ
որ չյաճախիցէ զգորո: թիւն բանին:

Եւ երկրորդ զի զամենացն ազգս ազգս
ձեռց, զօրոց յառաջագոյն սոսացաք, մարթ
է 'ի կիր արկանել յընդայնումն:

ԴԱԱ Ի

Պարբերութիւն. — Արտասանութիւն:

Հ. Զի՞նչ է պարբերութիւն.

— Պարբերութիւն է բան լրացեալ, զոր
քերականն վերջակիտիւ ուսուցանէ ա-
ւարտել:

Մեծագոյն մասունք նորս կոչին ան-
դամք, որ միջակիտիւ տրոհին. և փոքրա-
գոյնք կոչին հատածք, որ ստորակիտիւ
բաժանին. զոր օրինակ.

«Ոչ ոք յուզի անկեալ, և բառնայ ինչ ընդ-
իւր յուելորդացն. այլ պարտ և պատշաճ
է պնդակազմ լինել, զի կարող լինիցի ըն-
թանուլ»:

Եւ գարձեալ. «Զի թէ զվարս առաջ-
նորդացն պարտէաք ինչ քննել, ապա և
զձեւնադրութիւնն մեք պարտէաք տալ, և
ամենայն ինչ վեր 'ի վայր կործանէր, ոտքն
'ի վեր և զլուխն 'ի վայր». Ոսկեր:

Հ. Բարւոք պարբերութեան քանի՛ ան-
դամք պարտին լինել.

— Ոչ նուազ քան զերկուս, և ոչ աւելի
քան զչորս. այլ բառ պատշաճի իմաստիցն
մարթ է և բազմանդամ ևս յօրինել պար-
բերութիւնս, մանաւանդ 'ի պերճ ասա-
ցուածս, և միանդամ ևս 'ի վծիռ ասա-
ցուածս:

Օրինակ առաջնոյն յՈսկեբերանէ.

«Յորժամ հաւ զառաջինն խօսիցի, ոչ որպէս աստ ՚ի առնա՞ խորդան ծառայը, գուրը փակեալք, և ամենեքին նման մեռեց կան ծանրաբունք, և պահայոյզքն միայն զգանդական գանձեցուցանեն. չիք անդ այսպիսի ինչ, այլ վազվաղակի ամենենքին միանդամայն երկիւղիւ զբունն թօթափեալ, յառնեն կան առ հասարակ. յորժամ գլխաւորն ազդ կամ ռատամ կամ ձայնիւ առնիցէ, ՚ի զգաստական պարսն յօրինեալք, գունդ առ գունդ կացուցեալք, ամենեքնան առ հասարակ զծեսս յերկինն համբարձեալ, զնուիրական օրհնութիւնն երգեն միահամեռու» :

Որինակ երկրորդին յաճախ ուրիք գտան ՚ի գիրս Արակաց.

«Ակիզին իմաստութեան երկիւղ տեառն : Զիմաստութիւն և զիրատ ամազարիշտք անդոսնեն : . . Որդի իմաստուն ուրախ առնէ զհայը. որդի անմիտ արտամութիւն է մօր» :

Հ. Առ ինչ տրոհմունքս այսորիկ պարբերութեան իցեն կարեսորք.

— Կախ առ ՚ի պարզ իմացուած ճտոին, և երկրորդ առ ՚ի բարւոք արտասահնութիւն՝ որ յոյժ կարեւորն է ճարտասահնին : Դիմութենեաց երիցս հարցեալ, թէ զինչ կարեւորադայն իցէ ճարտարախոսի, զնոյն երեքնեաց պատասխանի՛ թէ Արտասահնութիւն :

Եւ արդ քանդի մի ՚ի կարեւորաց բարւոք

արտասահնութեան է ուրեք ուրեք հանգիստ կամ զագարումն առնել ձայնի, նըմին իրի և բարւոք արոհմունք պարբերութեանց օգնեն առ այս :

Հ. Համառօտեա ինձ զօրէնս բարւոք արտասահնութեան :

— Կախ քան զամենայն պարտ է ճարտարախոսին կրթել վլեզու իւր ՚ի յատակ արտաբերութիւն, զամենայն զվանկս և զտառս քաջ առօգանելով :

Երկրորդ՝ ելեկջ առնել ձայնին ըստ որբակայ և ըստ իմաստից ճառին, և մի նմանաձայն զչարցականն և զարգելական կամ զտառտ և զաղերս արտասահնել, որ որի անկենդան կացուցանէ զճառն, և նիրշեցուցանէ զլսելիս :

Երրորդ՝ հանգարտութեամբ և ծանր արտասահնել ըստ պատշաճի անդամոց և հատուածոց պարբերութեան զհանգիստոն առնելով, և մի շտապել տղայօրէն և պարտասեցուցանել զլսելիս :

Չորրորդ՝ մի մուծանել եղանակ յարտասահնութիւնն իրը նուազելով զճառն, որպէս ոչ սակաւ առնեն, որ ատղուկալի է և օտար ՚ի բնականէն :

Հինգերորդ՝ մի բարձրագոչ ճառատել, այլ մանաւանդ ՚ի սկզբան մեղմ և դաշնձայնիւ յառաջարանել եթէ ոչ յանկարծական ինչ իմաստիւք սկսանիցի ճառն, և ապա տեկա ըստ պատշաճի սաստկացուցանել զրոյրաց :

Ար այս ամենայն օգնէ մեծապէս ընթեռնուլ՝ ի ձայն զնասս Ոսկերերանին, և մանաւանդ ուսանել յորդորակս ինչ յայն ցանէ ՚ի բերան, և արտասանել զայնոսիկ առ ՚ի կրթութիւն:

ԴԱՍՆԻԱ.

Շարժուածք:

Հ. Համառօտենսչիր ինձ և զկանոնս շարժուածոց, որ դոյդ ընդ քաջ արտասանութեան կարեւոր են.

— Շարժուածոց պարտ է յարմարել ընդ ձայն և ընդ կիրս արտասանողին. և է սա լեզու համր, այլ ճարտարախօս. և բաղում այն է զի հզօրագոյն քան զբարբառ իսկ:

Երեւելագոյն յանդամն է գլուխ. և զայն պարտ է ուղիղ ունել, և ըստ իմաստից ճառին շարժել ընդ ձեռս: Զոր օրինակ ՚ի մերժելն ինչ կամ հրաժարել յիմերէ կամ ՚ի զարշիլ, պարտ է ՚ի ձգել զձեռս ընդդէմ՝ դարձուցանել զգլուխն ՚ի բաց: Զիք ՚ի կրից՝ զոր ոչ ՚ի զէմն և յաչս մարթ իցէ արտասանողին յանդիման երեւեցանել. նմին իրի պարտ է նմա ըստ իմաստից փոփոխել զայնոսիկ, մերթ սպառնական և մերթ աղերսական, մերթ արխուր և մերթ ցածուն երեւալ:

Բայց թէպէտ և յաչս և ՚ի զէմն տպաւորագոյն երևիցին կիրք հոգւոյ, այլ ճարտարագոյն են ձեռք՝ ՚ի բացատրել զիմաստա: Մնջկատակացն ՚ի թատերս նախնեաց խաղք, որք զանոսողս շարժէին յարտասուս, բաւականք են ՚ի ցուցանել զճարտարիոսութիւն ձեռաց:

Արդ ՚ի շարժուածն ձեռաց՝ զաջ ձեռն ՚ի ձախմէ յաջ տանելի է, սկսեալ ՚ի հանդիպոյ կրծոց: Զմատունս ձեռաց պարտ է արձակ և ՚ի բաց ունել, զբագլուկն պարզեալ. մի զարմուկն ՚ի վեր քան զուս ամբառնալ, և մի հաւասար բարձրութեան ուսոց. մեկուսի յանձնէ ունել զայն, և գրեթէ միշտնովլաւ սկսանել զշարժուածն:

Ըստ այսմ և զահեակ ձեռն յաջմէ ՚ի ձախ կոյս ածելի է, և ոչ երբէք զճախն միայնակ շարժել, այլ միշտ աջակից:

Պարտ է ընդ աւարտ պարբերութեանց աւարտել զշարժմունք ձեռաց, և ապա թողուլ անկանել բնականապէս ՚ի վերայ ամբիննին եթէ յամբիննի ոք բանախօսէ, և մի երբէք ՚ի ներբս կամ արտաքս արկանել զձեռս: իսկ եթէ յոտին կացեալ բանախօփիցէ ոք, պարտ է յաւարտ զարբերութեանց թողուլ երկուտեք զձեռս ՚ի կախ. իսկ եթէ բաղմեալ յաթոռ, արկանել զձեռս ՚ի վերայ ձնդաց:

Բաղում ազգի ազգի ձեք են շարժուածոց, զորս սովորութեամբ և կրթութեամբ մարթ է ուսանել:

Առ ՚ի ցուցանել զբարձրութիւն, պարտ
է գարձուցանել փարք մի զդումփ առ ՚ի
կողմն, և ամբառնալ զաշս ՚ի վեր՝ առանց
ամբառնալը գգլուխն, և զերկոսին զձեռս
միանգամայն ՚ի միւս կողմն առ ՚ի ստոր
մեկուսի յանձնէ երկայնել, զերեսս ձե-
ռաց գարձուցեալ առ ունկնդիրս:

Իսկ ընդ հակառակն առ ՚ի ցուցանել
զխորութիւն, պարտ է խոնարհեցուցանել
աստի զաշս յերկիր, և անտի ամբառնալ
զձեռս ՚ի վեր՝ զարտաքոյս նոցա ցուցանե-
լով ունկնդրաց:

Առ ՚ի ցուցանել զտարածութիւն, պարտ
է զերկոսին զձեռս ՚ի հանդիպոյ կրծոց
յաջ և յահեակ ածել շուրջանակի զոյդ
ընդ աչս:

Առ ՚ի ցուցանել զերկայնութիւն, պարտ
է զերկոսին զբարձրեկս միանգամայն ՚ի մի
կոյս երկայնել ու զղակի զձեռս ընդ ար-
մկունս ունելով, և զափ ՚ի խոնարհ:

Ըստ այսմ օրինակի պարտ է և զայդ
ձեռ զիտել և ուսանել ՚ի քաջակիրթ և ՚ի
բարեճե բնաւորելոց անձանց. և զայն և ս
զիտել, զի ոչ ամենայն շարժմունք և ձեր
ամենեցուն ՚ի ճահ գտնել Եւ գարձեալ մի
անդէն ՚ի սիրբան ճառին սկսանել և զար-
ժուածս, այլ տակաւ. և միշտ իսկ հան-
գարտութեամբ առնել զշարժմունս:

Այլ կարեռագոյն և ընդհանուր կա-
նոն և ձայնի և շարժուածոց այն է բնա-
կանին հետեւել, յորում է կատարումն ա-

բանսամին. զի պարտ է սմա ըստ օրինակի
նկարչուց զեղեցկացուցանել զրնականն,
այլ մի երբէք օտարանալ ՚ի բնութենէ:

ԳՅՈՒ ԴԲ

ՈՃ Վահե:

Հ. ԶԲՇՆՀ է ոճն.

Կերպարման բանից ըստ իմաստից
ճառին յարմարեալ. Արդ թէպէտ և բա-
զում ազգի ազգի կերպարանք բանից են,
ոչ միայն ըստ զանգանութեան շարա-
գրածոց՝ այլ և ըստ հանգամանաց բարուց
շարագրագոյն զանազանեալ, այլ հոե-
տորք ու հեշտի ուսանողաց երիս ազգս
ոճոց զիմաստոս զանազանեն, վեմ, պարզ
և բարեխամն:

Հ. ՈՌ է վաեմն.

Յորում ճարտարախօսն ՚ի կիր արկա-
նէ աշխատագոյն մտածութիւնս, պերձա-
գոյն ասացուածս, քաջայանգուղն ձես, և
սատկագոյն յոյզս կրից:

Այսպէս իմաստաւնն նկարագրէ զԱհա-
րոն, յորժամ կկաց նաընդ մէջ մեռելոց և
կենդանեաց՝ զինցանել զցանումն տեսաւն
՚ի կոտորել նորա զժողովներդն.

«Փութացեալ այրն անարտա, մատեաւ
յառաջ ՚ի կոի իւրով պաշտաման զինուն,
ազօֆիւք և խնկօք ուղերձեալ զքաւու-

թիւնն. եկաց ընդգէմ բարկութեանն, և արար վախճան հարուածոցն, յայտ արարեալ թէ քո ձառայ է: Յաղթեաց բազում ամբոխի, ոչ զօրութեամբ մարմնոյ, և ոչ զիսոց ազդեցութեամբ, այլ բանին զտանիթին հնազանդեաց: Զերգմունս և ըզդաշինն հարցն յիշատակեալ, զշեղջուղջ զիականյն անկերոց առ միմեանս, կացեալ ՚ի մէջ, գաղարեցոյց զբարկութիւն. և հերձ ճանապարհ ընդ մէջ կենդանեաց և մեռելցոց: Քանդի ՚ի պազնաւոր հանդերձն էր ամենայն զարդն, և փառք հարցն ՚ի չորեքարգեան ականսն քանդակեալս, և մեծութիւն քո թագ ՚ի գլուխ նորա, Յայնց խորշեցաւ սատակիչն, և ՚ի նոցունց զարհուրեցաւ»:

Այսպէս և յորժամնկարազրէ զալաշուպանել Աստուծոյ զարդարս.

«Բայց արդարք յափանան կեցցեն, և ՚ի տեառնէ վարձք նոցա, և խնամք նոցա ՚ի Բարձրելցն... Զի աջոկ իւրով հովանի լիցի նոցա, և բաղկաւ իւրով վերակացու լիցի նոցա: Այսէ սպառազինութիւն զնախանձ իւր, և վառեսցէ զարարածս առ ՚ի խնդրելց զվրէմս ՚ի թշնամեաց: Զգեցցի զրահս զարդարութիւն, և զիցէ սաղաւարտ զբատաստանն անոչառ: Այսէ վահան զբրութիւն անվկանդ, և սրեացէ զհատու բարկութիւնն ՚ի սուսեր. և պատերազմեսցի խառն ընդ նմա և աշխարհս առ անդգամս: Պնասցեն նետք կորովիր

վայյատականց. և իրրե ՚ի լայնալիճ աղեղանէ յամոցցն սոտիցեն ՚ի նպատակս, և ՚ի քարընկէց բարկութենէ թափեսցի մավկարկուտ: Զայրագնեսցի ՚ի վերայ նոցա ջուր ծովու, և գեաքը ողովեսցին անխնայ: ՚ի դիմի հարցի նոցա հոգմն բոնութեան, և իրրե զմբրիկի հոսեսցէ զնասա: Աւերեսցէ զամենացն երկիր անօրէնութիւն, և խարդարդանեսցէ զաթոսս բռնաւորաց»:

Այսպէս և Յորայն ստորագրութիւն երիվարին.

«Որոտայ ՚ի դաշտի և դոփր հատանէ, և լանէ ՚ի դաշտ գորութեամբ. ՚ի պատահել նեափց՝ արհամարհէց, և ոչ զարձգի յերկաթոյ: ՚ի վերայ նորա չողան աղ/զն և սուսեր, և շարմին վահանի և նիզակի. և բարկութեամբ ապականէ զերկիր: Եւ ոչ հաւատայ մինչև փող հարկանիցի. և իրրե փող հարկանի, նա վաշ վաշ կարգայ. ՚ի հեռաստանէ սունու զհոս պատերազմի, վազս առնելով և փանչելով»:

Ըստ սմին օրինակի և Յուսի զատակումն թագաւորին բագելցւոց նկարագրէ.

«Եւ եղիցի յաւոր յայնմիկ հանգուսցէ զքեղ աէր ՚ի յաւոց և ՚ի սրտմառութենէ քումմէ, և ՚ի ձառայութենէ իստութեան զոր ծառոցեցեր նոցա: Եւ առցես զօղս զայս ՚ի վերայ թագաւորին բարեացւոց, և ասասցես յաւոր յայնմիկ. զիարդ զա-

գարեալ կայ պահանջողն, հսնգեաւ տագնապողն, զի խորտակեաց տէր զուծ մեղաւորացն, զուծ իշխանաց... Հսնգեաւ յուսով երկիր ամենայն և գոչէ արախութեամբ. և փայտքն Լիբանանու ոտնհարեղն քեզ, և մայրքն Լիբանանու ասեն, թէ յօրմէ հետէ գու գաղարեցեր, ոչ ելին 'ի մեղ փայտահարք: Գիտուք 'ի ներքուստ գառնացան 'ի պատահելն քեզ. կանգնեցան միանգամայն հսկայքն ամենայն որ լեալ էին իշխանք երկիր, որ յարուցին յաթուոց իւրեանց զամենայն թագաւորս աղզաց: Ամենեքեան պատախանի տացեն քեզ և ասացեն. և գու իրրե զեղը ըմբռնեցար, և ընդ մեղ համարեցար. իշին 'ի գժուխ փառք քո և բազում՝ ուրախութիւնն քո»:

ԴԱՍ ԻԳ

ՈՃ պարզ, և բարեխառն:

Հ. ՈՐ Է պարզ ոճն.

— Յորում ճարտարախոսն դիւրիմաց բանիք և ընտիր ասացուածովք զարդս բնականս 'ի կիր առնու, զոր Որատիս ինքնազարդ կոճէ զոճն զայն. որպէս բազում ուրեք 'ի պատմութեանն Եղիշէ և մանաւանդ 'ի յառաջարանն է տեսանել. զոր օրինակ.

«Թէպէտ և ոչ իցեմբ բաւական տսել զա-

մենայն չարիսն՝ որ անցին անդէն 'ի կարաւանին ընդ գունդն Հայոց, սակայն և ոչ լրել կամմիք ծածկելով զվիշսու նեղութեանն. այլ ասասցուք փոքր 'ի շատէ, զի ձայնակիցք լիցուք այնոցիկ՝ որք գառնապէս զմեղ ողբային: Զի և գու իրրե լուիցես, ոչ սակաւ արտասուս հեղուցուս 'ի վերայ ազգին թշուառութեան»:

«Մինչեւ ցայսվայր ոչ ինչ կարի զանգիւտէի պատմել զշարուածս աղզիս մերոյ, որ յարտաքին թշամենացն ճշմարտութեան չարաչար յարեան 'ի վերայ մեր. որք սակաւգոյնք հարին զմեղ, և յոլովագոյնք հարեալ գտան 'ի մէնջ, քանզի դեռ ևս միարանք և հաւասարք էաք: Թէպէտ և ոմանք 'ի ծածուկ ունէին զերկմտութիւն նենգութեանն, սակայն յաչս արտաքնոցն ահաւոր երեւէր միաբանութիւնն:.. Արդ յայսմէնտէ և անդր, որ սպազեալ անկանի երկապակութիւն 'ի ներքս, ընդ քակել միաբանութեանն և երկնաւոր առաքինութիւնն հեռանայ. և անձնընտիք լինեղով, յոյժ բազմանաց լալումն ողբոյս»:

«Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. և այնպէս աներկիւդս առնէ զմարդիկ, իրրե զանմարմին զօրս հրեշտակաց. որպէս անդստին 'ի սկզբանէ է տեսանել զբազումն բազում անդամ 'ի բազում տեղիս: Մարդիկ որ սիրով Աստուծոյ իրրե զինու վառեալք էին, ոչ ինչ խնացեցին զանդիտելով ի-

բրեւ զանարի՛ գոլով վատասիրոք կամ՝ 'ի
մահ անձանց, կամ՝ յափշտակութիւն ըն-
չից, կամ՝ 'ի խողիսողումն սիրելեաց, կամ
'ի գերութիւն ընտանեաց, եւանել՝ 'ի հայ-
րենի երկրէն և անկանել՝ 'ի ստրկութիւն
յօտարութեան. առ ոչինչ համարեցան
զայս ամենայն անցս չարչաբանաց. այլ
միայն միաբան կալ ընդ Աստուծոյ, զի 'ի
նմանէ միայն մի գերի ելցեն »:

Հանգոյն իմն ոճով և Յնորհալին բա-
զում ուրեք՝ 'ի թուղթման վարի. զոր օրի-
նակ .

« Զարթէաք որպէս 'ի քնոյ զուարթաբարս
բանիք՝ որ 'ի սուրբ թագաւորութենէդ.
որով պատառեցաւ քուրձ սոյ առ 'ի
մէնջ, և զգեցաք զուրախութիւն բատ զո-
հաբանութեան սուրբ մարգարէին՝ որ յա-
զագս Աստուծոյ. Քանդի ծանոյց մեզ զօ-
րութիւն բանիս, ոչ մի ոյն անուանակցու-
թեան ճշմարտին էմմանուէլի արժանաւո-
րել ձեզ, այնմ՝ որ հարիւրոցն ոչխարաց
և դրամոյն տասանց էջ՝ 'ի խնդիր նուա-
զութիւնացն լրման... Քանդի զցանկ օրի-
նացն զոր խրամատեաց թնամին, և
զուռսն հաւատոյ՝ զոր քանդեաց կինձն
վայրենի 'ի ճշմարիտ որթոյն, փութալ
խրամակարկատ լինել, և առ նոյն պա-
տուաստել վերատին, և այսմ բարտց զոր-
ծակից լինել զմերս տկարութիւն հրամա-
յեալ էր եղբօրն իմոյ առաքել՝ 'ի սուրբ
թագաւորութենէդ »:

Հ. Ո՞ր է բարեխառն ոճն .
— Որ ոչ զպարզին ունի փափկութիւն,
ոչ գմւեմին շանթիչ զօրութիւն, այլ հա-
զորդի երկաքանչփոցն. որպիսիք են
բազմագոյք 'ի ճառից Բակեբերանին. զոր
օրինակ .

« Ազէ ասա, 'ի պէտս բնակութեան սիւնք
բաղրումք և խոյակըն ախաւեղազէսր, և
աղջի ազգի զիմակը պատկերացն, և ոսկի
խառնեալ ընդ նկարս որմայն, և այլ ևս
համարդառ գունակի երանգոցն, և աղ-
ջի աղջի գեղքն ընդ միմեամս 'ի ճամուկն
մտեալ, զինչ օգուտ իցէ, այլ հապարտու-
թեան և պարձանաց և յօրանալոյ պատ-
ճառք են և աւելորդ անմասութեան: Ամե-
նայն որեք կարեւորաց պէտք են՝ որով
կարօտ իցեմք, և զպէտմն վճարիցեմք:
Տեսանես, զի վեաս է և ոչ օգուտ, և ա-
ւելորդ և անշահ. զի թէ աւելի պէտս ինչ
չտայցէ, և ոչ վեցելչութիւն երեսաց:
Քանդի յորդամ ժամանակ 'ի վերաց ան-
ցանիցէ, յագի ակն, և չթուի ինչ վայե-
լուչ, և չտայ զայն իմանալ սնապարծու-
թիւնն: Պաւզոս և զոր շահն կարծէր, զայն
վեսս համարէր վասն Քրիստոսի: Մինչև
ցերը ընդ երկիր բեկեսիմք, մինչև ցերը
չնայիցիմք ընդ երկինս: Չտեսանիցէք ըզ-
ծերացեալմն, զիարդ և ոչ զմիոյ ինչ զա-
խորժելցն յիշեն. չտեսանիցէք զվախճա-
նեալմն, զուանս 'ի ծերութեան, զուանս
'ի մանկութեան . չտեսանիցէք զբազումն

իսկ կենդանւոյն զրկեալս յընչցին. զի՞ այն չափ ծնգիցիք ընդ չկայսս և չմնալիս. ընդէ՞ր այդշափ կապեալ իցեմք ընդ վեասակարսս. մինչեւ ցերբ ոչ հարկանիցեմք բռուն զիրայիցն և զմնացելոց »:

Սովին ոճով և Եղիշէ վարդապետ նկարագրէ զերաննիլի կանայս սուրբ նախարարացն նահատակելոց .

« Բազում՝ ձմերաց հալեցան սառնամանք. եհաս գարուն, և եկին նորեկ ծիծունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նորա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց. Ծաղիկը գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա. Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց. բնագրօք յիշատակեցան նորա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա 'ի հեռաստանէ: Ի ճաշատեղս նոցա հայեցան, և արտասուեցին. և յամենայն տտեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ 'ի նուա: Եւ իրբեւ այնպէս յամենայն կողմանց պէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն. Արտաքնոցն երեկին իրբեւ այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և միմիթարեալք եր-

կնաւոր սիրովն: Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ որ 'ի հեռաստանէ, եթէ Երբ լինիցի մեղ տեսանել զմիրելիսն մեր. այդ այն էին իլզք աղօթից նոցա առ. Աստուած, եթէ որպէս սկսանն քաջութեամբ 'ի նմին կատարենցին լի երկնաւոր սիրովն »:

Դարձեալ նոյն ինքն 'ի յառաջարան երկրորդ գլուխն.

« Որոց ողիկն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն, յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոց. յամենայն կողմոց շարժի, յամենայն բանէ խոռովի, և յամենայն իրաց գողաց. երազագէտ է այնպիսին 'ի կեանս իւրում, և յանգիւտ կորուսան յուղարկի 'ի մահուան իւրում: Որպէս և ասաց ոմն 'ի հնումն. Մահ ոչ իմացեալ մահ է. մահ իմացեալ անմահութիւն է. որ զմահ ոչ զիտէ, երկնչի 'ի մահուանէ. իսկ որ զիտէ զմահ ոչ երկնչի 'ի մահուանէ. և այս ամենայն շարիք մտանեն 'ի միտս մարդոց յանուսումնութենէ: Կոյր զրկի 'ի ճառագայթից արեգական, և տղիտութիւն զրկի 'ի կատարեալ կենաց. լուէ կոյր աչք քան կոյր մտօք, որպէս մեծ հոգի քան զմարմին, այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց »:

ԴԱՅ ԻԴ

Ընարքութիւնք ոճյ:

Հ. Ո՞ր յերկից աստի կերպարանաց բառնի ընարքելագոյն իցէ.

— Երեքեան իսկ գովլիք են, այլ վսեմն գերազայն քան զայլս, և պարահ ճարտասանին ըստ իմաստից ճառին զերեսեան ևս ՚ի կիր արկանել, քանդի պարառութեամբ երեցունցս այսոցիկ յարգարի ճարտարախօս կատարեալ,

Այլ զժուարին է յոյժ այսոցիկ յումեք՝ ՚ի միասին պատահել, և յոյժ զիւրին երեքումբն իսկ զեղանել, զպարզութիւն փոխեալ ՚ի գծութիւն, զզարդ ՚ի աշրանս և չարուեստակութիւն, և զվսեմութիւն ՚ի ճռում ճամարտակութիւն:

Հ. Բովանդակեան ինձ որ ինչ այլ ևս գիտելիք իցեն զօնոյ.

— Բաց յերից ճարտասանական կերպարանաց ասացուածոյ, են և ուսումնականն, և բնիկ պատմականն, և լակոնական՝ որ յարձանադիրս և այլ ուրեկ ուրեք վարի: Առա օտար յամենայն զարդուց՝ զկարեսըն և եթ բացատրեն:

Օրինակ ուսումնականին յաճախ ուրեք գտանի ՚ի զիրս Եղնկայ. զոր օրինակ.

« Յորժամ անիւ մշանակիցի, և մըիւն մի ՚ի խեցին զնայցէ յարեմուց կողմանէ

ընդ արեւելս, վասն անուին արագագոյն ընդ արեւմտից կողմն ըթելոյ թուի թէ մըրջիւնն յարեւելից յարեւմուտս կոյս ընթանայցէ. որ ոչ յարեւելից յարեւմուտս կողմն գնայցէ, այլ յարեւմտից յարեւելս, և անիւն ստէպ մշկելովն այնպէս երեւեցուցանէ»:

« Եւ օդ ընդ ջուրս և ընդ երկիր խառն է. և զի ընդ ջուրս օդ խառն է, ՚ի զեռնոցն յայտ ՚ի որ ՚ի ջուրս զօդոյն կենդանութիւնն ծծեն: Եւ զի ընդ երկիր նոյն օդ խառն է, յորժամ անձրւել ևնալ իցէ, և արեւատայցէ, ՚ի գոլորշոյն որ ՚ի սրոտէ երկիրն ՚ի վեր ցոլանայ՝ յայտ յանդիման երկիր: Եւ զի ընդ օդս հուր խառն է, ՚ի փայլատականցն որ ՚ի շինելոյ ընդ միմեանն հողմոյն և ամպօց արձակին յայտ յանդիման ցուցանին: Եւ դարձեալ, թէ յապակի սպիտակ ջուր արկեակ՝ յարեւու ունիցիս, լուսաւորութեան արեւուն մոտեալ ընդ սպիտակութիւն ապակւոյն, և ընդ յստակութիւն ջրոյն օդով թափանցանց անցեալ, հուր ծնուցանէ»:

Յօրինակ պատմականին շատ իսկ են պատմութիւնք սուրբ զրոց, և մանաւանդ աւետարանին Պուկայ և գործոց առաքելոց. որոց յառաջաբանքն զեղեցիկը են յոյժ, ամենենին անզարդ բացատրութեամբն.

« Քանդի բաղումք յօժարեցան վերստին կարգել զպատմութիւնն վասն իրացն հաս-

տառաելոց՝ ՚ի մեզ, որպէս աւանդեցին մեզ
որ՝ ՚ի սկզբանէ ականատես և սպասաւոք
եղն բանին՝ կամ եղեւ և ինձ, որ՝ ՚ի սկզբ-
րանէ զհետ երթեալ ՚ի ամենայնի ճշմար-
տութեամբ, կարգաւ զրել քեզ, քաջդ
թէոփիէ, զի ծանիցիս զրանիցն որոց ա-
շեկրտեցար՝ զնշմարտութիւն»:

Սոյնաէս և նախազրութիւնը սուրբ
զրոց գեղեցիկը են յոյժ. համասոտ և ա-
ռանց աւելցուցաց զպատճառս և զհանգա-
մանս զրոց իրագանչիւր բացատրելով:
Յրինակ իմն նախազրութիւն իմաստու-
թեամն.

«Բազում զիրս երեւեցուցանեն զոլ Առող-
մնի՝ ասացեալին զնմանէ երիս հազար
առակիս, և հինգ հազար օրհնութիւնս. զոր
կէսք յԱռակն և յԵրգերգոցն իմանան,
և այլք՝ թէ չէ բովանդակն՝ ՚ի միջի: Արդ
զկարծիս զայս կոլցի որ որպէս և ախոր-
ծէ: Այլ առ այս զիրք՝ ոմանք կարծեօք
վարեցան, իբր թէ չէ նորա. բայց բա-
զում բնութեամին ստուգեցաւ նորա զոլ,
և ընդ առաջին զիրսն հարազատ, որպէս
սիպք բանիցն և զօրութիւն իմաստիցն
յայսնէ, հաւասարագօր զոլով առաջնոց
զրեանց, թէ և սուզ ինչ զանազանի, որ-
պէս մազովոն յԱռակացն, և երգեր-
զոցն յերկոցունց. որով մեծ հարստու-
թիւնն նորա յիմաստ և ՚ի բանս ցուցա-
նի: Նոյնպէս և այս զիրք առաստագոյն
բանիւ խրատէ զլուզմն սիրել բարդարու-

թիւն՝ որով կարսացեն ընդունել զուրբ
Հոգին. և փախչել ՚ի կորուսիչ խորհր-
դոց ամարշտաց, որք թէպէտ ժամանա-
կօք և ծննդովք բազմանան, փուտք են և
զաղփաղփունք: Եւ զի վայելեսցեն ար-
դարք զանճառ բարութիւնս. որ թէպէտ
և անզաւակք կամ կարճակեացք, այլ
անմահութեան յուսով հաստատեալք, և
թէ ՚ի պատուհասիլ անզգամացն նորա
միծապէս փառաւորենացին: Խրատէ զթա-
գաւոր՝ և որք վերնոյ թագին փափակեն՝
պատուել զիմաստութիւն, որով յափ-
տեան թագաւորենացին. և հաստատէ ըզ-
բանն բազում վկացիք, ինքեամիք և այ-
լովք՝ որք պատուեցին զմաստութիւն և
փառաւորեցան, և այլովք՝ որ վարեցան
անզգամատութեամիք և պատուհասեցան»:

Հ. Ո՞ր իցէ բակոնական ոճն.

— Ամենեին հսկիրմն և սուր: Եւ կա-
լու առ զանունն ՚ի լակոնացւոց անտի, որ
են սպարտացիք. քանզի սոյցա կարի ա-
խորժական եր ոճս այս, և ատելի յոյժ
պերճախօսութիւնն: Որով առ բազում ըս-
պառնալիս թշնամեաց ետուն պատասխա-
նի միով յունական վանկիւ որ նշանակէ
Եթէ. իբր ասել, Եթէ կարող իցէք: Սոյն-
պէս և առ սպառնալիս Փիլիսպեայ ար-
քային մակեդոնացւոց ետուն պատասխա-
նի. «Դիտնեսիս ՚ի Կորնթոս». իբր ա-
սել. Քիշեա Պիտնեսիս՝ որ բանակալեն
չանացը որպէս զքեզ. և այժմ տարագիր

՚ի թագաւորութենէ սլանդխոտի ՚ի կորն-
թոս:

Արդ ոճս այս կարի յարմար է և կարենը
արձանագրի. այսպիսի էր արձանագրի
բագնին յԱթէնս, « Անծանօթի Աստու-
ծոյ ». յայտ առնելով զի բագինն այն նը-
լիքեալ էր ՚ի ժողովրդենէն աթենացւոց
սատուծոյ ումենին՝ որ անծանօթ էր նոցա:

Որպիսի էր և արձանագրի աշտարակին
Փարոսի յԵզիկատոս.

« Սոստրատ կնիդացի, Դեքսիփանեայ որ-
դի, դիցն պահպանաց վասն նաւորդաց »: Զի խորսամանկ ճարտարապետին, հրամա-
նաւ Պաղոմեաց Եզրայրասիրի զշինուածն
զայն կանդնեալ, ուր լապտեր ՚ի բարձու
լուսատու նաւաց եկաւորաց վառէր, խար-
դախութեամբ զիւրն ՚ի նմա զրոշմեաց զա-
նուն. իբր թէ ինքն Սոստրատ կնիդացի,
որ էր որդի Դեքսիփանեայ, նուիրէր զայն
դիցն խնամակալուաց նաւելոցն ընդ ծով,
զի ՚ի լոյս լապտերին զիւրութեամբ մոցին
նաւորդը ՚ի նաւահանգիստ անդր ՚ի զիւրի:

Այսպէս և ՚ի վաղեմի ուրեմն շիրմի
տղայոյ ուրուք մանկան, զոր մայրն կան-
գնէ վաղամենիկ որդեկին, գտանի զբոշ-
մեալ արձանագրիս այս. « Զոր զու ինձ
պարտէիրն, ընկալ ՚ի մօրէս »:

Այնպէս գեղեցիկ է ոճս այս յարձանա-
գիրս, զի ազգու ևս է յոյժ քան զարձա-
նագիրս քերթողականս ճոխս յօրինեալս
չսփու:

ԴԱԱ ԻԵ

Կըթութիւն ոճոյ:

Հ. Ո՞րպէս մարթ իցէ ստանալ ոճ վայե-
լուչ:

— Նախ քան զամենայն պարտ է ՚ի շա-
րագրեալ քաջ խորհել և ՚ի միտ առնուլ
որ ինչ առաջի կայ ասել. զի եթէ ոչ կար-
գաւ և բացայստ ՚ի միտսն ոք ունիցի զի-
մասսս, անհնարին է թէ բարուոք բացա-
տրեսցէ զայնս:

Երրորդ՝ կրթել զանձն ՚ի գրութիւն, և
այն հանգարտութեամբ և ոչ շտապաւ և
վեր ՚ի վերոյ. և մանաւանդ ՚ի սկզբան անդ
վարժից. զի ապա հանդարտութեամբ և
ուշով մարթի զշնարաւորն ստանալ շարա-
գրութիւն:

Երրորդ՝ յետ ժամանակի առնուլ զշա-
րագրեալն ՚ի քննութիւն, և զթերութիւնս
նորա հետազուել. յղկել զայն և կոկել և
զաւելորդս ՚ի նմանէ յապաւել:

Չորրորդ՝ վերծանել մտադրութեամբ ըղ-
քաջ մատենագիրս, և քննել զոճ նոցա և
զեղանակ բացատրութեանցն. օրինակել
հատուածս ինչ ՚ի նոցանէ, կամ ուսանել
՚ի բերան:

Հինգերորդ՝ ՚ի միտ առնուլ զիմասսս
հատուածոց ինչ յընտիր մատենագրաց, և
շարագրեալ զայն ՚ի մտաց՝ բաղդատել
ապա ընդ բնագրին:

Վեցերորդ՝ բատ իմաստից իւրաքանչիւր զեղանակ բանին յարմարել. զի չէ վայեւ լուչ քերթողարար յօրինել զբանն ուր ճշգրտաբանութեան փաստից պէտք իցեն կամ պարզ պատմութեան:

Եօթներորդ՝ ընթեռնուլ զդիրս քննաբանից և հուեսորաց վարժապետաց արուեստին, և 'ի միտ առնուլ վկանոնս ճարտասանութեան աւանդեալս 'ի նոցանէ, զթերութիւնս' յորոց պարտ է զզոյշմնել:

Հ. Իցէ՛ և այլ ինչ հնար կրթելոյ և յարդարելոյ զո՞ծ.

— Է իսկ, բայց լեզուազիւտաց և եթ պահեաւ, քանզի սացա դիւրագոյն յոյժ մարթէ կրթել զո՞ծ իւրեանց՝ պարապելով. 'ի թարգմանութիւն ընտիր մատենազրաց, պահերով ըստ կարի զնզութիւն առանց ստնանեց յատկութեանց լնիկ բարբառոյն: Զի այլ են քերականական կանոնք և յատկութիւն լեզուաց իւրաքանչիւր, և այլ եղանակ ասացուածոց նոյցա և իւրաքանչիւր ուրուք 'ի մատենազրաց:

Ալդ պարտ է թարգմանչին զքերականական կանոնս նոյցա և զյատկութիւնս փոխել յիւրն, այլ ոչ զեղանակ բացարութեանց նոցա. ապա թէ ոչ, միօրինակ ընդ զրչու նորա խօսենցին մատենազիրք ամենայն, ընտիրն և հետեակ. և ոչ ևս այնուշետե մատենազիրն, այլ թարգմանիչն իցէ՛ որ Խօսիցի: Թարգմա-

նութիւն այսպիսի սակաւ կամ ոչ ինչ օդ-նէ 'ի կրթել զո՞ծ, ոչ միայն զընթերցողաց, այլ և զթարգմանչին: Իսկ որ ճգնի ոչ ինչ ուելի կամ պահաս ասել քան զընապիրն, և սեփականէ իւր զտիպս կերպարանաց բանից նորա, այնպէս կրթի ոճ իւր, զի և 'ի գրելն յոնձնէ՛ հանգոյն նմին յօրինէ զեղանակ ասացուածոցն, և ընտիր զրացատութիւնն: Իսկ քերականական ոճ նորա ընտիր ևս յօրինէ՛. զի որ հանգերձ կալոնօթ թարգմանութեան պահէ զո՞ծ և զյատկութիւնս լնիկ բարբառոյն, յօրժամ' աղատ 'ի կապանաց անսի իցէ՛, յայտ է զի ընտիր ևս հայկաբանէ՛:

Հ. Եւ որպէս մարթ իցէ վարժել 'ի քաջ թարգմանութիւն.

— Յորմէ լեզուէ թարգմանել ինչ ոք և կամիցի, պարտ է նմա ընդ բնագիրս այնր լեզուի բազդատել զընափիր թարգմանութիւնս: Եւ քանզի թարգմանութիւնը նախնեաց մերոց 'ի հին լեզուս և եթ ամիսովին, առ 'ի վարժս թարգմանութեան արզի լեզուաց հարկ է զարձեալ 'ի սուրբ զիրս զիմել: Զի որովհետե առաւելազոյն 'ի նոսսա պահի ճշցութիւն, և երկարանչիւր թարգմանութիւնք, մերն և այլոց, յար և նման նն ընազրին, որով և ընդ իւեարս գտանին համեմատք, որ բազդատէն զնոսսա տեսանէ զինչ մասնկունս և բառս իտալացին. կոմ գառզիացին և այն, յատելու առ 'ի պահել զյատկութիւնո լեզուի իւ-

բոյ, և թէ որ ոճ նոցա ործւմ 'ի մերոցս
համեմատիցի: Օգտակարագոյն ևս լիցի
բաղդատութիւնս այս, եթէ ընտրեսցին և
'ի սուրբ գրոց ընտրելագոյն մատենա-
գրեալքն, որպէս Գործք առաքելցին, աւե-
տարանն Ղուկայ, Խմաստութեան գիրքն
և Յուղիթայ և այն:

Հ. Որպէս մարթի լիցէ ստանալ զյիշողու-
թիւն, և ուսանել ինչ զիւրաւ 'ի բերան.

— Որպէս ամենայն զօրութիւնք մտաց
վարժիւք և կրթութեալք առաւելուն, այս-
պէս և յիշողութիւնն. Նմին իրի ոչ է պարտ
թողուլ երբէք անգործ զյիշողականն զօ-
րութիւն, այլ ստէպ ուսանել 'ի բերան
զհատուածս ինչ ճապից կամ քերթուածոց
գեղեցիկս, և ստէպ արտասանել զայնս:

Երկրորդ՝ նախ քան զուսանելն ինչ 'ի
բերան քննել զմասունս նորա, և 'ի միտ
առնուլ զիմաստու:

Երրորդ՝ եթէ երկայն ինչ լիցէ, բաժա-
նել զայն 'ի մասունս:

Չորրորդ՝ ինքնին գրել զուսանելիսն, և
մի փոխել զգրեալն. զի ձեւք իսկ գրուա-
ծոյն և եղծուածք օգնեն յիշողութեան:

Հինգերորդ՝ 'ի սկզբան անդ մի 'ի ձայն,
այլ լրութեամբ ուսանել, և ասպա բար-
ձրաձայն յեղյեղել զուսեալն:

Վեցերորդ՝ ուսանել յանօթուց և ընդ
առաւօտս զեռ անխօնջ մտօք, մինչչե-
ծանրացեալ 'ի խորհրդոց:

Ետքներորդ՝ յերեկոյի նախ քան զմտա-

նել 'ի մահիճս ընթեռնուկ զուսանելիսն
միանգամմ կամ երկիցս մտաղրութեամբ,
զի գիշերացին հանգստեանն 'ի վերաց ե-
կեալ խորագոյն տալաւորէ զայնոսիկ 'ի
մրսու:

Ութերորդ՝ օգնեն և նշանք-ինչ արտա-
քինք 'ի յիշեցուցանել զուսանելիսն:

Այլ առաւել քան զամենայն զդաստ
կեանք և հանգարտութիւնն մտաց, որ և
առ ամենայն ազգի ազգի վարժս զիտու-
թեանց և հանձարոյ անհրաժեշտ կարե-
ւորք են:

ԴԱՍ ԻԶ

Տրամաբանական ձեռնարկք. — Հաւաքարանու-
թիւն. — Հնարք:

Հ. Աւելրորդ ուրեմն լիցեն տրամաբա-
նին ցուրա և առաջակի ձեռնարկք, զի
տէս ճարտասանն հզօրագոյն ևս համոզէ
հանդերձ զուարձութեամբ 'ի ձեռն ձեռցն
և հնարից արուեստին.

— Արդարեւ հռետորականին ձեք և հը-
նարք օգնեն յոյժ 'ի համոզել, այլ առանց
տրամաբանութեան զի անկենդան է ճար-
տասանութիւնն, և շունչ իմն և հողի նորա
ևն ձեռնարկութիւնք բունական արուես-
տին. որպէս զի յեղանակ բացատրու-
թեանն և եթ զանազանին տրամաբանն և
ճարտասան. զի ուր նա կարգաւ զառա-
6

ջարկութիւնսն դասէ, և ակն յանդիման պատրաստէ զվարմնն, սա վեր՝ ի վայր փու փոխէ զկարգն, և սեթեեթիւք զվարմնն ծածկէ, ոչ խրուցանհելով դորսն:

Հ. Ի՞ր ապա յօրինէ ճարտասանն դժաւաքաբանութիւն.

Հաւաքաբանութիւնն է ձեռնարկութիւն, յորում՝ ի զնել երկուց առաջարկութեանց՝ հարկաւ երրորդ իմն յառաջ դայ:

Արդ զոր պարտն էր տրամարանին կարգել այսպէս.

Մեռանի այն որ կենսաւորն է. իսկ կրակն չէ կենսաւոր, Ալլա և չմեռանի. այսպէս կարգէ զայն Եղիշէ վարդապետ՝ ի ձև ճարտասանական:

Մեռանի այն որ շնչէն և շարմի և գնայ և ուտէ և ըմպէ.

Ե՞րբ տեսեր գու զկրակ զնայուն կամ խօսուն կամ գիտուն.

Արդ զոր կենցանի քո չէ տեսեալ, մեռեալ խոստովանիս:

Եւ Ոսկեբերան դժաւաքաբանութիւնս զայս.

Կեղծաւոր է, որոյ գործք հակառակը են բանիցն.

Իսկ արդ գու զամենայն ցոյցս ուրախութեան ՚ի քեզ բերես, յորժամ ասեսդ առ Աստուած՝ ՚ի սուգ և ՚ի արտմութեան կալ.

Ապա կեղծաւոր ես, և խաբել հնարիս զԱստուած. — այսպէս յօրինէ ՚ի ձև ճարտասանական.

« Զի՞նչ գործես, մատուցեալ Աստուածոյ ազօթս մատուցանես, և շուրջանակի կուռ յոսկի համակիս, ՚ի հիւսս ոսկեմանս ընդելուզեամ մարգարտով: Միթէ ՚ի կաքան իջանես, ՚ի պար անցանիցես, ՚ի հարսանիս խնծղայցես, միթէ ՚ի զեղօն յառնիցես և ՚ի ցոյց շվարիցիս. անդ պիտոյ է ոսկին և մարգարիտն ընդելուզեալ, անդ հանդերձքն պաճառնեալք անդէն զարդուցն ույը և ժամանակ մենթանաց, անդ սեթեեթել, և անդէն պերեեթել, աստ չէ այնմ ժամանակ, և ոչ պէտք ինչ այն պիսիք: Պաղատել եկիր, խնդրուածն մատուցանել, աղերս վասն մեղաց արկանել, ընդ յանցանացն եղձանալ, ՚ի հաշտութիւն ածել զտէրն. մի՞ զարդարիցես զանձնդ, չին այդպիսի կերպարանք խընդրուածոց: Զի՞արդ կարիցես հեծել, կամ որպէս յոգւոց հնանել և արտասուս արկանել, զիարդ հաշելով հառաչելով զազօթսն մատուցանիցես: Յորժամ՝ այդպիսի կերպարան ունիցիս և արտասուիցես, ծաղրկայցս բազմաց և կատականք տեսողաց: Զմարթի, յոսկի համակեալ, և արտասուս արկանել. խարէութիւն գործես, կեղծաւորութիւն ցուցանես: Յորժամ՝ ՚ի նոյն մըտաց, ուստի այնշափ պաճուճանք և զարդարանք ծնանին, և արտասուք ևս վիթիցն, չէ ՚ի զէպ, չէ հաւատալի: Ի բաց առ զայն կեղծաւորութիւն, քանզի չկարես զԱստուած խարել. վարձակացն և կաքաւչացն են այնպիսի կերպարանք »:

Հ. Ո՞րպէս յօրինէ ճարտասանն դէք-
նարս.

— Հնարք կոչի 'ի տրամաբանից հաւա-
քաբանութիւն անկատար. յորում միակ
առաջարկութեան ՚ի վերայ ածեմք դէե-
տեութիւն, ընդ լուսութեամբ թողեալ ըզ-
միւսն իբր ձանօթ. զոր օրինակ.

Համահայր և համամայր որդիք եմք.

Սպաս չէ պարտ մեղ հակառակ լինել
միմեանց:

Արդ զայս ձեռնարկութիւն այսպէս ՚ի
ձեւ ճարտասանութեան ածէ Եղիշէ վար-
դապետ.

« Մի է մայր մեր եկեղեցի, որ երկնեացն
զմեղ, և մի է հայր մեր սուրբ Հաղին, որ
ձնաւն զմեղ. զիա՞րդ համահարք և միոյ
մօր որդիք՝ երկարառակը լինիցին և ոչ
միաբանք »:

Դարձեալ զէնարս զայս. Ոչ միայն խօ-
սել ընդ Աստուծոյ կայ մեր առաջի, այլ
և շօշափել և ճաշակել զնս. ապա պար-
տիմք մարբել զամենայն անգամն մեր,
այսպէս կաղմէ Շնորհալի ՚ի ձեւ ճարտա-
սանական.

« Զի ոչ միայն խօսել ընդ Աստուծոյ ըստ
Մովսեսի կայ մեր առաջի, և կամ տեսա-
նել դյետոյսն Աստուծոյ, այլ և ձեռօք
շօշափել զանշօստիկին, և ըրթամքը համ-
բուրել զուրն, և բերանով ճաշակել զիե-
րակրիչն ամենայնի, և ՚ի սիրտս ընդունել
և հոգւով միանալ Ըստ նոյն, և լինել

աստուծած ընորհօք՝ ընդ Աստուծոյ միաւո-
րելով։ Վասն որոյ զուեսանելիս և զմե-
լիս և զիեզու և զամենայն անգամ խրա-
տեցէք ՚ի բարիս շարժել, ՚ի չարիս անշարժ
մնալ, և ողջախոհութեամբ և սրբութեամբ
յաշխարհական^ն ցանկութեանց և զրոսա-
նաց զմիստ ամիսոփելով, և ապա յերկնա-
յին խորհրդոյն սպասաւորութիւն մերձե-
նայցէք »։

Եւ Ուսկերերան դարձեալ զէնարս զայս.
Կնչեցիսակին ՚ի տէր հանգչին մանաւանդ
և պսակին, ապա չէ պարտ տրտմել ընդ
մաց նոցա, այսպէս ճարտասանէ.

« Այլ հէծեն միշտ միտք գառնապէս, եթէ
յու եհան զմեղ Փրիստոս, և յու իջուցաք
մեր զանձին, յորթամ' տեսանիցեմք զիո-
ծողս ՚ի հրապարկս և զմիշ և զաշխա-
րանս ՚ի վերայ մեռելոց, զիա՞րդ խայտա-
ռակեն զանձինս ողբովք և կական բառ-
նալով, թէ հաւատայք, ամաշեմ ՚ի հե-
թանոսաց և ՚ի Հրէից և յայլազանգոց, և
յամեննեցունց խիլ առ հասարակ որ զայն
տեսանեն, զմեղ ծաղր առնեն; Եւ որչափ
ասիցեմ այնուհետեւ, ընդ վայր ասեմ
վասն յարութեան. և որչափ ճարտարի-
ցեմ ինչ, ոչ ընդ իմ բանսն հային հեթա-
նոսք, այլ ընդ ձեր գործսն, և անդէն
վազվազակի ասիցեն. Ո՞վ ոք ՚ի սոցանէ
կարիցէ զմահ արհամարհէլ, որ ոչ և զայ-
լոց մահ կարիցէ տեսանել; Բարւոք են
բանքն որ ՚ի Պաւղոսէ ասացան, բարւոք

և երկնից արժանիք և Աստուծոյ մարդասիրութեանն. Որ ապրեցուսցէ զայնոսիկ որ հանապազ մահուն երկիւզիւ կէին, և ՚ի վտարանդի էին ՚ի ծառայութեան: Այլ չտայցը այնմ հաւատարիմ լինել գուք, որ գործովքդ մարանչիր ընդ բանան. թէպէտ և Աստուած բազում անդամ արդել ՚ի մարդկանէ, զի բառնայցէ ՚ի միջյ զայնապիսի չար սովորութիւնն: Եւ արդ աղէ ասա, զի՞նչ յայտ առնիցեն կանթեզքն և մոմեղէնքը լուցեալք. ոչ ապաքէն իրու ըղնահատակս յուզարկեմք: Զի՞նչ ինչ յայտ և օրհնութիւնքն առնիցեն. ոչ ապաքէն զԱստուած փառաւորեմք և գոհանամք՝ թէ այսուհետեւ պասկեաց զգնացեալմն, և ապատեաց յաշխատութեանց, և հան յանցայտ աշխարհէ, առ իւր պահել զետեղ և անարան: Ոչ վասն այսորիկ են օրհնութիւնքն և սաղմուտցն պէսպէս նրագքն. և այն ամենայն յուրախութենէ սրտիցն յայտ առնին. Ուրախ որ իցէ, ասէ, սաղմաս ասիցէ»:

ԴԱՅ ԻՒ:

Մակածութիւն. — Յարացոյ:

Հ. Որպէս կազմէ ճարտասանն զմակածութիւն.

— Մակածութիւն կոչի ՚ի տրամարանից ձեռնարկութիւնն, յորում առաջադրեալ

զիրս աներկրայելիս զանձնիւր տեսակաց սեոին կամ զանհատից տեսակին, ապա հաստատենմք զնոյն զբովանդակ սեռէն կամ զանհատին. զոր օրինակ. Ցույցը, մանկան, պատառնուոյ, երիտասարդի, առն, ծերոյ և զառամելոյ իւրաքանչիւր կարիք են. ապա և ամենայն հասակաց կարիք են:

Բայց ճարտասանին ոչ են պարտք մի ըստ միոնչ զամենայն մասունս թուել, այլ համարձակագոյն վարի ձեռվու: Որպէս Նարեկացին փախանակ ասելոյ՝ չիր որ որ առանց ուղղչի կամ օժանդակութեան կարացէ գործել ինչ, ապա և ոչ ես առանց կամացն Աստուծոյ, այսպէս յօրինէ ըղբանն. «Զի ոչ երկեք հարթ ընթանայ երիվար՝ առանց սանձակալի, և ոչ նաև համբառնալ հանգէպ՝ առանց ուղղչի, և ոչ արօր կը իսկ ինչ գործէ՝ առանց մաճակուի, և ոչ երկուորեակը լծոցն ՚ի ճահ ճեմեցնեն առանց եղողի, ոչ ամազ վերաչուէ՝ առանց հողմոց, ոչ աստեղք ցնդին կամ գումորին՝ առանց ժամանակի, ոչ արեգակն փախարերեալ չընանակի՝ առանց տարրական օդոյ, և ոչ ես նորօք հանդերձ, առանց բարեգործիդ հրամանաց ակնարկութեան»:

Եւ Ուկիւրեան ՚ի լրմանէ ամենայն կանխասացութեանցն Քրիստոսի մակածութեամք զէւու բերէ և զշանգերձեալ լրումն կանխասացութեան կատարածի աշխարհիս այսպէս.

« Բազումինչ յառաջագոյն ասաց Քրիստոս . և եթէ չել այն ամենայն 'ի զլուխ , մի հաւատայցես այլոցն ևս բանից . և եթէ ելին 'ի զլուխ և կատարեցան , ընդէր երկմախցես 'ի մասցելոցն . . . Ասաց Քրիստոս եթէ Երուսաղէմ առցի , և այսպիսի աւերածով աւելիքոցն . և ել 'ի զլուխ կանխասացութիւնն : Ասաց՝ եթէ Եղիշի նեղութիւն մեծ , և եղեւ . Ասաց՝ թէ որպէս մասնանիս սերմանի , այնպէս տարածեացի քարոզութիւնն . և գնոյն տեսաննմք հանապազ ընդ ամենայն աշխարհ ընթացեալ : Ասաց՝ եթէ որք թողուցոն զշայր կամ՝ զմայր կամ զեղբարս կամ՝ զքորս , ունիցին հարս և մարս . և զայն արդեամբք իսկ տեսաննմք կատարեալ : Ասաց՝ եթէ յաշխարհի աստ նեղութիւն հասանիցէ ձեզ , այլ քաջալերեցարուք , ևս յազթեցի աշխարհի , այօմքն է՝ թէ ոչ ոք իցէ որ ձեզ յաղթիցէ . և զայս արդեամբ իսկ տեսաննմք ելեալ 'ի զլուխ : Ասաց՝ եթէ զրունք դժուխոց ոչ յաղթահարիցեն զեկեցի , և այն զի 'ի հալածանս կայցէ , և ոչ ոք իցէ որ շինուցանիցէ վրարոզութիւն . վկայեաց և այսմ հանխասացութեան փորձ իսկ իրացն . թէպէտ և կարի առանց հաւանութեան էր յորժամ զայս առէր : Ընդէր զի ամենայն բանք էին , և չեւ ևս հանզէս ցուցանէր բանիցն . որպէս զի կարի իսկ հաւատայի եղեւ այժմ : Ասաց՝ եթէ յորժամ քարոզեցի աւետրանս ընդ ա-

մենայն չեթանոսս , ապա եկեսցէ կատարած : Աշաւասիկ այսուհետեւ մօտ 'ի վախճան եկար հասոք , քանզի 'ի մեծ մասն աշխարհիս քարոզեցաւ աւետարանն . այսուհետեւ եկն եհաս կատարած , երկիցուք սիրելիք » :

Հ . Որպէս կազմէ ճարտասանն զյարացոյց .

— Յարացոյցն է մակածութիւն անկատար , զի 'ի նմանւոյ այլ ինչ նման գուշակեմբ նովաւ . զոր օրինակ Պաւլոս զշալածիչն օրէնեաց , ապա և քեզ աշակերտի նորից զնոյն պարտ է առնել :

Արդ զայս ձեռնարկութիւն այսպէս յօրինէ Լամբրոնացի :

« Պաւլոս բարեասելոցն ընդէմ օրէնեաց , զշալածիչն յանձն առ , 'ի հայհայելն աղաշեաց , և այնպիսի մաղթանօք զտիեղերս աշակերտեաց : Զքեզ հետևող նորին ո՛ուսոց չարին չար հատուցաննել » :

Սովին ձեռվ Ասկեբերան 'ի պատժոցն զոր կրեցին Հրեայր , ցուցանէ զշանդերձալ պատուհան հաւատացելոց .

« Զտպայրաբարոյսն՝ որք ոչ այնչափ ինչ յանցեան այնպիսի տանջեաց , և 'ի մեզ ինայիցէ . այլ չէ ինչ 'ի դէպ այս : Թէպէտ և զնոյն մեզս զնոյցայն մեղանչեմք , մեծամեծ տանջանաց քան զնոսա արժանի եմք : Ընդէր . զի 'ի բազում շնորհս իսկ վայելեալ , յորժամ աւելի ևս մեծամեծ քան վնոցայն յանցանիցեմք , որպիսի ինչ 6*

պատիժու ոչ կրիցեմք : . . Կամիս և այլ և բնչ լրել, ո՞րչափ ինչ վիշտ ՚ի պազեստինացոց աշխարհին կրկցին, սով, սուր, պատերազմնան, գերութիւն, ՚ի բարելացոցն, յասորեստանեայցն ՚ի մակեդոնացոց, և անհնարին չարիս ՚ի Հաղիբանոսէ և ՚ի Վեսպիանոսէ : . . Կամիս և զայլոց և չարեաց նոցա ուսանել. ընդ Յովուեփաց զիբոն անց, և անտի ուսանիս զամենայն ազէտս նոցա: Եւ արդ հաւանեցուցաք արդեօք զձեզ յայսմ տմենայնէ ևթէ զոյ գեհն: Զմտաւ ած, զի թէ նոքա տանջնցան, մեք ընդէր չպատժիցիմք. կամ զիսրդ չիցէ ՚ի զէպ մեզ պատժել, որ սաստիկ քան զնոսա յանցանս յանցանեմք, ևթէ յայտ իսկ չէ վասն զի պահեալ կան մեզ պատիժքն» :

ԴԱՍ ԽՈ

Համաբարդութիւն. — Երկայրաբանութիւն:

Հ. Ո՞րպէս կազմէ ճարտասանն զշամարդութիւն.

— Համաբարդութիւն կոչեն տրամաբանք զշար բանից, որ այնպէս յեռեալ և կապեալ են ընդ միմեանս, զի որ ՚ի վիրաց յետին ենթակային ածի հետեւթիւն նոյն հաստատի զառանցոյն: Զոր օրինակ կամեցեալ ցուցանել զանմահաթիւն հոգւոյ, ասեմք. Հողին է պարզ, ոլորդն է առանց

մասոնց, որ առանց մասանց է՝ անբաժան նելի է, անբաժանելին է անապական, անապականն է անմահ ՚ի բնէ. ասդ հոգին է անմահ ՚ի բնէ:

Արդ զսոյն ձեւ և ճարտասանն ՚ի կիրարկանէ առաւելացոյն համարձակութեամբ. որպէս Լամբրոնացի առ ՚ի ցուցանել զի առ ստացումն և պահպանութիւն հաւատաց՝ կարեւոր է արհամարհել զհանգիստ և գիտու մարմնոյ, ասէ.

« Զի հոգեւոր խորհուրդ է և ոչ մարմնաւոր, զհոգւոյ կամս պարտ է սորին հաւատաց հաւանեցուցանել և ոչ զրարբառ բերանոյ. և հոգին ոչ հաւատայ առանց հոգեալէս տեսութեան. և հողեւոր տեսութիւն ոչ լինի առանց իմաստութեան. և իմաստութիւն ոչ հաստատի առանց բանաւորապէս առարինութեան. և բանաւոր առարինութիւն ոչ ուզզի առանց մարհմայս հանգստեան և փառաց արհամարհութեան » :

Գրեթէ սովին ձևով ցուցանէ և Ռոկերեան, զի խոնարհն պատրաստ գտանի առ ամենայն վիշտ և բամբաստան:

« Վասն այնորիկ միշտ յառաջնմէն յաջորդան յառաջազդոյն հորդէ ճանապարհ պատուիրանացն, իբրեւ շար իմն ուկի առզեալ մի ըստ միուծէ զալասուիրանս: Զի յորժամ խօնարհ որ իցէ, յայտ է թէ ՚ի սուգ է վասն մեղացն. իսկ որ սգաւորն իցէ և հեղ, յայտ է թէ արդար է և ողպա-

մած. իսկ որ ոզգորմածն է և արդար, յայտ
էթէ մտախոհ և սուրբ սրտիւ է: Իսկ այն-
պիսոյն պատշաճ է, զի խաղաղարար ևս
իցէ: Իսկ որ զամենայն զուզզութիւննն
յանձին ցուցանիցէ, այնպիսին և առ ճրդ-
նութիւնսն պատրաստագյն դտանի, և
ոչ ինչ խռովի՞ յօրժամ լրիցէ բանս բամ-
բասանաց, և ոչինչ զանգիտէ՝ յօրժամ
թիւր չարչարանս յանձին կրիցէ »:

Հ. Ո՞րպէս կազմի երկայրաբանութիւն
՚ի ճարտասանից.

— Երկսայրաբանութիւն կոչեն տրամա-
բանք զձեռնարկութիւն կազմեալ յերկուց
ներհական առաջարկութեանց, որոց չիք
միջին ինչ: Որպիսի է հաշակաւոր երկսայ-
րաբանութիւնն Տերտուղիանոսի առ Տրա-
յիանոս կայսր, որոյ պատուէր տուեալ
էր՝ մի ևս ՚ի հարցիորձ քննութեան մա-
տուցանել զբրիստոնեայս, իսկ եթէ յայտ-
նեսցին, պատուհասել զնոսա:

« Կամ վասապարտք են, ասէ, քրիստո-
նեայրգ և կոմը արդար. եթէ վասափար,
ընդէր արդելուս ՚ի հարցափիրձէ. իսկ ե-
թէ արդար, հիմդատապարփես »:

Այսպիսի երկսայրաբանութեամբ Սար-
դիս վարդապետ յօրդորէ ՚ի համբերու-
թիւն զբամբասեալու.

« Եթէ որ բամբասեացն զքեզ՝ սուտ ասաց
որքան ինչ միանդամ ասաց. զինչ առ
քեզ ասացեալքն. ոչ ապաքէն ՚ի նորա
գլուխն կուտի աթբաստանութիւնն՝ որ

բամբասեացն: Ապա եթէ յիրաւի բամբա-
սեցար, առ քեզ է զայթակղութիւնն՝ ո-
րով բամբասեցարն: Ապա յերկոսին կող-
ման չէ պարտ քեզ ընդդէմ ասել ինչ,
և ոչ բամբասանացն վավարէն բամբա-
սել »:

Այսպէս և Ոսկեբերան կարճէ զբամբա-
սանս ընդդէմ մարտղաց, ցուցանելով զի
թէպէտ և ՚ի հայրենի ժառանգութենէ ոք
և թէ ՚ի վաստակոց իւրոց կերակրիցի, սա-
կայն չպարտի անգոսնել վիճուպու վասն
անգործութեան, այլ ոզորմել նոցա.

« Եւ երանի թէ այսպահ միայն, այլ վաղ-
վաղակի չարախօսութիւնք և բամբասանք
յառաջ մատչին զմուրզովէն: Ընդէր չգոր-
ծիցես, ասեն, և ընդէր զատարկ հաց
ուտիցես... Ազէ ասա, զու ՚ի գործոց ու-
նիս զինչ ունիսդ, ոչ ապաքէն զհայրենի
ժառանգութիւնն առեր: Իսկ եթէ զի գոր-
ծեսն վասն այնորիկ զայլս նախատիցես,
չմիցես Պահպասի, որ ասերն, զի յետ ա-
սելցն եթէ Որ ոչն գործիցէ, և կերիցէ
մի, ասէ. Բայց գուք զբարիս գործել մի
ձանձրանացը »:

ԴԱԱ ԻԹ.

Ազգի աղքի շարագրածք. - Քարոզ. - Պատմա-
գրութիւն. - Յղթագրութիւն:

Հ. Համառօտեսջիր ինձ որ ինչ աղզի

աղքի շարագրածաց սեփական կանոնքն իցեն, և նախ զկարեարս բեմախօսութեան կամքարողի.

— Քարոզ է բան յորդորական յուղզութիւն բարուց, և զի առանց հաւանեցուցանելց զմիաս չէ մարթ յորդորել զոք, ապա ընդ միաննախ պարտ է մաքառել.

Պարտ է հոգեոր բեմբասացութեան գոլ հանդարատ և եռանդուն. հանդարտ, զի մեծութիւն իրացն պահանջէ զայն. իսկ եռանդուն, զի ճառէ զիարեարաց առ բարութիւն մարդկան: Վասն որոյ պարտ է բեմբասացին յանձին բերել զօծութիւնն զայն խորազգէած ճշմարտութեանցն զորոց ճառէ, և զիզա քաջ տալաւորելց զայնոսիկ ՚ի սիրաս ունկնդրաց:

Պարտ է նմա զօտակարաց հոգւոյ և զալատաճից ունկնդրացն ճառել. մի զուսումնական իրաց, մի զիմաստասիրական մանրախոյզ քննութեանց, մի զտեսական խնդրոց աստուածաբանութեան, և մի ընդգէմ անհաւատից և անկրօնից յարդարել զնառն. զի քարոզի բանին առ հաւատացեալս պարտ է ճառել որոց աներկբայցի իցեն ճշմարտութիւնք կրօնից, և միայն սէտք իցեն խելամմազոյն հաւանեցուցանել զնոսս և յորդորել ՚ի կատարութեալ այնոցիկ:

Կարեռագոյն կանոնք հոգեոր բեմասացութեան են.

Ա. Պահէլ զմիութիւն. Այսինքն զի բո-

վանդակ մասունք նորա ՚ի մի ինչ ունիցին զդիտաւորութիւն:

Բ. Վասնաւորել զնիթն. այսինքն զի թէպէտ և բարուք է հասարակարար ճառել զչնաղանդութիւնէ կամ զայց առաքինութեանց, բայց լաւագոյն ևս է ամիութել զնոյնս, և մասնաւորաբար ճառել զչնաղանդութիւնէ առ ծնողս, և այլն:

Գ. Ոչ է ապարտ չանալ ՚ի սպառել զամենայն, որ ինչ մարթ իցէ ասել զառաջարկեալ բնարանէն. այլ յամենայնէ անտի զիարեարս և զգօրաւոր բանս, զի մի յափրացեալ տագուկասցին ունկնդիք:

Դ. Պարտ է մանաւանդ ՚ի գործնականս իջնել, և ճառել զիրաց՝ որ հանապազօք գործին առ մարդիկ: Զի ոչ այնալէս օգուտ է անսականաբար ճառել զառաքինութեանց և զախտից, որպէս նկարազրել զայնս ՚ի մարդիկ. որով իւրաքանչիւր ոք հանգոյն նկարազրեալ պատկերին անսանելով զանձն, տպաւորագոյն ևս կրէ ազգումն ՚ի բանիցն: Ամին իրի օգնեն յոյց և պատմական օրինակք ՚ի սուրբ գրոց:

Ե. Այլ ձես նորահնարս կամքերթողական սարակս բանի կամ զոճ իմաստափական և զտրամարանական ՚ի կիր առնուլ. զի պարտ է ոճոյ հոգեոր բեմասացութեան լինել պարզ և ինքնազարդ, պատշաճեալ առ ամենայն ունկնդիրս, և զիւրիմաց ամենեցուն: Եւ ուր ուրիք առ եռանդեան փոխարերութիւնք և այլ ևո-

Ճեք ճարտասանականք ՚ի ճահ գայցեն,
սլարտ է առանց արուեստակութեան ՚ի
կիր առնուլ զայնս. զի նողկալի է ՚ի քա-
րող բանին իդք հաճոյ լինելց ունկնդրաց,
և ցոյց պերճութեան բանից:

Զ. Զբանս սուրբ գրոց մի բռնագրօսել,
և մի զանցայտս և զդժուարիմացս ածել ՚ի
վկայութիւն. և մի գարձեալ ՚ի յայտնիս և
յանժխտելի իրս յաճախել վկայութիւնս ՚ի
սուրբ գրոց:

Հ. Զինչ կարեոր է պատմազրի.

— Պատմութիւն է ճշմարտապատում
յիշատակութիւն անցից անցելց առ ՚ի
հրահանդ և ՚ի հմառութիւն մարդկան:

Ա. Պարտ է պատմազրի չունել կողմա-
ւորութիւն:

Բ. Ոչ զամենայն գէպս պարտ է նմա
անխտիր առաջ ՚ի գիր. այլ զերեւելիս յայն-
ցանէ զցանկալիս ՚ի զիտութիւն և զօդտա-
կարս առ ՚ի խրատ. և զայնոսիկ հանդերձ
պատճառօքն և արդասեօք ստուգալտ-
տում առնել:

Գ. Մի հանդէս առնել հանճարոյ անո-
տի զարդուք և կամ աւելորդ խելամտու-
թեամբք. այլ զկարեոր խելամտութիւնս
խկ խառն ընդ պատմութեանն անզգալի
առնել, և մի ուրոյն ՚ի գլուխս կարգել
զայնս:

Դ. Պահել կարգ և միութիւն ՚ի պատ-
մութեանն, և մի սաէպ գրուագօք բանի
հատուկտիր առնել զայն

Ե. Պարզ և բացայացտ ունել ոճ, ա-
ռանց գծութեան բանից. և բաջ նկարա-
գրութեամբ իբրև ՚ի պատկերի ցուցանել
զբարս աղջաց և զիւրաբանչիւր ուրուք,
զախտս նոցա և զառաքինութիւնս, զծես
քաղաքաց և զտեղեաց, զօրէնս, զկրօնս,
զսովորութիւնս, այլովին հանդերձ:

Զ. Մի կարի երկայնաբան գոլ և մի
յոյժ կարճառօտ, այլ ՚ի միջասահմանին
կալ յերկոցունցն ևս խոյս տուեալ՝ ՚ի ծայ-
րացեղ խոտորմանց, որ տաղտկալի կամ
անալի առնեն զբատմութիւնն:

Վարդանանցն պատմութիւն ուսուցէ
քեզ զայս ամենայն:

Հ. Զինչ կարեոր է թղթազրութեան.

— Այն ամենայն որ ՚ի խօսս ընտանե-
կանս է կարեոր. այսինքն է պարզութիւն,
բնականութիւն առանց ամենայն արուես-
տակութեան, եռանդն, և համառօտու-
թիւն հանդերձ ընտիր ոճով և կիրթ ա-
խորդակօք:

Պարտ է ամենայն ուշիւ միտ զնել ՚ի
զրել զթուղթս, և թափուցանել ամեննեն
զմտադրութիւնն:

Պարտ է ըստ առաջարկութեան իրացն
փոփոխել ՚ի սմա զտիպս կերպարանաց
բանից, առաւելքան յայլ ամենայն աղջս
շարագրածոց: Այս այս վարժապետ վեհա-
զոյն լիցին Շնորհալւոյ թուղթքն:

ԴԱՍ Լ

Ակիզբն և զարդացումն ճարտասահութեան:

Հ. Ի լրումն ճարտասահուկան հմուռթեանց ցանկալի է ինձ գիտել և զսկիզբն և զզարդացումն այնոցիկ.

— Սկիզբն ճարտասահուկան արուեստին եղեւ տիրապէս յԵլլագա առ աթենացիս, որոց և կարդ տեսչութեանն օժանգակեաց 'ի զարդացումն արուեստին, զի անդ ամենացն ինչ կարեոր սահմանէր 'ի ժողովս. և ճարտարախօսք՝ որոց զօրաւորագոյնք էին քանք նոքա իշխէին 'ի ժողովս:

Պիսիստրատ ժամանակակից Առջոնի, 528 ամօք նախ քան զթուականութիւն Փրկչին, առաջն ըստ Պլուտարքեաց ճարտարախօս անուանի եկաց առ Յոյնս, որ և ճարտարախօսութեամբն զօրացեալ ըըռնակալեաց յԱթէնս:

Պերիկլէս, 450 ամօք նախ քան զթուարերութիւն Փրկչին, 'ի կատարումն էած զարուեստն յԱթէնս. որ և վասն հըզօր ճարտարախօսութեանն կոչեցաւ Ողիմպեան, իբր որոսող հանդոյն Արամազդայ: Զամանէ ասեն յօրինել նախ զրով զատենախօսութիւն:

Զէետ նորու յաւուրս պեղուանեսական մարտին յարեան Կլոն, Աւկիրիսդ, Կրի-

տիսու և թներամենէս: Ի նմին ժամանակի եկաց և թուկիդիէս պատմագիր:

Յէտ ժամանակացն Պիրիկլէս յարեան իմաստակը ոմանք հռետորք անուանեալք, որ աղաւաղեցին զարուեստն ճամարտակութեամբ ճառից. 'ի սոսա անուանիք էին Գորգիսս, Լեոնտինոս, Պրոտագորաս, Պրոտիկոս և Թրասիմոս:

Սոցա հակառակ եկաց Սոկրատ, և նուրբ և պարզ ճարտասահութեամբն տապալեաց և նշաւակեաց զիմաստակութիւն նոցա, և զարձոց զարուեստն ՚ի սկզբնաւուան գեղեցկութիւն:

Զէետ Սոկրատայ կացին Լիւսիսս, Խսոկրատ և խէոս: Բայց խէոս առաւել Գևմութենեաւ աշակերտաւն իւրով եղեւ անուանի:

Պեմութենէս, քաջն և վեհագոյն 'ի Հելլեն ճարտարախօսս, եկաց 34) ամօք նախ քան զթուականութիւն Փրկչին: Ճիզն նորա 'ի վարժս ճարտարախօսութեան, չվշատել ընդ ճախող և կլ նախընծայ ճառիցն, երկայնմասութիւն 'ի յաղթել ամենացն խափանաց՝ զորս ընութիւնն ընդգէմ եղեալ էր նմա, սորամուտ բնակութիւնն նորա ընդերկրաւ՝ առ. 'ի պարապել անզբազ յուսումն արուեստին, արտասահութիւնք նորա բարձրագոյն 'ի ծովեղերս ընդգէմ մրրկալից այեաց՝ առ 'ի սովորել ազմկի բազմամբոխ ժողովրդեան, խիճ 'ի բերանի ունել առ ուզղելոց զթլուատ լեզուին թե-

ԴԱՍ 1.

Ակեղքն և զարդացումն ճարտասանութեան:

Հ. Ի լրումն ճարտասանական հմուտւեանց ականց գիտել և զակիզբեն և զզարդացումն այնոցիկ.

— Սկիզբն ճարտասանական արուեստին եղեւ տիրապէս յԵլլագա տու աթենացիս, որոց և կարգ տեսչութեանն օժանդակեաց 'ի զարդացումն արուեստին. զի անդ ամենացն ինչ կարեոր սահմանէր 'ի ժողովս. և ճարտարախօսոք՝ որոց զօրաւորագոյնք էին բանք՝ նոքա իշխէին 'ի ժողովս:

Պիտիսորատ ժամանակակից Ալղոնի, 528 ամօք նախ քան զթուականութիւն Փրկչին, առաջին բատ Պլուտարքեայ ճարտարախօս անուանի եկաց տու Յոյնս. որ և ճարտարախօսութեամբն զօրացեալ ըլլանակալեաց յԱթէնս:

Պերփկլէս, 450 ամօք նախ քան զթուարերութիւն Փրկչին, 'ի կատարումն էած զարուեստն յԱթէնս. որ և վասն հըզզօր ճարտարախօսութեանն կոչեցաւ Ողիմակեան, իբր որսառզ հանգոյն Արամազդաց. Զամանէ ասեն յօրինել նախ զրով զատենախօսութիւն:

Զէւտ նորա յաւուրս պեղոպանեսական ճարտին յարեան Կղոն, Ալկիփիադ, կրի-

տիսան և Յերամենէս: Ի նմին ժամանակի եկաց և Յուլիպիտէս պատմագիր:

Յէտ ժամանակացն Պերփկլեաց յարեան իմաստակը ոմանք հուետորք անուանեալը, որ աղաւաղեցին զարուեստն ճամարտակութեամբ ճառից առաջ. 'ի սոսա անուանիք էին Գորգիսս, Լեռնատինոս, Պրոտագորաս, Պրօտիկոս և Յիրասիմոս:

Սոցահակառակ եկաց Սոկրատ, և նուրբ և պարզ ճարտասանութեամբն տապալեաց և նշաւակեաց զիմաստակութիւն նոցա, և գարձոյց զարուեստն 'ի սկզբնաւիպն գեղեցկութիւն:

Զէւտ Սոկրատայ կացին Լիւսիաս, Խոսկրատ և Խոչոս: Բայց Խոչոս առաւել Գեմոսթենեաւ աշակերտաւն իւրով եղեւ անուանի:

Դեմոսթենէս, քաջն և վիհագոյն 'ի հելլեն ճարտարախօսն, եկաց 54) ամօք նախ քան զթուականութիւն Փրկչին: Ճիզն նուրա 'ի վարժս ճարտարախօսութեան, չվատել ընդ ձախոզ և ել նախընծայ ճառիցին, երկայնմտութիւն 'ի յաղթել ամենայն խավանաց՝ զորս ընտութիւնն ընդդէմ եղեալ էր նմա, սորամուտ բնակութիւննորա ընդ երկրաւ՝ առ 'ի սարապել անդրագ յուսումն արուեստին, արտասանութիւնք նուրա բարձրագոչ 'ի ծովեղերս ընդդէմ մրրկալից այեաց՝ առ 'ի սովորել ազմկի բազմամբոխ ժողովրդեան, խմճ 'ի բերանի ունել առ ուզգելց զթլուատ լեզուին թե-

րութիւն, սուսեր 'ի վերայ ուսոցն 'ի կախ ունել առ 'ի բաց բառնալց զսովարութիւն ընդուստ ընդուստ խաղաղոց թիկանցն յարտասանելն, այս ամենայն քաջալերեն ըղձամբակս հուետորականին յաջողելոց 'ի վարժու օրինակաւ այնորիկ, որ անյարմարագոյն գոլով արուեստին՝ կրթութեամբ և ջանիւ վեհագոյն 'ի ճարտարախօսս գըտաւ:

Գեմութենի ոսոխ նախանձըդդէմ եկաց Նորինէս, ճարտարախօս քաջ այլ ոչ եթէ հաւասար նմին: Յետ սոցա ոչ ոք ընդամն յիսուն անուանի եկաց մինչեւ ցիեւմետր փաղերացի, այլ և սորա ոճ պերճ և բազմազարդ թափուր էր 'ի զօրութենէ:

Խակ յետ Գեմետրի և ոչ յիշատակաց ոք արժանի եկաց, մինչեւ հումայեցոց նումենաւլ զիլլագա, ընդ գեղարուեստս ամենայն փոխեցին և ղճարտարխօսութիւն առ իւրեանս:

Խնոցանէ ճարտարախօսք երեկիք կացին կրասոս և Անտոնիոս, և զեհետ նոցակիկերոն, և նախանձորդ նորա Որտենսիոս: Բայց վեհագոյն յամենեսին 'ի նոսա էր Կիկերոն, կացեալ իբր 50 ամօք նախքան զթուտկանութիւն Փրկչին. և այնպէս զերազանցեալ յարուեստին մինչեւ 'ի զուգակչիո կալ ընդ Գեմութենեայ:

Յետ Կիկերոնի 'ի բառնալ ազատութեան բարձաւ և պերճախօսութիւն 'ի հոռմայեցոց քանզի պակասեցին պէտք ա-

տենախօսութեանց, և ոչ ևս էր յորդոր զարդարման ճարտարախօսաց: Եւ 'ի սպառ կործանեցաւ 'ի յաճախել զպրոցաց ճամարտակացն. որ զանգոյից իրաց ճառս արկեալ պաճուճաբանէին: Այս ոճ 'ի զիրս Աննեկայ սկսաւ նախ 'ի վեր երեկել, և 'ի ներքողեանն Պլինիոսի 'ի Տրայանոս. յորում հոսմէականն ճարտարխօսութիւն զօրհասականն իւր եցոյց ճիգն: Խակ 'ի տարածանել քրիստոսական կրօնից, յարեան վարդապետք եկեղեցւոյ առ լատինացին՝ Այնուտիս Փելիքս, Լակտանտիոս, սուրբ Հերոնիմոս, Տիերտուղիանոս, սուրբ Ամբրոսիոս, սուրբ Օգոստինոս, սուրբ Գրիգոր մեծն և սուրբն Լեոն: Խակ առ Յոյն՝ սուրբքն Բարսեղ, Գրիգոր նաղիանզացի կամ Աստուածաբանն, Գրիգոր նիւսացի, և վեհագոյն ամենեցուն Ասկերերան, պարծանք եկեղեցւոյ, որ սրբազան ճարտարխօսութեամբ ընդ հեթանոսականին 'ի կուիւ եկաց:

Ընդ սոսա 'ի գէտը է յիշատակել և զմերս Պրովելենիոս, դորմէ Եւնարի տոէ գտաստու ճարտառանութեան 'ի չորրորդ գարու կացեալ յԱթէնս, և վարժապետ սրբոյն Գրիգորի Աստուածաբանի. և այնպէս հոչակաւոր լեալ, մինչեւ կանզմել նմա անգրի 'ի Հռոմ, և թագաւոր ճարտարախօսաց զնաւ անուանել:

Եւ ապա ընդ գարս տասն 'ի սպառ անհետացաւ ճարտարխօսութիւն առ Յոյնս

և առ Լատինս, մինչ ՚ի Հայուսատան մերքն
յաջորդէլն զհետ աշակերտացն Սահակայ
և Մեսրոպաց Մանդակունին, Յոհան իւ
մաստանէր, Շնորհալին և Լամբրոնացի,
այլովքն հանդերձ, Որոց գրուածք ընդ
հրաշալան թարգմանութիւնս շարագրա-
ծոց սրբոց հարցն Յունաց կան մեզ առա-
ջի օրինակը նախանձելիք ՚ի նմանութիւն,
և վարժապետք վեհագոյն ճարտարիսոսու-
թեան:



ՑԱՆԿ

Աղեղսահնք	59
Այլաբանութիւն	51
Անդամք պարբերութեան	97
Անէծք	60
Անմանութիւն	21
Անուանաստեղծութիւն	52
Անցումն	84
Առաջարկութիւն	12
Աստիճաննք	90
Ատենական հանդէս	10
Աբասանութիւն	99
Աբտագին տեղիք	28
Աբտուզութիւն	85
Աելագրութիւն	40
Բաղմայեղմնակ ձև	81
Բաժանորդութիւն	82
Բաժանումն սեռի	13
Բաղգաստութիւն	23
Բաղնուհական հանդէս	10
Բացագանցութիւն	56
Բացադարձութիւն	68
Գործք և պատճառք	20
Դերանունութիւն	53

Դիմանութիւն	.	.	.	69	Մակածութիւն	.	.	.	126
Դսրովանք	:	.	.	47	Յառաջաբանութիւն	.	.	.	41
Երգիճաբանութիւն	.	.	.	49	Յարակից հանդամանք	.	.	.	26
Երգայրաբանութիւն	.	.	.	132	Յարացցց	.	.	.	129
Զանցառութիւն	.	.	.	65	Յիշողութեան կրթութիւն	.	.	.	120
Զեղումն	.	.	.	41	Յողնահոլովք	.	.	.	42
Բնդլայնումն բառիք	.	.	.	88	Յորդոր	.	.	.	28
— իմաստիք	.	.	.	90	Յուղումն կրից	.	.	.	29
Թարգմանութիւն	.	.	.	119	Նախապաշտումն	.	.	.	80
Թուռումն մասանց	.	.	.	16	Նախընթաց և հետևող	.	.	.	26
Թղթագրութիւն	.	.	.	137	Ներքին տեղիք	.	.	.	15
Լծորդք	.	.	.	48	Նկարագրութիւն	.	.	.	70
Լոռութիւն	.	.	.	64	Նմանամայնութիւն	.	.	.	42
Խելամտութիւն	.	.	.	46	Նմանութիւն	.	.	.	24
Կախումն	.	.	.	77	Շարժուածոց կանոնք	.	.	.	100
Կացրդական հանդէս	.	.	.	10	Շնորհումն	.	.	.	66
Կիրք	.	.	.	29	Շըլաբանութիւն	.	.	.	33
Հակատրութիւնն ձև	.	.	.	75	Ոչ բարեխաւն	.	.	.	109
Հակադրութեան ձև	.	.	.	63	— լակոնական	.	.	.	115
Հաղորդակցութիւն	.	.	.	130	— ուսումնական	.	.	.	112
Համաբարդութիւն	.	.	.	62	— պատմական	.	.	.	113
Հարցումն	.	.	.	122	— պարզ	.	.	.	106
Հաւաքաբանութիւն	.	.	.	47	— վեճ	.	.	.	103
Հեգնութիւն	.	.	.	124	Ոչ ընտրութիւն	.	.	.	112
Հնարք	.	.	.	40	— կրթութիւն	.	.	.	117
Զեք բառից	.	.	.	43	Ուղղութիւն	.	.	.	83
— իմաստից	.	.	.	7	Չափադանցութիւն	.	.	.	54
Ճարտասանութեան սահման	.	.	.	138	Պատճառք և գործք	.	.	.	20
— սկիզբն և զարդացումն	.	.	.	40	Պատմագրութիւն	.	.	.	136
Ճարտասանութիւն ազգի ազգի	.	.	.	56	Պատմութիւն	.	.	.	14
Մակագանութիւն	.	.	.		Պարբերութիւն	.	.	.	97

Պարզութիւն՝ ի խօսս	.	.	.	7
Սահման	.	.	.	15
— ստորագրական	.	.	.	13
Սեռ և տեսակ	.	.	.	19
Ստուգաբանութիւն	.	.	.	17
Վերջաբան	.	.	.	32
Վատահութիւն	.	.	.	67
Տարակուսութիւն	.	.	.	57
Տեղիք ատենական հանդիսին	.	.	.	37
— սեփական	.	.	.	33
— ներքինք	.	.	.	15
Տեսակ և սեռ	.	.	.	19
Տրոհումն	.	.	.	106
Յուցումն	.	.	.	15
Փակագիծ	.	.	.	86
Փաստ	.	.	.	15
Փոխաբերութիւն	.	.	.	43
Փոխանունութիւն	.	.	.	45
Փոխառութիւն	.	.	.	50
Քարոզ	.	.	.	134



ՀՀ Ազգային գրադարան



NL0695909

